



*Հերագորական խմբի ղեկավար՝*

**Հ. ԲԵՋԱՆՅԱՆ**

*ընդհանրացրության թեկնածու, սահարենյ*

*Հերագորական խմբի անդամներ՝*

**Է. ԱՂԱԲԵԿՅԱՆ**

*ընդհանրացրության թեկնածու, դոցենյ*

**Ս. ԼԵՎՈՆՅԱՆ**

*ընդհանրացրության թեկնածու, դասախոս*

**Հ. ԹԱՐՓՈՇՅԱՆ**

*ընդհանրացրության թեկնածու, դասախոս*

**Կ. ՍԱՐՈՅԱՆ**

*ընդհանրացրության թեկնածու, դասախոս*

**Կ. ԴԱՎԹՅԱՆ**

*ՀՊՏՀ սասյիրանյ*

**Ժ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

*ՀՊՏՀ սասյիրանյ*

**Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՊՏՀ սասյիրանյ*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

DOI: 10.52174/978-9939-61-285-0

**Ե Ր Ե Վ Ա Ն**

**«ՏՆՏԵՍԱԿԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2024**

ՀՏԴ 330.35:336.2  
ԳՄԴ 65.9(5Հ)-962  
S 776

Հրատարակության և երաշխավորել  
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

**Մասնագիտական խմբագիր՝**

**Ա. Խաչատրյան**

տ. գ. թ.

**Գրախոսներ՝**

**Ա. Մաթևոսյան**

տ. գ. դ., պրոֆեսոր

**Հ. Աղիլխանյան**

տ. գ. թ.

**Խմբագրական խորհուրդ՝**

**Դ. Գալոյան**

տ. գ. դ., պրոֆեսոր

**Թ. Մկրտչյան**

տ. գ. դ., պրոֆեսոր

**Դ. Հախվերդյան**

տ. գ. դ., պրոֆեսոր

**Գ. Նազարյան**

տ. գ. թ., դոցենտ

S 776 Տնտեսական աճի և պետության եկամտային քաղաքականության միջև փոխադարձ կապի գնահատումը ՀՀ-ում / Հ. Բեջանյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2024.- 140 էջ.- («Ամբերդ» մատենաշար 70):

Հետազոտության նպատակն է հանդիսացել ուսումնասիրել տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնները, բացահայտել դրանց շարքում պետության եկամտային քաղաքականության դերը, ինչպես նաև գնահատել պետական բյուջեի եկամուտների և տնտեսական աճի փոխկապակցվածությունը: Նպատակի իրագործման համար նախ ուսումնասիրել են ՀՀ տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնները և դրանց շարժընթացը, որից հետո վերլուծվել է նաև եկամտային քաղաքականության դերը տնտեսական աճի ապահովման համատեքստում: Հետազոտությունում գնահատվում է տնտեսական աճի կառուցվածքը և տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը պետական եկամուտների վրա, բացահայտվում է եկամուտների ավելացմանը միտված տնտեսական աճի կառուցվածքի և տնտեսական աճին միտված եկամտային քաղաքականության մշակման հնարավորությունները: Աշխատանքում ՀՀ համար գնահատվում է օպտիմալ հարկային բեռի մակարդակը ընդհանուր և որոշ հարկատեսակների մատով: Ներկայացվում են առաջարկություններ եկամուտների ավելացմանը միտված տնտեսական աճի ապահովման և տնտեսական աճին նպաստող եկամտային քաղաքականության մշակման ուղղությամբ:

ՀՏԴ 330.35:336.2

ԳՄԴ 65.9(5Հ)-962

ISBN 978-9939-61-285-0

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2024

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2024

**Ներածություն**..... 5

**Գլուխ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .. 11**

1.1. Տնտեսական աճի վրա ազդող գործոններն ու դրանց ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը..... 11

1.2. Եկամտային քաղաքականության դերը տնտեսական զարգացման գործընթացում: Միջազգային փորձը և առաջադեմ մոտեցումները..... 28

**Գլուխ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ .....45**

2.1. Տնտեսական աճի վրա ազդող գործոնների շարժընթացն ու հիմնական զարգացումները..... 45

2.2. Արտաքին գործոնների ազդեցությունը տնտեսական աճի վրա և տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը պետական եկամուտների վրա ..... 65

2.3. Ներքին գործոնների ազդեցությունը տնտեսական աճի և պետական եկամուտների վրա..... 79

**Գլուխ 3. ԵԿԱՄՏԱՅԻՆՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ .....89**

3.1. Օպտիմալ հարկային բեռի և հարկային եկամուտների վրա ազդող հիմնական գործոնների գնահատումը..... 89

3.2. Տնտեսական աճի վրա որոշ հարկատեսակների ազդեցության և օպտիմալ բեռի գնահատումը ..... 97

**Եզրակացություն**..... 104

**Օգտագործված գրականություն** ..... 110

**Հավելված** ..... 116

**Համառոտագրեր**..... 119



**Վ**երջին հարյուրամյակում համաշխարհային տնտեսագիտության մեջ մեզ հայտնի հետազոտությունները, մակրոտնտեսական քաղաքականության գնահատման բազմաբնույթ մոդելները, արհեստական բանականության կիրառումը և 4-րդ արդյունաբերական հեղաշրջումը, ինչպես նաև տեխնոլոգիական զարգացումները տպավորություն էին ստեղծել, որ մարդկությունն արդեն պատրաստ է դիմակայելու հաջորդ ճգնաժամերին և հնարավորինս անցնում հաղթահարելու դրանք, սակայն COVID-19 համավարակով ստեղծված ճգնաժամային իրավիճակը վկայեց, որ, անկախ տնտեսության զարգացածության մակարդակից և վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճի ցուցանիշներից, արտաքին աշխարհից եկող ցնցումները լուրջ և երբեմն խոր ազդեցություն կարող են ունենալ տնտեսության զարգացման վրա:

Արդի փուլում գլոբալացման գործընթացը յուրաքանչյուր երկրի առջև ոչ միայն նոր հնարավորություններ և հեռանկարներ է բացում, այլև կարող է նոր վտանգներ, ռիսկեր և ցնցումներ առաջացնել: Միջազգային իրադարձությունների ծավալները, հաճախ դրանց անկանխատեսելի, քառասային բնույթը և կանխատեսման ու հետագա կառավարման կառուցակարգերի անբավարարությունը հանգեցրին նրան, որ երկրների տնտեսական կայունությունը և զարգացումը մեծապես կախված են ոչ միայն ներքին գործոններից, այլև արտաքին աշխարհում տեղի ունեցող իրավիճակից և դրանից բխող շոկերից:

ՀՀ տնտեսությունը, լինելով փոքր և բաց, չափազանց զգայուն է գործընկեր երկրներում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ: Ընդ որում, այս գերզգայունությունը դրսևորվում է ինչպես աճի, այնպես էլ անկման ժամանակներում: ՀՀ տնտեսության համար բնութագրական է գլոբալ տնտեսական պարբերաշրջանի աճի փուլում համաշխարհային տնտեսության աճի տեմպերը գերազանցող աճը, իսկ անկման փուլում՝ ավելի խոր անկումը: Մա, ըստ երևույթին, զարգացող երկրներին ընդհանրապես բնորոշ առանձնահատկություն է: Դեռ 2004 թ.-ին՝ մինչև 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, Կամիսակին, Ռեյնհարթը և Վեդը Էմպիրիկ (փորձառական) ուսումնասիրությամբ ցույց տվեցին, որ զարգացող երկրներին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնք նրանց ավելի խոցելի են դարձնում տնտեսական ցնցումների նկատմամբ: Ըստ հեղինակների՝

1. Կապիտալի զուտ հոսքերը համապարբերաշրջանային են. տնտեսական աճի փուլում երկիրը ներգրավում է օտարերկրյա կապիտալ, իսկ անկման փուլում՝ արձանագրում կապիտալի արտահոսք: Հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես համապարբերաշրջանային է.

պետական բյուջեի ծախսերն աճում են ըստ տնտեսական աճի և նվազում դրա անկման փուլում:

2. Դրամավարկային քաղաքականությունը համապարբերաշրջանային է, տոկոսադրույքը նվազեցվում է աճի և բարձրացվում անկման փուլում:
3. Կապիտալի ներհոսքը համընկնում է ընդլայնվող մակրոտնտեսական քաղաքականությանը<sup>1</sup>:

Այսպիսով՝ հեղինակները պնդում են, որ զարգացող երկրների համար մի կողմից արտաքին ֆինանսական հոսքերը, մյուս կողմից՝ մակրոտնտեսական քաղաքականության ձախողումները սրում են տնտեսական տատանումները: Ակնհայտ է, որ տնտեսության խոցելիության հարցն այս պայմաններում ավելի սուր է:

Որքանով է այս թեզն արդիական ՀՀ տնտեսության համար:

ՀՀ տնտեսության համար վերջին 20 տարում բնութագրական են «երկակի պակասություններն» ըստ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և պետական բյուջեի պակասությունի: Չնայած 2000-ականների համաշխարհային ՀՆԱ աճից գրեթե 3 անգամ բարձր աճին՝ ՀՀ տնտեսությունը շարունակում է պահպանել ինչպես ընթացիկ հաշվի, այնպես էլ պետական բյուջեի պակասությունը: Դրանք պահպանվել են նաև հետճգնաժամային հատվածում՝ հանգեցնելով պետական և համախառն արտաքին պարտքի կուտակմանը: Ի թիվս վերը նշվածների, կա ևս մեկ կարևոր հանգամանք. ՀՀ պետական պարտքը շարունակաբար աճում է, և դրան զուգահեռ, մոտենում է նախկինում կուտակած պարտքի սպասարկման ժամանակը, ինչը դրդում է պետությանը մեծացնելու հարկային բեռի մակարդակը՝ հարկային եկամուտների բազայի ավելացման միջոցով:

Եկամտային քաղաքականության դերի և էության, դրա՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության, եկամտային քաղաքականության արդյունավետ կառավարման վերաբերյալ ուսումնասիրություններ բոլոր ժամանակներում էլ կատարվել են, և այժմ էլ այդ ուսումնասիրությունները նույնքան կարևոր են, քանի որ յուրաքանչյուր պետության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պետական եկամուտների ձևավորման հիմքում ճշգրիտ մշակված եկամտային քաղաքականությունն է, որի շրջանակներում շեշտադրվում են հատկապես հարկային բեռի արդյունավետ կառավարման, հարկային բեռի և տնտեսության ակտիվության միջև փոխազդեցության հիմնախնդիրները:

Հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնաքարային նշանակություն ունի յուրաքանչյուր պետության բնականոն գործունեության համար: Առանց պետական և տեղական բյուջեներ հարկերի և տուրքերի պատշաճ

<sup>1</sup> Kaminsky, G. L., Reinhart, C., & Végh, C. (2004). When it Rains, it Pours: Pro-cyclical Capital Flows and Macroeconomic Policies NBER working paper 10780. Տե՛ս <https://www.nber.org/papers/w10780>:

մուտքերի՝ անհնարին կդառնա ոչ միայն պետական կառույցների արդյունավետ գործունեությունը, այլև տնտեսության տարբեր ոլորտների բավարար ֆինանսավորումը: Միաժամանակ, պետական եկամուտների հիմնական աղբյուր հանդիսացող տնտեսության իրական հատվածը զգայուն է հարկերի կազմի, կառուցվածքի, հավաքագրման ռեժիմների, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների նկատմամբ:

Եկամտային քաղաքականության և մակրոտնտեսական իրավիճակի միջև, որպես կանոն, առկա է ամուր փոխկապվածություն: Եկամտային արդյունավետ քաղաքականությունն ապահովում է պետական բյուջեի եկամուտների անխափան ձևավորում ու ծախսում, իսկ մակրոտնտեսական իրավիճակը հետադարձ կերպով պայմանավորում է հարկային համակարգի փոփոխություններն ու շարունակական բարելավման գործընթացները: Պատահական չէ, որ հարկային համակարգի կառուցվածքի և համախառն ներքին արդյունքի փոխազդեցությունները քննարկվում, վերլուծվում և հաճախ դառնում են սուր բանավեճերի առարկա՝ տարբեր տեսանկյուններից: Իսկ այն հարցերը, թե, որպես հարկեր և տուրքեր, որքան առաջնային եկամուտ պետք է վերաբաշխվի պետբյուջեի միջոցով, և ո՞րն է այդ գործընթացի ողջամիտ սահմանը, արդիական են այնքան ժամանակ, քանի դեռ չկան քանակական-մաթեմատիկական կամ վիճակագրական հստակ գնահատականներ:

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճի վրա հարկերի բացասական ազդեցության մասին պնդումները բազմաթիվ են: Մասնավորապես՝ Էբրահիմին և Վախիանքուրթը, ուսումնասիրելով Կանադայի հարկային համակարգի հիմնական հարկատեսակների երկարաժամկետ ազդեցությունները տնտեսական աճի վրա, եկել են այն եզրահանգման, որ այս ցուցանիշների միջև առկա կապը հակադարձ է<sup>2</sup>: Տեսաբանների մեկ այլ խմբի էմպիրիկ հետազոտությունից<sup>3</sup> հետևում է, որ հարկերի մեծ մասը, կորպորատիվ եկամտահարկը, ավելացված արժեքի հարկը, շահույթի և շահաբաժինների հարկումը որոշակի սահմաններում դրական ազդեցություն են ունենում տնտեսության զարգացման վրա, մինչդեռ եկամտային հարկը բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ հարկերի մեծ մասը դրականորեն է ազդում տնտեսական աճի վրա: Մասնավորապես՝ եկամտային հարկի կրճատումները զգալիորեն խթանում են սպառումը, ներդրումները և պետական ծախսերը: Ըստ այդմ՝ եթե անձնական եկամտահարկի միջին դրույքաչափը նվազեցվի 1 տոկոսով, ապա երկրի ՀՆԱ-ն դրանից անմիջապես հետո՝ 1-ին եռամսյակի ընթացքում, կաճի 0,78 տոկոսով, իսկ անձնական եկամտահարկի նվազեցումից հետո՝ 4-րդ եռամսյակում՝ 1,5 տո-

<sup>2</sup> Pouya E. & François V., (2013), National Tax Association conference of November, Tampa. 2-14.

<sup>3</sup> Gashi B., Asllani G., BoqolliL., (2018). The Effect of Tax Structure in Economic Growth. International Journal of Economics & Business Administration, Volume VI, Issue 2, 66-67,

կոսով<sup>4</sup>:

Հնդհանուր առմամբ, ակադեմիական գրականության մեջ հարկային կառուցվածքի և տնտեսական աճի փոխհարաբերությունների վերաբերյալ մոտեցումները կարելի է առանձնացնել ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

- Հարկերի բարձրացումը էականորեն զսպում է ձեռնարկատերերի տնտեսական ակտիվությունը և հանգեցնում ինչպես խնայողությունների, այնպես էլ ներդրումային խթանների թուլացմանը:
- Եկամտահարկի ավելացմամբ, որպես կանոն, արձանագրվում է աշխատուժի առաջարկի կրճատում՝ բացասաբար անդրադառնալով մարդկային կապիտալի բնականոն վերարտադրության վրա:
- Ոչ տրամաբանական և չարդարացված հարկային դրույքաչափերը հանգեցնում են կապիտալի և աշխատուժի միջոցառումային անարդյունավետ վերաբաշխմանը, ինչպես նաև երկրից դրանց արտահոսքին:

Որոշ տեսաբաններ իրենց վերլուծություններում երկրի հարկային համակարգը գնահատում են ներառականության տեսանկյունից: Սա ենթադրում է հարկային համակարգի գնահատում այն առումով, թե որքանով է առաջադեմ դրա բաղադրիչներից մեկը, այսինքն՝ արդյոք այս կամ այն հարկատեսակի ավելացումն ուղեկցվում է տնտեսական աճի արագացմամբ: Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները նշում են<sup>5</sup>, որ այս համատեքստում հետազոտությունները հանգեցրել են նույնիսկ հարկային համակարգի տարրերի «վարկանշավորմանն» ըստ տնտեսական աճի վրա ազդեցության չափանիշի: Տեսաբանների այս խումբը համոզված է, որ հարկային բարեփոխումներ իրականացնելիս այս կամ այն հարկերի հավաքագրման ընտրության ժամանակ անհրաժեշտ է ելնել երկարաժամկետ տնտեսական աճի ներառականությունն ապահովելու անհրաժեշտությունից:

Տարբեր հեղինակների հետազոտություններից երևում է, որ եկամտային քաղաքականությունը և տնտեսական աճը մշտապես բարդ փոխազդեցության մեջ են: Մի կողմից եկամտային քաղաքականության խստացումը և հարկային բեռի բարձրացումը խոչընդոտում են տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեությունը և հանգեցնում տնտեսական ակտիվության թուլացմանը, մյուս կողմից՝ բարձր հարկային բեռը մեծացնում է պետական եկամուտները, որոնք ուղղվում են դեպի պետական ծախսեր և բազմարկյի ազդեցությամբ մեծացնում տնտեսական աճը: Այս տեսանկյունից,

<sup>4</sup> Nguyen, Anh D. M., Luisanna Onnis & Raffaele Rossi (2021). The Macroeconomic Effects of Income and Consumption Tax Changes, *American Economic Journal: Economic Policy* 13 (2). 439-466.

<sup>5</sup> Ruud de Moya, Ricardo Fenocho, Shafik Hebub, Sebastien Leduc & Carolina Osorio-Bouitron, (2020) IMF, Budgetary Issues. December 10, 2020, Special Series on COVID-19. <https://www.imf.org/en/Topics/imf-and-covid19>



ներկայում մեծապես կարևորվում է ՀՀ-ում հարկային քաղաքականության մակարդակի գնահատումը, այսինքն՝ հարկային բեռի այն մակարդակի չափումը, որն ապահովում է հարկային եկամուտների և համախառն արտադրության ծավալի այնպիսի լավագույն համադրություն, որի դեպքում հարկային բեռի մակարդակի սահմանային կամ լրացուցիչ տոկոսային աճն արդեն կհանգեցնի բացասական տնտեսական աճի: Այս ամենն անշուշտ առաջ է բերում հարկային բեռի արդյունավետ կառավարման հիմնախնդիր, որի շրջանակներում մեծ կարևորություն են ստանում ինչպես տնտեսական աճի վրա եկամտային քաղաքականության, այնպես էլ հակառակ ազդեցության հստակ և չափելի գնահատումը, որը հիմք կհանդիսանա տնտեսական աճի կառուցվածքի նպատակադրման համար, կնպաստի պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, ինչպես նաև տնտեսական աճը խթանող եկամտային քաղաքականության մշակմանը:

**Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնները, բացահայտել դրանց շարքում պետության եկամտային քաղաքականության դերը, ինչպես նաև գնահատել պետական բյուջեի եկամուտների և տնտեսական աճի փոխկապվածությունը:**

Նպատակի իրագործման համար հետազոտությունում առաջադրվում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՀՀ տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնները և դրանց շարժընթացը,
- ուսումնասիրել և բացահայտել եկամտային քաղաքականության դերը տնտեսական աճի ապահովման համատեքստում,
- գնահատել տնտեսական աճի կառուցվածքի և տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը պետական եկամուտների վրա,
- բացահայտել եկամուտների ավելացմանը միտված տնտեսական աճի կառուցվածքի և տնտեսական աճին միտված եկամտային քաղաքականության մշակման հնարավորությունները,
- ներկայացնել առաջարկություններ եկամուտների ավելացմանը միտված տնտեսական աճի ապահովման և տնտեսական աճին նպաստող եկամտային քաղաքականության մշակման ուղղությամբ:

Հետազոտությունը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում քննարկվում են տնտեսական աճի վրա ազդող հիմնական, այսպես կոչված՝ արտաքին և ներքին գործոնները, վերջիններիս ազդեցությունը տնտեսական աճի ձևավորման վրա, ինչպես նաև ուսումնասիրվում եկամտային քաղաքականության դերը տնտեսական զարգացման գործընթացում և այս ուղղությամբ առկա միջազգային փորձն ու առաջադեմ մտտեցումները:

Երկրորդ գլխում դիտարկվում են տնտեսական աճի վրա ազդող գործոնների շարժընթացը և հիմնական զարգացումները, դրանց ազդեցությունը պետական եկամուտների ձևավորման վրա, ինչպես նաև եկամտային քաղաքականության ազդեցությունը ներքին գործոնների զարգացումների վրա:

Երրորդ գլխում ներկայացվում է եկամտային քաղաքականության դերը տնտեսական աճի ապահովման գործում՝ միաժամանակ քննարկելով եկամուտների ավելացմանը միտված տնտեսական աճի կառուցվածքի և տնտեսական աճին միտված եկամտային քաղաքականության մշակման հնարավորությունները ՀՀ-ում:

## ԳԼՈՒԽ 1

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

### 1.1 Տնտեսական աճի վրա ազդող գործոններն ու դրանց ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը

Վերջին հարյուրամյակում տնտեսագիտական գրականության մեջ առավել հաճախ ուսումնասիրվող թեմաներից են տնտեսական աճի հիմնախնդիրը, դրա վրա ազդող գործոնները, դրանց շարժընթացը, ինչպես նաև տնտեսության ներառական աճին ուղղված արդյունավետ քաղաքականության մշակումը: Միաժամանակ, չնայած կատարված մի շարք ուսումնասիրություններին, հաշվի առնելով այն փաստը, որ տնտեսական աճը դինամիկ զարգացող գործընթաց է, դրա անընդհատ դիտարկումը, նոր գործիքակազմի օգտագործումը և աշխարհաքաղաքական ու տեխնոլոգիական փոփոխությունների համատեքստում մշտական հետազոտությունները չափազանց կարևոր են<sup>6</sup>:

Տնտեսական աճը, որպես տնտեսության առկա վիճակը բնութագրող բարդ և բազմակողմ ցուցանիշ, ենթակա է տարաբնույթ գործոնների ազդեցությանը, որոնց դասակարգումը գործնականում հաճախ կրում է պայմանական բնույթ: Տնտեսական աճի վրա ազդող գործոնները, ըստ դրանց աղբյուրի, կարելի է դասակարգել երկու խոշոր խմբերի՝ արտաքին և ներքին: Չնայած այս բաժանմանը, շատերի պնդմամբ, աճի վրա ազդող արտաքին և ներքին գործոնները փոխկապված են և լրացնում կամ խոչնդոտում են իրար: Մասնավորապես՝ հեղինակներից շատերը համակարծիք են, որ արտաքին գործոնները **ուղղակի** և **մեծ** ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա՝ **հիմնականում** կարճաժամկետում: Մյուս կողմից, քանակական հետազոտությունները ցույց են տալիս, որ արտաքին գործոնների ազդեցության ծավալը պայմանավորված է միայն տնտեսության ներքին բարենպաստ միջավայրով<sup>7</sup>: Այստեղից կարելի է ասել, որ ներքին գործոնները լծակի էֆեկտ ունեն արտաքին գործոնների ազդեցությունը մեծացնելու կամ փոքրացնելու համար:

**Ներքին գործոններ:** Արտաքին և ներքին գործոնների վերը նկարագրված կապը կարելի է ներկայացնել օտարերկրյա ուղղակի ներդրումների

<sup>6</sup> Parash Upreti, “Factors Affecting Economic Growth in Developing Countries,” *Major Themes in Economics* 17, no. Spring 2015 (2015): 37.

<sup>7</sup> Kui-Wai Li, “The Optimal Level and Impact of Internal Factors on Growth,” *Modern Economy* 2, no. July 2011 (2011): 189.

(ՕՈՒՆ) օրինակով, որն առավել ուսումնասիրված արտաքին գործոններից մեկն է<sup>8</sup>: Տնտեսագետների և քաղաքականություն մշակողների մեծամասնությունը կարծում է, որ ՕՈՒՆ-ը խթանում է ոլորտում ներդրումների միջոցով տեխնոլոգիաների զարգացումը, մեծացնում կապիտալի կուտակումը և ավելացնում զբաղվածության մակարդակը: Սակայն, ՕՈՒՆ-ի ազդեցության մակարդակը պայմանավորված է նրանով, թե որքանով են տնտեսությունը և տնտեսական գործակալները պատրաստ օգտագործելու այդ ներդրումներն այնպես, որ դրանք ստեղծեն երկարաժամկետ տնտեսական արդյունք<sup>9</sup>:

Գործնականում կարճաժամկետ աճին միտված քաղաքականությունը, որոշ հեղինակների պնդմամբ, հանգել է արտաքին գործոնների վրա առավել մեծ ուշադրությանը և ներքին գործոնների վրա ուշադրության պակասին<sup>10</sup>: Ներքին միջավայրի բարելավումը նախապայման է հատկապես թույլ զարգացած տնտեսություններում, քանի որ դա արտաքին հնարավորություններից օգուտներ ստանալու և ռիսկերը մեղմելու արդյունավետ ճանապարհ է<sup>11</sup>: Հետևաբար՝ զարգացած երկրների համար առաջնային է արտաքին, իսկ զարգացող երկրների համար՝ ներքին գործոնների դերը:

Այսպիսով՝ առանձնացնենք այն ներքին գործոնները, որոնք առաջային են տնտեսական աճի համար:

Քանակական առաջին հետազոտություններից մեկը կատարել է Բառն, որն ուսումնասիրել է 100 երկրի տվյալներ՝ 30 տարվա կտրվածքով՝ ուրվագծելով այն ներքին գործոնների շրջանակը, որն ազդել է տնտեսական աճի վրա: Նա պարզել է, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ իրական աճի տեմպերն ապահովող գործոններն են օրենքի գերակայության պահպանումը (Rule of law), կառավարության՝ ավելի փոքր սպառումը (smaller government consumption), կյանքի ավելի երկար տևողությունը (longer life expectancy), միջնակարգ կրթության բարձր մակարդակը (higher levels of male secondary schooling), ծնելիության ցածր մակարդակը (lower fertility rates), ներդրումների մակար-

<sup>8</sup> Mohammad Amin Almfraji and Mahmoud Khalid Almsafir, “Foreign Direct Investment and Economic Growth Literature Review from 1994 to 2012,” *Procedia - Social and Behavioral Sciences* 129 (May 2014): 206–13, <https://doi.org/10.1016/j.sbspro.2014.03.668>; Xiaoying Li and Xiaming Liu, “Foreign Direct Investment and Economic Growth: An Increasingly Endogenous Relationship,” *World Development* 33, no. 3 (March 2005): 393–407, <https://doi.org/10.1016/j.worlddev.2004.11.001>; Frances Ruane and Ali Uğur\*, “Foreign Direct Investment and Productivity Spillovers in Irish Manufacturing Industry: Evidence from Plant Level Panel Data,” *International Journal of the Economics of Business* 12, no. 1 (February 2005): 53–66, <https://doi.org/10.1080/1357151042000323139>.

<sup>9</sup> Upreti, “Factors Affecting Economic Growth in Developing Countries,” 38.

<sup>10</sup> Stanley Fischer, “Globalization and Its Challenges,” *American Economic Review* 93, no. 2 (April 1, 2003): 1–30, <https://doi.org/10.1257/000282803321946750>; Emma Aisbett, “Why Are the Critics so Convinced That Globalization Is Bad for the Poor?” (Cambridge, MA: National Bureau of Economic Research, January 2005), <https://doi.org/10.3386/w11066>; Rod Falvey and Udo Kreickemeier, “Globalisation and Factor Returns in Competitive Markets,” *Journal of International Economics* 66, no. 1 (May 2005): 233–48, <https://doi.org/10.1016/j.jinteco.2004.04.004>.

<sup>11</sup> Li, “The Optimal Level and Impact of Internal Factors on Growth,” 18.

դակի բարձրացումը, ժողովրդավարության մակարդակը (the degree of democracy), գնաճի ցածր մակարդակը (a lower inflation rate) և առևտրի համար բաց լինելը (openness to trade)<sup>12</sup>:

Գրականության մեջ տնտեսագետները պնդում են նաև տնտեսական աճի վրա ազդող մի շարք այլ ներքին գործոնների առկայության մասին, մասնավորապես՝ մարդկային կապիտալ (human capital), պետական ծախսեր (public expenditure), ներքին ներդրումների մակարդակ (domestic investment), հարկաբյուջետային և դրամավարկային խթանող քաղաքականություններ<sup>13</sup>:

Ըստ մեկ այլ՝ առավել արդի հետազոտության արդյունքների՝ տնտեսական աճի վրա ազդող կարևոր գործոններ են ներքին ներդրումները և առևտրի բացությունը<sup>14</sup>:

Նշենք նաև, որ տնտեսական աճի վրա ազդում են ինչպես տնտեսության իրական հատվածը (տնային տնտեսությունների սպառման, հիմնական կապիտալում համախառն կուտակման, արտահանման իրական ծավալների ինդեքսները (համաթվերը)), այնպես էլ ֆինանսական հատվածը (ռեզիդենտներին տրված վարկերի ծավալի, ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալի, ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալի, բյուջեի եկամուտների և ծախսերի տարբերության ծավալի աճի տեմպերը) բնութագրող գործոններ: Կոռելյացիոն վերլուծության արդյունքները վկայում են, որ ամենատեղ կախվածությունն առկա է տնտեսական աճի և կապիտալ ներդրումների իրական ծավալի ինդեքսի (գործակիցը՝ 0.85), իսկ ամենաթույլ կապը՝ ռեզիդենտներին տրամադրվող վարկերի ծավալի աճի տեմպի (գործակիցը՝ -0.30) միջև<sup>15</sup>:

Մեկ այլ՝ ավելի համապարփակ հետազոտություն կատարել են Ֆիշերը և Սահայը՝ գնահատելու համար տնտեսական զարգացումը: Նրանք դիտարկել են տարբեր գործոններ՝ անցումային տնտեսությունների ռազմավարությունները, կապիտալի հոսքերը, կառուցվածքային բարեփոխումները, գնաճը, հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը, ինչպես նաև գործազրկության մակարդակը: Նրանց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անցումային շրջանում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տնտեսական զարգացման վրա ազդել են կառուցվածքային բարեփոխում-

<sup>12</sup> Robert Barro, “Determinants of Economic Growth: A Cross-Country Empirical Study” (Cambridge, MA: National Bureau of Economic Research, August 1996), <https://doi.org/10.3386/w5698>.

<sup>13</sup> Edward Nissan, Miguel-Ángel Galindo Martín, and María-Teresa Méndez Picazo, “Relationship between Organizations, Institutions, Entrepreneurship and Economic Growth Process,” *International Entrepreneurship and Management Journal* 7, no. 3 (September 2011): 311–24, <https://doi.org/10.1007/s11365-011-0191-2>.

<sup>14</sup> Ionel Bostan et al., “Effects of Internal and External Factors on Economic Growth in Emerging Economies: Evidence from CEE Countries,” *Eastern European Economics* 61, no. 1 (January 2, 2023): 78, <https://doi.org/10.1080/00128775.2022.2109489>.

<sup>15</sup> Տիգրանյան Բ. et al., ՀՀ տնտեսական աճի վրա ազդող գործոնների վերլուծությունը, «Բանբեր ՀՊՏՀ» 2018.1 (2018): 33:

ները, կայունացման քաղաքականությունը և մասնավորեցումը: Գործոնները, ինչպիսիք են գների ազատականացումը, փոքրածավալ սեփականաշնորհումը և ինստիտուցիոնալ միջավայրի տարրերը, լայնածավալ սեփականաշնորհման հետ համեմատած ավելի մեծ դեր են խաղացել տնտեսական աճի ապահովման գործում<sup>16</sup>:

Հարկ է նշել, սակայն, որ տնտեսական աճի ուսումնասիրության հետազոտությունները, որոնք վերաբերում են միայն զարգացած երկրներին, հաճախ կիրառելի չեն զարգացող երկրներում, ինչի մասին վկայում է Արժույթի միջազգային հիմնադրամի («IMF») մշակած՝ տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ աճին ուղղված պետական քաղաքականության ուղղորդող ճանապարհային քարտեզը: Ըստ այդմ՝ կախված երկրի զարգացման մակարդակից, պետք է մշակել տարբերակված քաղաքականություն: Արժույթի միջազգային հիմնադրամը պնդում է, որ, օրինակ, գիտահետազոտական և զարգացման (R&D) ներդրումներն ավելի արդյունավետ են զարգացած երկրներում, մինչդեռ զարգացող երկրներն առավելապես պետք է կենտրոնանան ենթակառուցվածքների և առաջարկի զարգացման վրա<sup>17</sup>: Մա կարելի է բացատրել զարգացող երկրներում առկա ենթակառուցվածքների սահմանային առավել բարձր արդյունքով և գիտահետազոտական և զարգացման (R&D) աշխատանքների համար բարենպաստ միջավայրի անհրաժեշտության ու արդյունքների անորոշությամբ:

Տնտեսական գրականության մեջ ուսումնասիրված ներքին գործոնների առաջին խումբը կապվում է մարդկային կապիտալի որակը նկարագրող գործոնների հետ (մարդկային կապիտալի բարելավում, կրթություն, կյանքի տևողություն): Մարդկային կապիտալի զարգացումն ուղղակիորեն նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և տնտեսական արդյունքի հավելաճին<sup>18</sup>:

Մասնավորապես, ուսումնասիրելով տնտեսական աճի վրա ՕՈՒՆ-ի, մարդկային կապիտալի և տնտեսական բաց լինելու մակարդակի ազդեցությունը 84 տարբեր երկրներում, Լին և Լիուն ցույց են տվել, որ մարդկային կապիտալի որակը տնտեսական աճին նպաստող առավել կարևոր ներքին գործոն է, ընդ որում, այս կապն ավելի ակներև է զարգացող երկրներում<sup>19</sup>:

Մի քանի այլ հետազոտություններում զարգացող երկրների փորձն ապացուցել է, որ արտաքին գործոնների ազդեցությունն ավելի արտահայտիչ

<sup>16</sup> Stanley Fischer and Ratna Sahay, “The Transition Economies After Ten Years” (Cambridge, MA: National Bureau of Economic Research, April 2000), <https://doi.org/10.3386/w7664>.

<sup>17</sup> International Monetary Fund, “Fiscal Policy and Long-Term Growth,” *Policy Papers* 15 (April 20, 2015): 35, <https://doi.org/10.5089/9781498344654.007>.

<sup>18</sup> Ranis Gustav, “Human Development and Economic Growth,” *New Haven, CT: Economic Growth Center, Yale University*, no. May 2004 (2004): 5.

<sup>19</sup> Li and Liu, “Foreign Direct Investment and Economic Growth.”

է՝ կախված երկրում մարդկային կապիտալի մակարդակից<sup>20</sup>: Նմանատիպ արդյունքի են հանգել նաև Ա. Դարատը և Ջ. Սարկարը՝ ապացուցելով, որ մարդկային կապիտալի կուտակումը կարող է նպաստել տնտեսական երկարաժամկետ հավելաճին<sup>21</sup>:

Հայտնի է, որ մարդկային կապիտալի որակի բարելավման ուղին կրթությունն է, որն էլ հենց աշխատանքի արտադրողականության միջոցով երկարաժամկետ աճի ապահովման գրավականն է<sup>22</sup>: Վերջինիս մակարդակը հաճախ դիտարկվում է որպես մարդկային կապիտալի որակը բնութագրող ածանցյալ ցուցանիշ: Մասնավորապես՝ Բարրուն պնդում է, որ մեկ տարով ավելի դպրոցական կրթությունը նպաստում է տարեկան 0.7 տոկոս տնտեսական աճին, քանի որ լրացուցիչ մեկ տարի կրթությունն ավելացնում է աշխատուժի հմտությունները մինչև աշխատաշուկա մտնելը<sup>23</sup>: Հարկ է նշել նաև, որ որոշ հետազոտություններ հավաստում են կրթության կարևորության մասին՝ հատկապես զարգացող և ցածր եկամուտ ունեցող երկրներում<sup>24</sup>:

Բացի կրթությունից, հասարակության համար բարենպաստ կյանքի ապահովումն այն նախապայմանն է, որը թույլ է տալիս մարդկային կապիտալի միջոցով ստեղծել տնտեսական արդյունք: Հասարակության առողջությունը և կյանքի որակը խթանում են կյանքի սպասվող տևողության ավելացումը, բնակչության աճը և կենսամակարդակի բարելավումը՝ նպաստելով բարձր տնտեսական արդյունքի ապահովմանը<sup>25</sup>: Նմանատիպ մտքի են հանգել նաև Աճեմոլուն և Ջոնսոնը, որոնք պնդում են, որ առողջապահական համակարգի բարելավումը կարող է հանգեցնել տնտեսական պայմանների բարելավմանը և աճին<sup>26</sup>:

Արդեն նշվեց գիտահետազոտական և զարգացման (R&D) ուղղության զարգացման և տնտեսական աճի կապի մասին, ինչը պայմանավորված է տեխնոլոգիաների զարգացմամբ և էկոհամակարգի բարելավման արդյուն-

<sup>20</sup> Eric A. Hanushek, “Economic Growth in Developing Countries: The Role of Human Capital,” *Economics of Education Review* 37 (December 2013): 204–12, <https://doi.org/10.1016/j.econedurev.2013.04.005>; Aurora A.C. Teixeira and Anabela S.S. Queirós, “Economic Growth, Human Capital and Structural Change: A Dynamic Panel Data Analysis,” *Research Policy* 45, no. 8 (October 2016): 1636–48, <https://doi.org/10.1016/j.respol.2016.04.006>.

<sup>21</sup> ALI F. DARRAT and JAYANTA SARKAR, “GROWTH CONSEQUENCES OF FOREIGN DIRECT INVESTMENT: SOME RESULTS FOR TURKEY,” *Journal of Economic Development* 34, no. 2 (December 2009): 85–96, <https://doi.org/10.35866/CAUJED.2009.34.2.004>.

<sup>22</sup> Omar M. Al Nasser, “The Determinants of the U.S. Foreign Direct Investment: Does the Region Matter?,” *Global Economic Review* 36, no. 1 (March 2007): 37–51, <https://doi.org/10.1080/12265080701217181>; Gustav, “Human Development and Economic Growth,” 6.

<sup>23</sup> Robert Barro, “Determinants of Economic Growth: Implications of the Global Evidence for Chile,” *Cuadernos de Economía, Latin American Journal of Economics* 36, no. April 1999 (1999): 443–78.

<sup>24</sup> Bostan et al., “Effects of Internal and External Factors on Economic Growth in Emerging Economies,” 69.

<sup>25</sup> Upreti, “Factors Affecting Economic Growth in Developing Countries,” 46.

<sup>26</sup> Daron Acemoglu and Simon Johnson, “Disease and Development: The Effect of Life Expectancy on Economic Growth,” *Journal of Political Economy* 115, no. 6 (December 2007): 925–85, <https://doi.org/10.1086/529000>.

քում ավելի արգասաբեր արդյունքի ստեղծումով: Նմանատիպ եզրակացության կարելի է հանդիպել նաև հայերեն գրականության մեջ. ըստ Ա. Թավադյանի և Ա. Թևիկյանի՝ տնտեսական աճի վրա դրական ազդեցություն են թողնում այնպիսի նորարարական ազդեցատային ցուցանիշներ, ինչպիսիք են կրթության և հետազոտությունների վրա կատարվող ծախսերը և գիտության ու տեխնոլոգիաների մակարդակը<sup>27</sup>:

Տնտեսական աճի վրա ազդող հաջորդ գործոնը խնայողություններն են, որոնք էլ, իրենց հերթին, կրում են տնտեսական աճի պատասխան ազդեցությունը: Խնայողությունների մակարդակն ազդում է ներդրումների վրա, որոնք էլ, իրենց հերթին՝ տնտեսական աճի. մասնավոր խնայողությունների մակարդակն ունի ուղղակի և անուղղակի (մասնավոր ներդրումների միջոցով) ազդեցություն տնտեսական աճի վրա, ինչը պայմանավորված է իրացվելիության սահմանափակությամբ<sup>28</sup>:

Անվիճելի է, որ խնայողությունները տնտեսական աճի վրա ազդում են ներդրումների միջոցով: Գազալին բացահայտել է տնտեսական աճի և ազգային ներդրումների միջև փոխադարձ կախվածությունը, այլ կերպ ասած՝ ներդրումներն ազդում են տնտեսական աճի վրա, իսկ տնտեսության առաջընթացը նպաստում է հավելյալ ներքին ներդրումներին<sup>29</sup>: Սա բացատրվում է ազգային ներդրումների միջոցով կապիտալի կուտակման արդյունքում ակտիվների ավելացումով և աշխատանքի արտադրողականության բարձրացումով<sup>30</sup>:

Նման տեսակետ է առաջ քաշել նաև տնտեսագետների մեկ այլ խումբ՝ պնդելով, որ վերը նշված կապն առկա է՝ հավելելով, որ ազգային ներդրումները նպաստում են երկարաժամկետ զարգացմանը, օգնում ներգրավել օտարերկրյա ներդրումներ (ՕՈԻՆ), որոնք, իրենց հերթին, կարճաժամկետ աճի գրավական են<sup>31</sup>: Այստեղից կարելի է հանգել այն եզրակացության, որ ազգային ներդրումները երկարաժամկետում ուղղակի, իսկ կարճաժամկետում՝ անուղղակի կերպով տնտեսական աճի խթան են:

Մի շարք հետազոտություններ վկայում են, որ տնտեսական աճի վրա մեծ

<sup>27</sup> Թավադյան Ա., Թևիկյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության հիմնախնդիրները և դրանց ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա (Երևան: Տնտեսագետ հրատարակչություն, 2014).

<sup>28</sup> Վարդանյան Դ., Պատճառականության կապերը համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև, Բանբեր ՀՊՏՀ 2021.3 (2021): 10.

<sup>29</sup> AHMAD GHAZALI, "Analyzing the Relationship between Foreign Direct Investment Domestic Investment and Economic Growth for Pakistan," 2012, <https://doi.org/10.13140/2.1.1730.0484>.

<sup>30</sup> Bostan et al., "Effects of Internal and External Factors on Economic Growth in Emerging Economies," 78.

<sup>31</sup> Hooi Lean and Bee Wah Tan, "Linkages between Foreign Direct Investment, Domestic Investment and Economic Growth in Malaysia." *Journal of Economic Cooperation & Development* 32, no. 4 (2011): 75-96; Masoud Rashid Mohamed, Keshminder Jit Singh, and Chung-Yee Liew, "Impact of Foreign Direct Investment & Domestic Investment on Economic Growth of Malaysia," *Malaysian Journal of Economic Studies* 50 (2013): 21-35.



ազդեցություն ունեն նաև ձեռնարկատիրության մակարդակը և որակը<sup>32</sup>: Գաղտնիք չէ, որ ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության առանցքային ինստիտուցիոնալ անկյունաքարն է, որը մեծապես նպաստում է տնտեսության աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը և մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանը: Ձեռնարկատիրության և տնտեսական աճի կապի հիմքում այն փաստն է, որ շուկայական տնտեսությունում ձեռնարկատիրությունը կարևորագույն բաղադրիչներից մեկն է, քանի որ տնտեսության մեջ բարիքների ստեղծման նպատակով արտադրական ռեսուրսները համակցվում են առևտրային կազմակերպությունների միջոցով<sup>33</sup>:

Պատելային տվյալների մոդելավորման հիման վրա կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ գիտահետազոտական և զարգացման (R&D) ներդրումները դրական ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա՝ թե ուղղակի և թե անուղղակի կերպով<sup>34</sup>: Հիշենք նաև, որ, ըստ որոշ հետազոտությունների, գիտահետազոտական և զարգացման (R&D) ուղղված ներդրումներին պետք է առաջնայնություն տալ զարգացած, այլ ոչ թե զարգացող երկրներում: Սույն հետազոտության շրջանակում կարգվենք, թե արդյոք այս պնդումը ճիշտ է նաև Հայաստանի համար:

Կարևոր է նկատել նաև, որ տնտեսական աճի համատեքստում սոցիալական գործոնները նույնպես կարևորվում են: Օրինակ՝ Ռուբինը և Սեգալը պնդում են, որ ԱՄՆ-ում ճգնաժամին նախորդող կես դարում եկամուտների անհամաչափ բաշխման մակարդակն ազդել է տնտեսական աճի վրա<sup>35</sup>: Միաժամանակ, տնտեսագետների մեկ այլ խումբ բացահայտել է, որ զարգացող երկրներում որքան համաչափ են բաշխված եկամուտները, այնքան ավելի հավանական է բարձր տնտեսական աճին հասնելը<sup>36</sup>:

Տնտեսական աճի վրա ազդող կարևորագույն ներքին գործոններից են նաև ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները: Տ. Աճեմօղլուն, Ջ. Ռոբինսոնը և Ս. Ջոնսոնը մերժեցին դասական տնտեսագիտության առաջ քաշած այն վարկածը, ըստ որի՝ երկրների միջև զարգացման տարբերության պատճառը հե-

<sup>32</sup> Daniel Francois Meyer and Natanya Meyer, “The Relationship between Entrepreneurial Factors and Economic Growth and Development: The Case of Selected European Countries,” 2020, 15; Cristian G. Terza, “Total Entrepreneurial Activity and Economic Growth,” *Journal of Public Administration, Finance and Law*, no. 17 (2020): 485–90.

<sup>33</sup> Wim Naudé, “Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy,” *SSRN Electronic Journal*, 2013, 17, <https://doi.org/10.2139/ssrn.2314802>.

<sup>34</sup> Le Thanh Tung and Le Nguyen Hoang, “Impact of R&D Expenditure on Economic Growth: Evidence from Emerging Economies,” *Journal of Science and Technology Policy Management*, February 9, 2023, <https://doi.org/10.1108/JSTPM-08-2022-0129>.

<sup>35</sup> Amir Rubin and Dan Segal, “The Effects of Economic Growth on Income Inequality in the US,” *Journal of Macroeconomics* 45 (September 2015): 258–73, <https://doi.org/10.1016/j.jmacro.2015.05.007>.

<sup>36</sup> Fadi Fawaz, Masha Rahnama, and Victor J. Valcarcel, “A Refinement of the Relationship between Economic Growth and Income Inequality,” *Applied Economics* 46, no. 27 (September 22, 2014): 3351–61, <https://doi.org/10.1080/00036846.2014.929624>.

տևյալ գործոններն են՝ կապիտալի կուտակում, նորարարություն, կրթության մակարդակ և այլն: Դրա փոխարեն՝ հեղինակները ներկայացրին երեք գործոն, որ ազդում է տնտեսական զարգացման վրա՝ տնտեսական ինստիտուտներ, աշխարհագրական դիրք և մշակույթ (ոչ ֆորմալ ինստիտուտ)<sup>37</sup>: Օրինակների և քանակական վերլուծությունների միջոցով այս տնտեսագետները հանգեցին այն մտքին, որ տնտեսական աճը կարելի է բացատրել թվարկված գործոնների և երկրների մեկնարկային պայմանների միջոցով:

Ինստիտուցիոնալ համակարգի կարևորության մասին են վկայում նաև մի շարք այլ տնտեսագետներ: Վերջերս, քանակական հետազոտության մեջ օգտագործելով Համաշխարհային բանկի կողմից մշակված Պետական որակի կառավարման (WGI) վեց բաղադրիչ տարրերը, բացահայտվել է, որ ինստիտուտների և տնտեսական աճի միջև առկա է վիճակագրական հստակ կապ. 1% կառավարման ցուցանիշների բարելավումը միջինում նպաստում է 1% աճին: Ընդ որում, ինստիտուտների ազդեցությունն ունի մասշտաբային էֆեկտ՝ հարևան երկրներում ինստիտուցիոնալ համակարգի բարելավումը նույնպես դրականորեն է ազդում երկիր տնտեսական աճի վրա<sup>38</sup>:

Գաղտնիք չէ, որ կառավարությունների կողմից ինստիտուցիոնալ, ինչպես նաև մակրոտնտեսական միջավայրի վրա ազդելու նպատակով կիրառվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների գործիքակազմը այս կամ այն կերպ փոխում է շուկայական միջավայրը՝ այդպիսով նպաստելով կամ զսպելով տնտեսական աճը:

Անվիճելի է պետության դերը տնտեսական աճի ապահովման գործում, սակայն տնտեսական աճին առավել նպաստավոր պետական քաղաքականության վերաբերյալ կարծիքները վիճելի են: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Մի շարք հետազոտություններ նվիրված են պետական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների և տնտեսական աճի միջև կապի ուսումնասիրմանը: Այսպես՝ Մոնամոդիի՝ 1980-2017 թթ. տվյալների հիման վրա կատարած քանակական հետազոտությունը վկայում է, որ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները երկարաժամկետում զգալիորեն ազդում են տնտեսական աճի վրա: Կարճաժամկետում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ազդեցությունը տնտեսական աճի վրա այլևս տարանջատելի չէ: Մինչդեռ երկարաժամկետում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը նշանակալի է միայն այն դեպքում, երբ, որպես հիմնական գործիք, օգտագործվում է ոչ թե եկա-

<sup>37</sup> James A Robinson, Daron Acemoglu, and Johnson Simon, “Institutions as a Fundamental Cause of Long-Run Growth,” *Handbook of Economic Growth* Eds. P. Aghion and S. Durlauf, North-Holland, Amsterdam, 2005, 386–472.

<sup>38</sup> Hisham Abdeltawab Mahran, “The Impact of Governance on Economic Growth: Spatial Econometric Approach,” *Review of Economics and Political Science* 8, no. 1 (January 5, 2023): 49, <https://doi.org/10.1108/REPS-06-2021-0058>.

մուտների հավաքագրումը, այլ ծախսերի կատարումը<sup>39</sup>:

Տնտեսական աճի համար կենսականորեն անհրաժեշտ է իրականացնել չափավոր դրամավարկային էքսպանսիա՝ հավասարակշռված հարկաբյուջետային քաղաքականության ուղեկցությամբ<sup>40</sup>: Դրամավարկային քաղաքականության շրջանակում գնաճի թիրախավորումը և դրա պահպանումը, ըստ էության, ուղղված են տնտեսական աճի կայունացմանը, ըստ այդմ՝ նախապայման են տնտեսական կայուն աճի համար<sup>41</sup>: Միջլենկոն պնդում է, որ արդյունավետ դրամավարկային համակարգի մշակումը տնտեսական աճի խթանման հիմնական գործիքն է: Ըստ նրա՝ համակարգի հիմնական պայմաններն են մակրոտնտեսական կայունությունը, բանկային համակարգի վստահելիությունը, պետական պարտքի ցածր մակարդակը և դանդաղ ու համեմատաբար կայուն գնաճը<sup>42</sup>:

Համաձայն քանակական հետազոտությունների՝ գնաճի խիստ թիրախավորումն արագացնում է տնտեսական աճը<sup>43</sup>: 186 երկրի 18 տարվա տվյալների պանելային մոդելավորման արդյունքները վկայում են, որ մասնավոր հատվածին տրամադրվող միջոցները և արտաքին պարտքը բարելավում են ենթակառուցվածքները, ինչը համախառն ներքին արդյունքի աճի որոշիչն է: Էմպիրիկ արդյունքները հաստատում են, որ որքան մեծ է բանկերի կողմից ֆինանսավորվող ընկերությունների քանակը և որքան ծավալուն է արտաքին (օտարերկրյա) ֆինանսավորումը, այնքան ավելի մեծ է տնտեսության կողմից ֆինանսական միջոցների տնտեսական աճին ուղղված (արդյունավետ օգտագործման) հավանականությունը<sup>44</sup>:

Ընդունված է ասել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսական աճի խթանման արդյունավետ գործիք է:

Մակրոնակարգակում այն կարևոր դեր է խաղում մակրոտնտեսական կայունության ապահովման գործում, ինչը տնտեսական աճի համար նախապայման է: Միկրոնակարգակում հարկային և ծախսային հետևողական քաղաքականությունը կարող է խթանել զբաղվածության, ներդրումների և արտադրողականության աճը: Ըստ IMF-ի վերլուծության՝ դա կարող է տնտեսա-

<sup>39</sup> Nkosinathi Monamodi, “The Impact of Fiscal and Monetary Policy on Economic Growth in Southern African Custom Union (SACU) Member Economies between 1980 and 2017: A Panel ARDL Approach,” *SSRN Electronic Journal*, 2019, 20, <https://doi.org/10.2139/ssrn.3480082>.

<sup>40</sup> International Monetary Fund, “Fiscal Policy and Long-Term Growth.”

<sup>41</sup> International Monetary Fund.

<sup>42</sup> Volodymyr Mishchenko et al., “Inflation and Economic Growth: The Search for a Compromise for the Central Bank’s Monetary Policy,” *Banks and Bank Systems* 13, no. 2 (July 5, 2018): 153–63, [https://doi.org/10.21511/bbs.13\(2\).2018.13](https://doi.org/10.21511/bbs.13(2).2018.13).

<sup>43</sup> André Varella Mollick, René Cabral, and Francisco G. Carneiro, “Does Inflation Targeting Matter for Output Growth? Evidence from Industrial and Emerging Economies,” *Journal of Policy Modeling* 33, no. 4 (July 2011): 537–51, <https://doi.org/10.1016/j.jpolmod.2011.03.010>.

<sup>44</sup> Muhammad Ayub Mehar, “Role of Monetary Policy in Economic Growth and Development: From Theory to Empirical Evidence,” *Asian Journal of Economics and Banking* 7, no. 1 (March 24, 2023): 99–120, <https://doi.org/10.1108/AJEB-12-2021-0148>.

կան աճն ավելացնել կամ դանդաղեցնել մինչև երեք քառորդով<sup>45</sup>:

Տեսականորեն՝ հարկաքայուջետային բարեփոխումները կարող են աճի վրա ազդել չորս հիմնական ուղղություններով՝ աշխատուժի առաջարկի (եկամտահարկի փոփոխությունն ազդում է հասարակության՝ աշխատանքի շուկայում մասնակցելու որոշման վրա), ֆիզիկական կապիտալի (եկամուտների հավաքագրման քաղաքականությունն ազդում է մասնավոր հատվածի խնայողությունների և ներդրումների հակումի վրա), մարդկային կապիտալի (կրթական և առողջապահական հատվածում պետական ներդրումները նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը) և գործոնների արտադրողականության (գիտահետազոտական և զարգացման (R&D) հատվածում պետական ներդրումները նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը) բարելավման միջոցով<sup>46</sup>:

Չուգունովն (2018) ուսումնասիրել է հարկաքայուջետային քաղաքականության գործիքների ազդեցությունը տնտեսական աճի և սոցիալական զարգացման վրա: Պարզվել է, որ համապարփակ հարկաքայուջետային բարեփոխումները, որոնք հիմնված են պետական եկամուտների կրճատումների և ծախսերի ավելացման վրա, ավելի արդյունավետ են, քան ծախսերի կտրուկ ավելացումը<sup>47</sup>: Մյուս կողմից՝ ասիական որոշ երկրների օրինակով կատարված քանակական չափումների արդյունքում Սայմունը հանգել է այն մտքին, որ ոչ պետական ծախսերը և ոչ էլ հարկային եկամուտները էական ազդեցություն չունեն ՀՆԱ իրական աճի վրա՝ ուրվագծելով այն պնդումը, որ պետական քաղաքականության դերը ոչ թե կարճաժամկետ աճը ֆինանսավորելն է, այլ երկարաժամկետ աճի համակարգի ստեղծումը<sup>48</sup>:

Պետական ծախսային քաղաքականությունը կանխորոշում է նաև պետական պարտքի մակարդակը, ինչը ևս ազդում է տնտեսական աճի վրա: Տնտեսական աճի վրա պետական պարտքի ազդեցության բնույթը միանշանակ չէ. պետական պարտքը դրականորեն է ազդում տնտեսական աճի վրա մինչև որոշակի օպտիմալ մակարդակի հասնելը, ինչից հետո փոխում է ազդեցության բնույթը: Այդ օպտիմալ մակարդակի փնտրտուքի արդյունքում տարբեր հետազոտողներ հիմնականում հանգել են ՀՆԱ 90%-ին մոտ ցուցանիշի՝ զարգացած և, սովորաբար, ավելի ցածր ցուցանիշի (50-60%)՝ զարգացող և ցածր եկամտային երկրների դեպքում<sup>49</sup>:

<sup>45</sup> International Monetary Fund, “Fiscal Policy and Long-Term Growth.”

<sup>46</sup> International Monetary Fund.

<sup>47</sup> Igor Chugunov and Mykola Pasichnyi, “Fiscal Stimuli and Consolidation in Emerging Market Economies,” *Investment Management and Financial Innovations* 15, no. 4 (November 8, 2018): 113–22, [https://doi.org/10.21511/imfi.15\(4\).2018.09](https://doi.org/10.21511/imfi.15(4).2018.09).

<sup>48</sup> Acuña Guillermo, “Internal and External Factors Explaining Chilean Economic Activity,” *Universidad Del Desarrollo*, no. July 2017 (2017): 3.

<sup>49</sup> Վարդանյան Ք., Ավագյան Գ., Կարապետյան Ն., Պետական պարտքի կառավարման և տնտեսական աճի վրա պարտքի ազդեցության վերաբերյալ էմպիրիկ հետազոտությունների արդյունքների մեկնաբանում, «Հանրային կառավարում», 1/2021 (2021): 124:

**Արտաքին գործոններ:** Զարգացող երկրներում մակրոտնտեսական տատանումների աղբյուրների հայտնաբերմանն առնչվող գրականությունում նշվում է, որ արտաքին ցնցումները հաճախ ավելի մեծ դեր են խաղում, քան ներքինները: Վերջիններս, սովորաբար, դիտվում են որպես գլոբալ թողարկման, առևտրի պայմանների (կամ համաշխարհային ապրանքների գների) և գլոբալ տոկոսադրույքների ցնցումներ, իսկ որոշ դեպքերում՝ այլ էկզոգեն ցնցումներ, ինչպիսիք են բնական աղետները կամ ներդրողների ռիսկի սպասումների փոփոխությունները<sup>50</sup>:

Արտաքին ցնցումները հաճախ համարվում են մակրոտնտեսական անկայունության պատճառ ցածր եկամուտ ունեցող երկրներում: Կալվոն և այլք (1993 թ.) եղել են առաջին հեղինակներից, որ սկզբնավորել են այն գաղափարը, ըստ որի՝ խոշոր տնտեսություններում առաջացած ցնցումները կարևոր նշանակություն ունեն փոքր բաց տնտեսություններում բիզնես պարբերաշրջանի տատանումները որոշելու համար<sup>51</sup>:

ԱՄՀ գեկույցներում նշվում է, որ էկզոգեն ցնցումները կարող են էական բացասական ազդեցություն ունենալ զարգացող երկրների տնտեսական աճի, մակրոտնտեսական կայունության և աղքատության վրա: Ցածր եկամուտ ունեցող երկրները հատկապես խոցելի են բնական աղետների, առևտրի պայմանների և այլ անբարենպաստ ցնցումների նկատմամբ, իսկ համաշխարհային ապրանքների գների մակարդակն ու անկայունությունը կարևոր ազդեցություն են ունենում այդ երկրների տնտեսական աճի և աղքատության մակարդակի վրա<sup>52</sup>: Արտաքին ցնցումների վրա կատարված շեշտադրումը հասկանալի է՝ հաշվի առնելով ցածր եկամուտ ունեցող երկրների կառուցվածքային որոշ առանձնահատկություններ, մասնավորապես՝ վերջիններիս կախվածությունն առաջնային ապրանքների գներից և ֆինանսական օգնության հոսքերից<sup>53</sup>:

Փոքր բաց տնտեսությունների կախվածությունն արտաքին ցնցումներից կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով: Զարգացող երկրներն ունեն ավելի թույլ «հարվածի կլանիչներ», ինչը նշանակում է, որ զարգացող երկրները չունեն զարգացած ֆինանսական շուկաներ՝ բազմազանեցնելու (դիվերսիֆիկացնելու) մակրոտնտեսական ռիսկերը և մակրոտնտեսական կայունացման արդյունավետ քաղաքականությունը (դրամավարկային և հարկա-

<sup>50</sup> Barrot L., Calderón C., Servén, L. Openness, specialization, and the external vulnerability of developing countries. Journal of Development Economics W/P 7711. 2018. 34 pages.

<sup>51</sup> Calvo, G. A., Leiderman, L., & Reinhart, C. M. (1993). Capital inflows and real exchange rate appreciation in Latin America: the role of external factors. Staff Papers, 40(1), 108-151.

<sup>52</sup> IMF, 2003. Fund assistance for countries facing exogenous shocks. Policy Development and Review Department. International Monetary Fund.

<sup>53</sup> Raddatz, C. (2007). Are external shocks responsible for the instability of output in low-income countries?. Journal of Development Economics, 84(1), 155-187.

բյուջետային)՝ համախառն ցնցումներին հակազդելու համար<sup>54</sup>:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ արտաքին և ներքին գործոնների ազդեցության չափը երկրի տնտեսական աճի վրա մեծապես պայմանավորված է նաև տվյալ երկրի զարգացածության մակարդակով: Այսինքն՝ զարգացած և զարգացող երկրների աճի ներուժը նույնը չէ, և արտաքին ու ներքին տարբեր գործոններ կարող են ունենալ տարաբնույթ ազդեցություններ:

Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք նվիրված են այն գործոններին, որոնք նշանակալի դեր ունեն տնտեսական աճը ապահովելու գործում: Ռոբերտ Բարոն (1996) 1960-1990 թվականների համար ուսումնասիրել է 100 երկրից բաղկացած խումբ՝ գտնելու այն գործոնները, որոնք ազդել են երկրների տնտեսական աճի վրա:<sup>55</sup> Ըստ ստացված արդյունքների՝ տնտեսական աճի վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններ, որոնք են կառավարության սպառման փոքր ծավալները, գնաճի ավելի ցածր մակարդակը, ժողովրդագրական և սոցիալական մի շարք գործոններ, ներդրումների բարձր և առևտրի բացության մակարդակները:

Կենտրոնանալով առավելապես արտաքին գործոնների վրա՝ նշենք, որ տնտեսական հետազոտություններում լայնորեն տարածված և քննարկված գործոններից է կապիտալի ներհոսքի, մասնավորապես՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունն իրական ՀՆԱ աճի վրա: Օտարերկրյա ուղղակի ներդրումները համարվում են ամենաարդյունավետ արտաքին ռեսուրսներից մեկը, որն անմիջականորեն ազդում է տնտեսության վրա, հատկապես՝ զարգացող երկրներում: Օտարերկրյա ներդրումները ոչ միայն մեծացնում են կապիտալի ձևավորումը, այլև երկրին ապահովում են տեխնոլոգիաներով, փորձով, ենթակառուցվածքներով և այլն:

ՕՈՒՆ-ից բացի, տրանսֆերտներն այն հիմնական արտաքին ռեսուրսներն են, որոնք խթանում են տնտեսությունը: Դրանք խթանում են ստացող տնային տնտեսության գնողունակությունը և մեծացնում ներքին ներդրումները: Ներմուծումը ևս մեկ արտաքին գործոն է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգուտ է բերում տնտեսությանը: Առևտրի ազատ հոսքը մեծացնում է տնտեսական աճը, ինչպես նաև նպաստում աղքատության կրճատմանը: Հարավային Ասիայի երկրներին նվիրված հետազոտությունը, օգտագործելով 1983-2014 թվականների տվյալները, պանելային վերլուծության միջոցով գնահատել է դրամական փոխանցումների, ՕՈՒՆ-ի և ներմուծման ազդեցությունը ՀՆԱ աճի վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ տրանսֆերտները կենսական դեր են խաղում Հարավային Ասիայի ընտրված երկրների տնտեսական աճի համար, մինչդեռ ներմուծումը և օտարերկրյա

<sup>54</sup> Loayza N., et al. Macroeconomic volatility, and welfare in developing countries: An introduction. The World Bank Economic Review 21(3). 2007. pp. 343-357.

<sup>55</sup> Barro, Robert J. (1996). Determinants of Economic Growth: A Cross-Country Empirical Study. National Bureau of Economic Research, Working Paper: 5698.

նուղակի ներդրումների ազդեցություններն աննշան են: Նաև ARDL-ի միջոցով առանձին երկրների համար նույն մոդելը գնահատելիս պարզվում է, որ Պակիստանի և Շրի Լանկայի դեպքում ներմուծումը բացասաբար է կապված տնտեսական աճի հետ<sup>56</sup>:

Տեսական գրականությունը մատնանշում է, որ առևտրի բացությունը կենսական դեր է խաղում զարգացող երկրներում տնտեսական աճի գործընթացում՝ մի քանի պատճառներով: Նախ՝ առևտրի բացությունը ենթակառուցվածքների ճշգրտման ծրագրի կարևոր մասն է, որին Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը աջակցել են տարբեր զարգացող երկրներում: Երկրորդ՝ շատ էմպիրիկ վերլուծություններ ընդգծում են տնտեսական աճի վրա առևտրի բացության կարևորությունը արտահանման և ներմուծման վրա հիմնված աճի վարկածների միջոցով<sup>57</sup>: Այդ հետազոտության մեջ հեղինակները կիրառում են ավտոռեգրեսիվ բաշխված լագի մոդել (auto-regressive distributive lag model) և սահող ռեգրեսիոն մեթոդ (rolling window regression method)՝ առևտրի բացության և տնտեսական աճի միջև երկարաժամկետ և կարճաժամկետ կապը որոշելու համար: Արդյունքները ցույց են տալիս, որ մարդկային և ֆիզիկական կապիտալը երկարաժամկետ հեռանկարում դրականորեն է ազդում տնտեսական աճի վրա: Ի հակադրություն սրա, առևտրի բացության ինդեքսը երկարաժամկետում բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: Ըստ սահող ռեգրեսիոն մեթոդի արդյունքների՝ առևտրի բացության ինդեքսի ազդեցությունը տնտեսական աճի վրա ողջ ընտրանքում կայուն չէ: Կարճաժամկետում առևտրի բացության ինդեքսը դրականորեն է կապված տնտեսական աճի հետ:

Կոտ դ'Իվուարի տնտեսական աճի վրա առևտրի բացությունը վերլուծելու նպատակով հեղինակներն օգտագործել են ARDL կոինտեգրացիոն և Granger թեստերը՝ 1965-2014 թվականների տվյալների հիման վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ առևտրի բացությունը դրական ազդեցություն ունի տնտեսական աճի վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Ավելին, կա դրական և փոխարացնող փոխազդեցություն առևտրի բացության և կապիտալի ձևավորման միջև՝ տնտեսական աճի խթանման գործում<sup>58</sup>:

Այս հոդվածում հեղինակներն ուսումնասիրում են, թե արդյոք համաշխարհային տնտեսությունում, ինչպես նաև ԱՄՆ-ում առաջացած արտաքին ցնցումները կարևոր դեր են խաղացել Արևելյան Ասիայի 7 երկրի մակրոտնտեսական տատանումների վրա՝ 2001-2012 թվականներին: Յուրաքանչյուր

<sup>56</sup> Arif, I., Khan, L., & Ali Raza, S. (2018). External Resources and Economic Growth: An Empirical Analysis of South Asian Countries. *Zagreb International Review of Economics & Business*, 21(2), 1-17.

<sup>57</sup> Hye, Q. M. A., & Lau, W. Y. (2015). Trade openness and economic growth: empirical evidence from India. *Journal of Business Economics and Management*, 16(1), 188-205.

<sup>58</sup> Keho, Y. (2017). The impact of trade openness on economic growth: The case of Cote d'Ivoire. *Cogent Economics & Finance*, 5(1), 1332820.

երկրի համար արտաքին փոփոխականները ներառում են նավթի գները, ԱՄՆ իրական համախառն արտադրանքը և Դաշնային պահուստի դրույքաչափը: Ներքին փոփոխականները ներառում են անվանական փոխարժեքը, իրական համախառն արտադրանքը և գների մակարդակը:

Վարիացիայի բաշխման արդյունքները ցույց են տալիս, որ նավթի գների և ԱՄՆ-ի դրամավարկային քաղաքականության ցնցումները բացատրում են ներքին փոփոխականների վարիացիայի ավելի մեծ մասը, քան ԱՄՆ-ի համախառն արտադրանքի ցնցումները: Բացի այդ, ներքին փոփոխականների իմպուլսային արձագանքներն արտաքին ցնցումների նկատմամբ միանման են<sup>59</sup>:

Մեկ այլ վերլուծություն նվիրված է զարգացող երկրներում ՀՆԱ տատանումները մոդելավորելուն<sup>60</sup>: Չորս տասնամյակի տարեկան տվյալների հիման վրա հեղինակները կիրառել են նշանների սահմանափակումներով պանելային վեկտոր ավտոռեգրեսիվ մոդել՝ բացահայտելու չորս արտաքին կառուցվածքային ցնցումների՝ պահանջարկի, առաջարկի, դրամավարկային և հիմնական ռեսուրսային ապրանքների գների ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ կախված երկրների քաղաքականության և կառուցվածքային տարբերություններից: Պարզվել է, որ արտաքին ցնցումները կազմում են ՀՆԱ վարիացիայի փոքր մասը, հատկապես՝ կարճաժամկետում: Այնուամենայնիվ, վերջին տասնամյակների ընթացքում դրանց ազդեցությունն աճել է: Ավելին, համաշխարհային դրամավարկային ցնցումները դարձել են զարգացող երկրներում ՀՆԱ անկայունության հիմնական արտաքին աղբյուրը: Արդյունքները ցույց են տալիս, որ առևտրի բացության աճը կարող է բացատրել արտաքին ցնցումներին վերագրվող անկայունության աճի միտումը, ինչպես նաև տարբեր ցնցումների դերի փոփոխումը:

Վերլուծությունում ուսումնասիրվում է արտաքին ցնցումների և ինստիտուցիոնալ որակի ազդեցությունը Նիգերիայի մակրոտնտեսական ցուցանիշների վրա՝ օգտագործելով կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիվ (SVAR) մոդել<sup>61</sup>: Մոդելում դիտարկվել է արտաքին գործոնների (արտաքին համախառն ներքին արդյունք, արտաքին տոկոսադրույք, նավթի գին, արտաքին ֆինանսական օգնություններ, առևտրի պայմաններ) ազդեցությունը ՀՆԱ-ի և գնաճի վրա: Հաստատվում է երկրի մակրոտնտեսական ցուցանիշների վրա ինստիտուցիոնալ որակի նկատմամբ արտաքին ցնցումների ազդեցությունների հարաբերական գերակայությունը: Ուսումնասիրության եզրակացությունն է, որ ինչպես արտաքին ցնցումները, այնպես էլ ինստիտուցիո-

<sup>59</sup> Nguyen, H., Tran, G., & Le, M. (2014). The impact of external shocks on small open economies: Evidence from east asian countries. *International Journal of Economics and Finance*, 6(2), 206-217.

<sup>60</sup> Barrot, L. D., Calderón, C., & Servén, L. (2018). Openness, specialization, and the external vulnerability of developing countries. *Journal of Development Economics*, 134, 310-328.

<sup>61</sup> Abere, S. S., & Akinbobola, T. O. (2020). External shocks, institutional quality, and macroeconomic performance in Nigeria. *Sage Open*, 10(2), 2158244020919518.



նալ որակը էական դեր են խաղում:

Ըստ ստացված արդյունքների՝ նավթի գինը և արտաքին ֆինանսական օգնության ազդեցությունները գերակշռում են ՀՆԱ-ի և գնաճի մակարդակի կանխատեսվող սխալների շեղումների վարիացիայի վրա ժամանակային հորիզոնների մեծ մասում՝ պատկերելով Նիգերիայում ներմուծվող գնաճի հնարավորությունները:

ՕՈՒՆ-ը զարգացող երկրներում մշտապես եղել է արտաքին ֆինանսավորման մեծ աղբյուր, ինչպես նաև վերջինիս ազդեցության վերաբերյալ գոյություն ունի և՛ դրական, և՛ բացասական տեսակետներ: Ինչո՞վ է պայմանավորված վերջինիս նկատմամբ դրսևորվող մեծ հետաքրքրությունը: Որոշ հետազոտողների և քաղաքականություն մշակողների կարծիքով ՕՈՒՆ-ը խթանում է տնտեսության տեխնոլոգիական զարգացումը՝ առաջ մղելով դեպի առավել զարգացած տնտեսություն, որը նպաստում է ինչպես զբաղվածության, այնպես էլ կապիտալի պաշարների ավելացմանը: Այն նաև ավելացնում է հարկային մուտքերը պետական բյուջե օտարերկրյա ընկերությունների ուղղակի և անուղղակի հարկերի միջոցով: Եվ ի վերջո, ՕՈՒՆ-ն ի վիճակի է բարելավելու գիտելիքը հմտությունների փոխանցման և մասնագիտական ուսուցման միջոցով և տնտեսությունը զարգացնելու՝ ներմուծելով նոր տեխնոլոգիաներ:

Օգտագործելով պանելային տվյալներ, որոնք ներառել են շուրջ 84 երկրի վերաբերյալ տեղեկություններ, Լի և Լյուն (2005) ուսումնասիրել են ՕՈՒՆ-ի և տնտեսական աճի միջև գոյություն ունեցող կապը<sup>62</sup>: Ըստ հետազոտողների՝ միայն 1980-ականների կեսերից սկսած՝ ՕՈՒՆ-ի և տնտեսական աճի միջև դիտվում է որոշիչ և նշանակալի կապ: Դեռ ավելին, նրանք հետազոտության արդյունքում եզրակացրել են, որ ՕՈՒՆ-ը ոչ միայն ուղղակիորեն, այլև անուղղակիորեն՝ այլ գործոնների հետ փոխազդեցությամբ, նպաստում է տնտեսական աճին: Մասնավորապես՝ գոյություն ունի ընդգծված դրական կապ ՕՈՒՆ-ի և մարդկային կապիտալի և ուժեղ բացասական փոխազդեցություն՝ ՕՈՒՆ-ի և տեխնոլոգիական բացի միջև:

Բորենշտայնը և այլք (1998) ուսումնասիրել են ՕՈՒՆ-ի դերը զարգացող երկրների տնտեսական աճի գործում<sup>63</sup>: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՕՈՒՆ-ն ունի կարևոր միջանկյալ դեր տեխնոլոգիաների և տնտեսական աճի միջև: Բացի այդ, հեղինակները նշում են, որ ՕՈՒՆ-ի դերն ավելի արդյունավետ կլիներ տնտեսությունում, եթե համապատասխան երկիրն ունենար զարգացած մարդկային կապիտալ:

Հետազոտություններից մեկը նվիրված է ՕՈՒՆ-ի ազդեցության բացա-

<sup>62</sup> Li, X., & Liu, X. (2005). Foreign direct investment and economic growth: an increasingly endogenous relationship. *World development*, 33(3), 393-407.

<sup>63</sup> Bosworth, B. P., Collins, S. M., & Reinhart, C. M. (1999). Capital flows to developing economies: implications for saving and investment. *Brookings papers on economic activity*, 1999(1), 143-180.

հայտնանք Կորեայի տնտեսական աճի վրա՝ 1980-2009 թվականների ընթացքում<sup>64</sup>: Հեղինակը հայտնաբերել է ՕՈՒՆ-ի ուժեղ դրական ազդեցությունը Կորեայի տնտեսական աճի վրա, ընդ որում, մարդկային կապիտալը, արտահանումը և զբաղվածությունը նույնպես դրականորեն են ազդել աճի վրա:

Թունիսի համար ևս գնահատվել է արտաքին գործոնների և տնտեսական աճի միջև կապը երկարաժամկետ և կարճաժամկետ հեռանկարում<sup>65</sup>: Վերլուծությունն իրականացվել է՝ օգտագործելով 1976-ից մինչև 2017 թվականների ժամանակային շարքեր: Հիմնվելով ARDL կոինտեգրացիոն մեթոդի վրա՝ ուսումնասիրվել է յուրաքանչյուր գործոնի կարևորությունը տնտեսական աճը խթանելու գործում: Ըստ ստացված արդյունքների՝ և՛ երկարաժամկետում, և՛ կարճաժամկետում տնտեսական աճի և ՕՈՒՆ-ի միջև գոյություն չունի կախվածություն: Տրանսֆերտներն ու ներմուծումը բացասաբար են ազդում տնտեսական աճի վրա: Բացասական արդյունքը ցույց է տալիս այն, որ ներմուծման մեծ մասը սպառողական ապրանքներ են, և որ տրանսֆերտների մեծ մասն օգտագործվում է ոչ արտադրական նպատակներով: Արտահանումը խթանում է տնտեսական աճն այնպես, որ 1 տոկոս արտահանման աճը հանգեցնում է տնտեսական ակտիվության՝ աճի միջինում 0,702 տոկոսով:

Զարգացող, մասնավորապես՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տնտեսական աճի վրա ներքին և արտաքին գործոնների ազդեցության գնահատմանն է նվիրված Իոնել Բոստանի, Կոնստանտին Տոմայի և այլոց հետազոտական աշխատանքը<sup>66</sup>: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել այն գործոնները, որոնք ազդում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 16 երկրի տնտեսական աճի վրա՝ 1995-2019 թվականներին: Այս նպատակին հասնելու համար կիրառվել է էկոնոմետրիկայում (տնտեսաչափությունում) լայնորեն տարածված պանելային տվյալների վերլուծությունը: Ըստ ստացված արդյունքների՝ խմբի երկրների տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է նրանց ներքին կապիտալով՝ ի դեմս տեղական ներդրումների և մարդկային կապիտալի: Դեռ ավելին, ՕՈՒՆ-ը չի ազդել խմբի երկրների զարգացման վրա, մինչդեռ միջազգային առևտուրը հանդիսացել է աճի շարժիչ ուժ: Ըստ հեղինակների՝ երկրները պետք է ուղիներ գտնեն իրենց տնտեսական միջավայրն արտաքին ներդրումների համար շահավետ դարձնելու համար, մասնավորապես՝ անհրաժեշտություն կա ինչպես հարկային բարեփոխումների իրականացման, այնպես էլ առավել կայուն օրենսդրական համակարգի հիմնադրման:

<sup>64</sup> Koojaroenpravit, S. (2012). The impact of foreign direct investment on economic growth: A case study of South Korea. *International Journal of Business and Social Science*, 3(21).

<sup>65</sup> Ayouni, S. E., Farhani, R., & Hamdaoui, M. (2022). External factors and economic growth in Tunisia: ARDL approach with structural change analysis. *Arab Economic and Business Journal*, 14(2), 1-17.

<sup>66</sup> Bostan, I., Toma, C., Aevovae, G., Robu, I. B., Mardiros, D. N., & Topliceanu, S. C. (2023). Effects of Internal and External Factors on Economic Growth in Emerging Economies: Evidence from CEE Countries. *Eastern European Economics*, 61(1), 66-85.

Հարավաֆրիկյան երկրների տնտեսությունների համար արտաքին գործոններով պայմանավորված աճի վարկածը ստուգելու համար կրկին կիրառվել է ARDL էկոնոմետրիկ մեթոդը, որտեղ, որպես կախյալ փոփոխական, հանդես է եկել ՀՆԱ-ն, իսկ անկախ փոփոխականներն են առևտրի բացության աստիճանը, արտաքին պարտքը, ՕՈՒՆ-ը և փոխարժեքը<sup>67</sup>: Ըստ ստացված արդյունքների՝ բոլոր ընտրված կախյալ փոփոխականները դրական ազդեցություն են ունեցել տնտեսական աճ ապահովելու գործում: Հատկապես զգալի է եղել առևտրի բացության և փոխարժեքի ազդեցությունը տնտեսական աճի վրա, ինչը նշանակում է, որ այս գործոնների բարելավումը համաչափորեն կնպաստի տնտեսության զարգացմանն ու ընդլայնմանը: Մասնավորապես՝ առևտրի բացության և փոխարժեքի 1 տոկոս աճը երկարաժամկետ հեռանկարում կհանգեցնեն համապատասխանաբար՝ ՀՆԱ 0.30 և 0.19 տոկոս աճին:

Հետազոտություններից մեկը նվիրված է որոշ էկզոգեն որոշիչ գործոնների ազդեցության բացահայտմանը ՀՆԱ աճի վրա՝ Բրազիլիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Հարավային Աֆրիկայի և Թուրքիայի համար՝ 1970-2011 թվականների ընթացքում<sup>68</sup>: Այս համատեքստում ընթացիկ հաշիվը, արտահանումը, օտարերկրյա ուղղակի ներդրումները և էներգակիրների ներմուծումը ընտրվել են որպես ՀՆԱ աճի էկզոգեն որոշիչներ: Գնահատման սկզբում շարքերի ստացիոնարությունը ստուգելու համար Լևին-Լին-Չու (LLC)-ի և Իմ-Պեսարան-Շին (IPS) պանելային ստացիոնարության թեստերը, այնուհետև փոփոխականների միջև երկարաժամկետ կապի առկայությունը վերլուծելու համար օգտագործվել են Պեդրոնի, Կաոյի և Յանսեն Ֆիշերի պանելային կոինտեգրացիոն թեստերը: Համաձայն կատարված թեստերի արդյունքների՝ փոփոխականները կոինտեգրված են, հետևաբար՝ նրանց միջև գոյություն ունի երկարաժամկետ կապ:

<sup>67</sup> Joshua, U., Adedoyin, F. F., & Sarkodie, S. A. (2020). Examining the external-factors-led growth hypothesis for the South African economy. *Heliyon*, 6(5), e04009.

<sup>68</sup> Ali, Ş. E. N., Şentürk, M., Özkan, G., & Ducan, E. (2014). External determinants of economic growth in developing countries: panel data analysis. *Marmara Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Dergisi*, 36(1), 15-28.

1.2

**Եկամտային քաղաքականության դերը  
տնտեսական զարգացման գործընթացում:  
Միջազգային փորձը և առաջադեմ մոտեցումները**

Պետական եկամտային քաղաքականության և տնտեսական աճի փոխազդեցության մասին կան բազմաթիվ արտասահմանյան հետազոտություններ, որոնց մեջ, որպես ազդեցությունների գնահատման գործիք, հիմնականում կիրառվել է ռեգրեսիոն վերլուծությունը: Հետազոտողների հիմնական մոտեցումն է եղել առանձնացնել հիմնարար անկախ փոփոխականները, գնահատել դրանց ազդեցությունը: Եկամտային քաղաքականության դիտարկման ժամանակ հիմնականում ուսումնասիրվել է հարկային քաղաքականությունը, որի դեպքում առանձնակի ուշադրություն է դարձվել առանձին հարկատեսակների ազդեցության կառուցակարգերին և, տնտեսական աճի տեսանկյունից, դրանք խթանող կամ սահմանափակող առանձնահատկություններին: Բացի այդ, հետազոտությունների որոշ մասը կատարվել է առանձին երկրների փորձի ուսումնասիրման արդյունքում:

Ֆիտիի և մյուսների 2017 թվականին Մակեդոնիայում հրապարակած աշխատությունում, որը նվիրված է ֆիսկալ քաղաքականության մակրոտնտեսական էֆեկտներին,<sup>69</sup> վերլուծվում է Մակեդոնիայի Հանրապետության հարկաբյուջետային քաղաքականությունը 2002-2014 թվականներին: Դիտարկվում են հիմնական ֆիսկալ բազմարկիչները, ֆիսկալ քաղաքականության առանձնահատկությունները համաշխարհային ճգնաժամի պայմաններում, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը, տնտեսության վրա ֆիսկալ բազմարկիչների ազդեցությունը: Գնահատման շրջանակներում, որպես հիմնական գործոններ, դիտարկվում են պետական ծախսերը, պետական եկամուտները, կապիտալ ծախսերը, մասնավոր սպառումը: Հետազոտությունն իրականացվել է վեկտորիալ ավտոռեգրեսիոն մեթոդով: Արդյունքում տրվում են գնահատականներ ֆիսկալ քաղաքականության, պետական ծախսերի, պետական պարտքի կրճատման և այլ առումներով:

Գորան Պետրովսկու, Բորսե Տրենովսկու և Բիլիանա Տաշենսկայայի «Ֆիսկալ և մոնետար քաղաքականությունների արդյունավետությունը փոքր բաց տնտեսությունում» հոդվածում որպես հետազոտական մեթոդ օգտագործվել է ռեկուրսիվ VAR մոդելը՝ ուսումնասիրելու համար Մակեդոնիայի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների մակրոտնտեսական ազդեցությունները, ինչպես նաև դրանց փոխազդեցությունները 2000-2014 թվականներին: Էմպիրիկ հետազոտության հիմնական արդյունք-

<sup>69</sup> Fiti, Taki & Petrevski, Goran & Trenovski, Borce & Tashevska, Biljana & Filipovski, Vladimir & Trpeski, Predrag & Cvetkoska, Violeta & Antovska, Marica. (2017). Macroeconomic Effects of Fiscal policy in Macedonia.

ները հետևյալն են. նախ՝ պետական ծախսերի աճը հանգեցնում է տնտեսական ակտիվության նվազմանը, պետական պարտքի բարձրացմանը և արտարժույթային պահուստների կորստին: Երկրորդ՝ պետական եկամուտների աճը դրական արդյունք է տալիս, որն ուղեկցվում է գների աճով, արտարժույթային պահուստների բարձրացմամբ և պետական պարտքի համեատ կրճատմամբ: Երրորդ՝ կենտրոնական բանկի տոկոսադրույքի բարձրացումը բացասական ազդեցություն է թողնում տնտեսական գործունեության վրա, որին հաջորդում է գների մակարդակի անկումը: Չորրորդ՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները գործում են որպես ռազմավարական փոխարինողներ, և հինգերորդ՝ հարկաբյուջետային բազմարկիչների գնահատականները ենթադրում են, որ հարկաբյուջետային քաղաքականության արդյունքները հակասում են քեյնսյան տեսությամբ ենթադրվող ազդեցություններին: Որպես գործոններ՝ դիտարկվել են պետական ծախսերի և պետական եկամուտների բազմապատկիչները: Ֆիսկալ բազմարկիչները գնահատվել են՝ ելնելով կուտակային ինպուլս-արձագանքման գործառույթներից: Որպես անկախ փոփոխականներ՝ դիտարկվել են պետական եկամուտները, պետական ծախսերը, պետական պարտքը, վերաֆինանսավորման տոկոսադրույքը<sup>70</sup>:

Օմատոյոյի, Ալանի Էֆունտադեի և մյուսների<sup>71</sup> հարկային եկամուտներին և տնտեսական զարգացմանը վերաբերող հետազոտությունում համակարգված մոտեցում է ցուցաբերվում հարկային եկամուտների և տնտեսական զարգացման տարբեր էմպիրիկ ուսումնասիրությունների նկատմամբ: Գնահատվում է Նիգերիայում հարկային եկամուտների և տնտեսական աճի կապը: Տնտեսական զարգացումը և չորս այլ փոփոխականներ, որոնք ներկայացնում են նավթի շահութահարկը, ընկերությունների շահութահարկը, անձնական եկամտահարկը, մաքսային ու ավելացված արժեքի հարկը, ուսումնասիրվել են՝ տեսնելու, թե որ գործոններն են լավագույնս բնութագրում Նիգերիայի տնտեսական զարգացումը: Արդյունքները ցույց են տալիս, որ նավթի շահութահարկը, ընկերության եկամտահարկը, մաքսային և ավելացված արժեքի հարկերը նշանակալի փոփոխականներ են, որոնք բացատրում են Նիգերիայի տնտեսական զարգացումը: Բոլոր չորս անկախ փոփոխականներից միայն անձնական եկամտահարկն է, որ ցույց է տալիս զգալի բացասական աննշան կապ տնտեսական զարգացման հետ, ինչը ենթադրում է, որ երկուսն էլ շարժվում են հակառակ ուղղությամբ:

<sup>70</sup> Goran Petrevski, Borce Trenovski & Biljana Tashevska. The effectiveness of fiscal and monetary policies in a small open economy – the case of Macedonia Pages 805-821 | Received 02 Nov 2018, Accepted 10 Apr 2019, Published online: 07 May 2019

<sup>71</sup> Omotayo, & Efuntade, Alani & Olusegun, Aca & Efuntade, Alani & Omotayo, Efuntade & Efuntade, Omotayo. (2023). Tax Income and Economic Development: The Resource Dependency Theory (RDT). 9. 29-44. 10.56201/jafm.v9.no1.2023. pg 29.44.

Պակիստանի օրինակով կատարված հետազոտությունը<sup>72</sup>, որը հեղինակել են Մ. Շաֆիքը, Մ. Փատին և Մ. Նավազը, ցույց է տվել, որ բարձր հարկային դրույքաչափը կարող է դանդաղեցնել տնտեսական աճը: Հարկաբյուջետային քաղաքականության նպատակներին ամենաարդյունավետ կերպով կարելի է հասնել՝ նվազեցնելով հարկերի հավաքագրման ծախսերը և խթանելով տնտեսական աճն արդյունավետ հարկման միջոցով: Այս ուսումնասիրությունը նպատակ է ունեցել գտնելու հարկային եկամուտների ազդեցությունը Պակիստանի տնտեսական աճի վրա: Ընթացիկ վերլուծության համար օգտագործվել է 1985-2021 թթ. ՀՆԱ-ն՝ որպես կախյալ փոփոխական, մինչդեռ հարկային եկամուտները և հարկաբյուջետային քաղաքականության այլ փոփոխականներ, ինչպիսիք են պետական ծախսերը, գնաճը, համախառն հիմնական կապիտալի ձևավորումը և ընթացիկ հաշվի մնացորդը, օգտագործվել են որպես բացատրող փոփոխականներ: ARDL bound թեստն օգտագործվում է փոփոխականների և կարճաժամկետ հարաբերությունների միջև երկարաժամկետ կապը որոշելու համար: Ընթացիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկային եկամուտները և գնաճը բացասական ու էական, մինչդեռ պետական ծախսերը և համախառն հիմնական կապիտալի ձևավորումը՝ դրական և նշանակալի ազդեցություն ունեն: Ըստ հեղինակների եզրակացության՝ Պակիստանի կառավարությունը պետք է ապահովի հարկերի դրույքաչափերն օպտիմալ մակարդակի սահմանում, ինչը դրականորեն կազդի ինչպես եկամուտների հավաքագրման, այնպես էլ տնտեսության աճի վրա:

Զարգացող տնտեսությունների առումով, կատարված հետազոտություններից կարելի է առանձնացնել BRIC և CIVETS երկրներին նվիրվածը, որը հեղինակել են Ա. Հալիմը և Մ. Ռահմանը<sup>73</sup>: Հետազոտությունը վերաբերում է կայուն տնտեսական զարգացման նպատակների վրա հարկերի ազդեցությանը: Դրանում օգտագործվել են 2000-2021 թվականների պանելային տվյալների բազան և պանելային տվյալների ռեգրեսիոն մոդել՝ վերլուծության համար: Պարզվել է, որ կորպորատիվ հարկի դրույքաչափը դրական և էական կերպով կապված է կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) հետ: Արդյունքը ենթադրում է, որ կորպորատիվ հարկի ավելի բարձր դրույքաչափը կենսական դեր է խաղում զարգացող տնտեսություններում կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Ներառելով անձնական եկամտահարկը, վաճառքի հարկը և տեսական փաստարկները՝ ուսումնասիրությունը նպաստում է զարգացող երկրներում կորպորատիվ հարկի դրույքաչափի և ԿԶՆ

<sup>72</sup> Shafiq, M. N., Bhatti, M. A., Bashir, F., & Nawaz, M. A. (2022). Impact of Taxation on Economic Growth: Empirical Evidence from Pakistan. *Journal of Business and Social Review in Emerging Economies*, 8(2), 381-392. <https://doi.org/10.26710/jbsee.v8i2.2309>

<sup>73</sup> d. Abdul Halim, Md. Mominur Rahman, The effect of taxation on sustainable development goals: evidence from emerging countries, *Heliyon*, Volume 8, Issue 9, 2022, e10512, ISSN 2405-8440, <https://doi.org/10.1016/j.heliyon.2022.e10512>, <https://www.sciencedirect.com/science/article/pii/S240584402201800X>

ձեռքբերումների վերաբերյալ բանավեճին: Դրանում կիրառվում են ինչպես անհատական, այնպես էլ կորպորատիվ հարկի դրույքաչափի, անձնական եկամտահարկի, վաճառքի հարկի և արդյունավետ հարկի դրույքաչափի համակցված ազդեցությունները ԿԶՆ-ի հետ: Երկու դեպքում էլ հետազոտությունը պարզում է հարկման զգալի և դրական կապը ԿԶՆ-ի հետ: Այսպիսով՝ հեղինակները պնդում են, որ զարգացող տնտեսությունների ԿԶՆ-ին հասնելը կախված է երկրների հարկման դրույքաչափից և քաղաքականությունից: Ռեգրեսիոն վերլուծության համար կիրառվող գործոններն են. որպես կախյալ փոփոխական՝ կայուն զարգացման նպատակները, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ կարպորատիվ հարկի դրույքը, մասնավոր եկամտային հարկի դրույքը, վաճառքի հարկի դրույքը, արդյունավետ հարկման դրույքը, մակրոտնտեսական գործոններ, որոնցից են ՀՆԱ աճը, գնաճը, ինչպես նաև լոկալ մակարդակի այնպիսի գործոններ, ինչպիսիք են ֆինանսական զարգացածությունը, ֆինանսական բացությունը, քաղաքական կայունությունը:

Արժույթի միջազգային հիմնադրամի կատարած մեկ այլ հետազոտություն<sup>74</sup>, որը հեղինակել են Կ. Արդել Կադելը և Ռ. Մոջին, անդրադառնում է հարկերի ազդեցությանը՝ ներառական աճի հասնելու տեսանկյունից: Այն սկսվում է հարկային տեսության հիմնական սկզբունքների քննարկմամբ՝ գործնական հարկային քաղաքականության մշակման տեսանկյունից: Այնուհետև մշակվում է ավելի հստակ հարկային քաղաքականություն՝ քննարկելով հարկման բեռի կառուցվածքում աշխատանքի և կապիտալի եկամտի, անձնական եկամտահարկի, հարստության հարկերի, կորպորատիվ եկամտահարկի և սպառման հարկերի համամասնությունները: Փաստաթուղթն ամփոփվում է հարկային բարեփոխումներին միտված որոշակի առաջարկություններով:

Չինաստանի փորձն ուսումնասիրող մեկ այլ հետազոտությունում<sup>75</sup> հեղինակները հարկերի և տնտեսական զարգացման կապը դիտարկվել են մաշվածության քաղաքականության սահմանման տեսանկյունից: Ուսումնասիրվել է արագացված մաշվածության հարկային քաղաքականության (ADP) ազդեցությունը զբաղվածության վրա: Որպես հարկային խթանման քաղաքականություն՝ ակնկալվում է, որ ADP-ն էականորեն կազդի ընկերությունների վարքագծի վրա, սակայն դրա ազդեցությունը զբաղվածության վրա մնում է չուսումնասիրված: Հեղինակները նախապես ենթադրում են, որ ADP-ն զգալիորեն մեծացնում է զբաղվածությունը և ընկերությունների աշխատուժի պա-

<sup>74</sup> IMF Working Paper Institute for Capacity Development and Fiscal Affairs Department: Tax Policy and Inclusive Growth Prepared by Khaled Abdel-Kader and Ruud de Mooij Authorized for distribution by Vitor Gaspar and Valerie Cerra December 2020

<sup>75</sup> Jing Zeng, Fangjie Dai, Kam C. Chan, The impact of an accelerated depreciation tax policy on employment: Evidence from China, Journal of Asian Economics, Volume 86, 2023, 101607, ISSN 1049-0078, <https://doi.org/10.1016/j.asieco.2023.101607>, <https://www.sciencedirect.com/science/article/pii/S1049007823000271>

հանջարկը՝ խթանելով ներդրումները հիմնական միջոցներում և թեթևացնելով դրանց ֆինանսական սահմանափակումները: Լրացուցիչ վերլուծությունը ցույց է տալիս, որ ADP ազդեցությունը զբաղվածության վրա ավելի ակնառու է փոքր, ոչ պետական ձեռնարկություններում և բարձր աճ ունեցող ընկերություններում, հմուտ աշխատուժի զբաղվածության մեջ, ինչն էլ, իր հերթին, վկայում է, որ ADP-ն ավելի արդյունավետ է ֆինանսական մեծ սահմանափակումներ ունեցող և հմուտ աշխատուժի վարձման հնարավորությամբ ընկերությունների համար, որոնք ապահովում են կապիտալ ներդրումների ավելացում:

ՏՀԶԿ շրջանակներում կատարված մեկ այլ հետազոտությունում<sup>76</sup>, որը վերաբերում է հարկերին և տնտեսական աճին, դիտարկվում է տնտեսական աճին նպաստող հարկային կառուցվածքի մշակման հիմնախնդիրը: Հողվածում հարկերը դասակարգվում են՝ կախված տնտեսական աճին նպաստելու աստիճանից, հիմնվելով տնտեսական գրականության վրա, ինչը թույլ է տալիս ավելի մանրամասնորեն դասակարգել հարկերը: Աճի համար առավել վնասակար են համարվում կորպորատիվ հարկերը, որոնց հաջորդում են եկամտահարկը, ապա սպառողական հարկը: Անշարժ գույքի հարկերն ամենափոքր ազդեցությունն ունեն: Եկամուտների աճին ուղղված հարկային բարեփոխումը, հետևաբար, պետք է միտված լինի հարկման բազայի մի մասը եկամտահարկից դեպի տնտեսական աճն ավելի քիչ դանդաղեցնող հարկերի (օրինակ՝ անշարժ գույքի կամ սպառման) տիրույթ տեղափոխելը: Հետազոտությունը, օգտագործելով արդյունաբերական ոլորտների և առանձին ընկերությունների տվյալներ, նոր հիմք է տալիս ենթադրելու, որ հարկերի վերանախագծումը յուրաքանչյուր հարկային կատեգորիայի շրջանակում որոշ դեպքերում կարող է ապահովել զգալի ձեռքբերումներ: Օրինակ՝ փոքր ընկերությունների համար կորպորատիվ հարկի իջեցված դրույքաչափերը, կարծես թե, չեն խթանում աճը, իսկ անձնական եկամտահարկի բարձր սահմանային դրույքաչափերը կարող են նվազեցնել արտադրողականության աճը՝ նվազեցնելով ձեռնարկատիրական գործունեությունը: Թեև փաստաթուղթը կենտրոնանում է հարկերի ազդեցության վրա՝ տնտեսական աճի առումով, այդուհանդերձ, նշվում է, որ գործնական հարկային բարեփոխումները պահանջում են հավասարակշռության ապահովում արդյունավետության, արդարության, պարզության և եկամուտների ավելացման նպատակների միջև: Հետազոտությունը կարևոր է առանձնացված գործոնների լայն շրջանակի ուսումնասիրման տեսանկյունից: Դրա ընթացքում կատարվել են մի շարք գնահատումներ՝ կապված աշխատուժի արտադրողականության և ներդրումների հետ ինչպես արդյունաբերության ոլորտում, այնպես էլ կազմակերպության մակարդակում:

<sup>76</sup> TAX AND ECONOMIC GROWTH ECONOMICS DEPARTMENT WORKING PAPER NO.620- By Åsa Johansson, Christopher Heady, Jens Arnold, Bert Brys and Laura Vartia - Organisation de Coopération et de Développement Économiques Organisation for Economic Co-operation and Development 11-Jul-2008



Ջ. Արնոլդը և մյուսներն իրենց հետազոտությունում<sup>77</sup>, որը վերաբերում է հարկային քաղաքականության և տնտեսական վերականգնման ու աճի կապերին, ներկայացրել են էմպիրիկ արդյունքներ, որոնք հաստատում են այն տեսական համոզմունքը, որ տնտեսական աճը կարող է ավելանալ՝ հարկային բազան աստիճանաբար դեպի սպառումը և անշարժ գույքը (հատկապես՝ բնակելի գույքը) տեղափոխման միջոցով: Հեղինակները պնդում են նաև, որ աճը կարող է ընդլայնվել անհատական հարկերի միջոցով: Որոշ հարկերի պարագայում կատարվող փոփոխությունները, ինչպիսիք են կորպորատիվ հարկերի նվազեցումը և անձնական եկամտահարկի առավելագույն դրույքաչափի սահմանումը, քիչ հավանական է, որ աճը խթանող ազդեցություն ունենան ու նպաստեն ճգնաժամից հետո վերականգնվելուն: Միաժամանակ, կան հարկային փոփոխություններ, որոնք, ըստ երևույթին, բացասական ազդեցություն կունենան տնտեսական աճի վրա: Օրինակ՝ վաճառքի հարկերի կրճատումը (հատկապես, եթե դրանք ունեն բացառությունների և նվազեցումների ձև) և գույքահարկերը քիչ ազդեցություն կունենան վերականգնման արագության վրա: Ինչպես տնտեսական աճի, այնպես էլ տնտեսության վերականգնման առումով, ամենաազդեցիկ հարկային փոփոխությունը ցածր եկամուտ ունեցողների եկամտահարկի (ներառյալ սոցիալական ապահովության վճարները) նվազեցումն է: Ըստ հետազոտողների՝ դա կխթանի պահանջարկը, աշխատանքը և կնվազեցնի եկամուտների անհավասարությունը: Հեղինակները պնդում են, որ վերականգնումից հետո պետական եկամուտների աճին ուղղված յուրաքանչյուր քայլ (հատկապես, եթե դա հարկային արտոնությունների վերացման և դրույքաչափերի նվազեցման ձևով է) կարող է բացասաբար չազդել տնտեսական աճի վրա, եթե հիմնված լինի անշարժ գույքի և սպառման պարբերական հարկերի ավելացման վրա: Այս համատեքստում հողվածում երկու կարևոր եզրակացություններ են կատարվում՝ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում աճի վրա հարկերի ազդեցության ըմբռնման տեսանկյունից: Օգտագործելով ՏՀԶԿ 21 երկրի 34 տարվա պանելային տվյալները (ինչպես արդյունաբերության ոլորտի, այնպես էլ առանձին ընկերությունների համար)՝ լրացվում են մակրոտնտեսական մոտեցումները՝ հիմքում ընկած միկրոկառուցակարգերի ավելի մանրամասն դիտարկմամբ: Այս մակարդակներում արդեն հետազոտությունը գնահատում է հարկային կառուցվածքի ազդեցությունը ներդրումների և արտադրողականության աճի վրա, որոնք տնտեսական աճի երկու հիմնական շարժիչ ուժերն են: Մակրոմակարդակում առաջին հետազոտության համար, որպես կախյալ փոփոխական, ընտրվել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ ֆիզիկական կապիտալը, մարդկային կապիտալը, բնակչության աճը,

<sup>77</sup> Tax Policy for Economic Recovery and Growth: Arnold, J. M., Brys, B., Heady, C., Johansson, Å., Schwellnus, C., & Vartia, L. (2011). The Economic Journal, 121(550), F59–F80. doi:10.1111/j.1468-0297.2010.02415.x

որպես կարգավորող փոփոխական՝ հարկային բեռը, որպես հարկերի կառուցվածքը ներկայացնող փոփոխականներ՝ եկամտային հարկերը՝ անձնական և կորպորատիվ եկամտային հարկերը, սպառողական և սեփականության հարկերը, գույքահարկը: Արտադրողականության վրա ազդեցության գնահատման համար, որպես կախյալ փոփոխական, դիտարկվել է ընդհանուր արտադրողականության աճը, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ մարդկային կապիտալը, հակամրցակցային կարգավորման ազդեցությունը, արտադրողականությունը, հարկերի ցուցանիշներն ըստ տարիքային խմբերի, անձնական եկամտային հարկի դրույքը: Կորպորատիվ հարկերի ազդեցությունը ներդրումների վրա դիտարկվել է ըստ հետևյալ գործոնների. որպես կախյալ փոփոխական՝ ներդրումներ/կապիտալ գործակիցը, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ հենց նույն գործակիցը՝ -1 լագով, արդյունքներ/կապիտալ գործակիցը՝ -1 լագով, դրամական հոսքեր/կապիտալ գործակիցը՝ -1 լագով, հարկով ճշգրտված սպառողական ծախսերի մակարդակն ըստ տարիքային առանձին խմբերի:

Այս հետազոտությունում առաջ քաշված տեսակետներին հակադարձում են մեկ այլ հետազոտությունում, որի հեղինակներն են Դ. Բայարդին, Պ. Պրոֆետան, Ռ. Պուզլիսին, Ս. Սկաբրոսետին: Նրանք փորձում են հերքել այն տեսակետը, ըստ որի՝ երկարաժամկետ հեռանկարում հարկային բեռը բացասաբար է կապված տնտեսական աճի հետ, մինչդեռ ուղղակի հարկերից անուղղակի հարկերին անցումը կապված է ավելի բարձր տնտեսական աճի հնարավորության հետ: Հեղինակները ցույց են տալիս, որ այս հարաբերությունները ճշմարիտ են միայն երկարաժամկետ հեռանկարում՝ նախորդ հետազոտողների կողմից դիտարկվող երկրների նույն ընտրանքում և նույն ժամանակահատվածում: Այս դեպքում միակ արդյունքը, որը հաստատվում է, հարկային եկամտատների աճի և տնտեսական աճի միջև հակադարձ կապն է, իսկ հարկային բեռի փոփոխությունը կապված չէ տնտեսական աճի հետ: Ավելին, ըստ հեղինակների, նախորդ հետազոտության արդյունքները, ընդհանուր առմամբ, չեն հաստատվում դիտարկվող ժամանակաշրջանը երկարացնելու, ՏՀԶԿ երկրների շարքն ընդլայնելու պարագայում: Նրանք կատարում են որոշ նոր բացահայտումներ հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև երկարաժամկետ ու կարճաժամկետ հարաբերակցության տարբերությունների վերաբերյալ: Ըստ դրանց՝ անցումն ուղղակի հարկերից անուղղակիին ոչ մի կապ չունի կարճաժամկետ հեռանկարում տնտեսական աճի հետ: Ըստ նրանց՝ թեև նախորդ հետազոտողներն անտեսել են կարճաժամկետ հարաբերակցությունները, սակայն նրանց արդյունքները կարող են շատ կարևոր լինել տնտեսական բարեփոխումների քաղաքական իրազորեցությունը գնահատելիս, քանի որ ընտրողներն ավելի հավանական է, որ մտածում են կարճաժամկետ, այլ ոչ թե երկարաժամկետ ազդեցությունների մասին: Հեղինակները կարճաժամկետ կտրվածքով բացասական և էական

հարաբերակցություն են գտնում եկամտահարկից դեպի անշարժ գույքի պարբերական հարկերի անցման և տնտեսական աճի միջև, ինչը հակասում է ՏՀԶԿ տեսակետին և Եվրոպական հանձնաժողովի առաջարկություններին: Հետազոտությունում դիտարկված գործոնները ներկայացված են աղյուսակ 1.2.1-ում:

**Աղյուսակ 1.2.1**

**Երկարաժամկետ և կարճաժամկետ պարամետրերի գնահատման հիմնական գործոնները**

<i>Երկարաժամկետ պարամետրեր</i>	<i>Կարճաժամկետ պարամետրեր</i>
Ֆիզիկական կապիտալ	Ընդհանուր հարկային բեռ
Մարդկային կապիտալ	Եկամտային հարկեր
Բնակչության աճ	Անձնական եկամտահարկեր
Ընդհանուր հարկային բեռ	Կորպորատիվ եկամտահարկեր
Եկամտային հարկեր	Սպառման հարկեր և գույքահարկ
Անձնական եկամտահարկեր	Սպառման հարկեր
Կորպորատիվ եկամտահարկեր	Գույքի հարկեր
Սպառման հարկեր և գույքահարկ	Գույքահարկ՝ անշարժ գույքի
Սպառման հարկեր	Գույքի հարկեր
Գույքի հարկեր	
Գույքահարկ՝ անշարժ գույքի	
Գույքի հարկեր	

Արժույթի միջազգային հիմնադրամի հետազոտողների մեկ այլ խումբ<sup>78</sup> ՏՀԶԿ 30 երկրի համար 1970–2016 թվականների տվյալների հիման վրա ուսումնասիրել է, թե արդյոք ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) կարող է ազդեցություն ունենալ երկարաժամկետ աճի վրա՝ կախված այն բանից, թե այն կրարձրացվի ստանդարտ դրույքաչափով, թե C-արդյունավետության միջոցով (ամբողջ սպառման համար մեկ դրույքաչափով գանձվող կատարյալ հարկերից ԱԱՀ շեղման գնահատական): Հետազոտողները կատարել են հետևյալ բացահայտումները՝ տվյալ ընդհանուր հարկային եկամտատների համար ԱԱՀ աճը, որը ֆինանսավորվում է եկամտահարկի նվազմամբ, խթանում է աճը միայն այն դեպքում, երբ ԱԱՀ-ն ավելանում է C-արդյունավետությամբ: Ու բացի այդ, ԱԱՀ-ի համար արդյունավետության բարձրացումը, որը փոխհատուցվում է ստանդարտ դրույքաչափի անկմամբ, նույնպես նպաստում է աճին: Ընդհանուր եզրահանգումն այն է, որ ՏՀԶԿ երկրներում ԱԱՀ բազայի ընդլայնումն ավելի քիչ նվազեցված դրույքաչափերի և մեծ քանակի բացառությունների կիրառման միջոցով ավելի նպաստավոր է երկարաժամկետ աճի համար, քան ստանդարտ դրույքաչափի ուղղակի աճը:

<sup>78</sup> The Value Added Tax and Growth: Design Matters. IMF Working Paper Institute for Capacity Development; Prepared by Santiago Acosta-Ormaechea and Atsuyoshi Morozumi. Authorized for distribution by Charles Kramer May 2019 <https://www.imf.org/-/media/Files/Publications/WP/2019/WPIEA2019096.ashx>

Պալերմոյի համալսարանի կողմից իրականացված մեկ այլ հետազոտությունում<sup>79</sup> ուսումնասիրվում է հարկային փոփոխությունների ազդեցությունը տնտեսական աճի վրա: Օգտագործվում են 1965-ից մինչև 2007 թվականների տարեկան տվյալները ՏՀԶԿ քսանվեց տնտեսություններից բաղկացած խմբի համար: Արդյունքները ցույց են տալիս, որ մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ-ի վրա հարկերի աճի ազդեցությունը բացասական է և կայուն: Արդյունքներից բխում է, որ սոցիալական ապահովության վճարների կամ ապրանքների և ծառայությունների հարկերի ավելացումն ավելի մեծ բացասական ազդեցություն ունի մեկ շնչին ընկնող արտադրանքի վրա, քան եկամտահարկի ավելացումը: Հետազոտությունը կատարվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի կապերի ուսումնասիրման միջոցով:

Հետազոտողների մեկ այլ խումբ<sup>80</sup> ենթադրում է, որ հարկաբյուջետային քաղաքականության միջոցով կառավարությունը կարող է ազդել տնտեսության և անհատների վրա՝ նրանց վարքագիծը կարգավորելու նպատակով: Հետազոտության ընթացքում օգտագործվել են պանելային տվյալներ ԵՄ բոլոր 27 երկրներից՝ ընդգրկելով 2008-2020 թվականներն ընկած ժամանակահատվածը: Ուսումնասիրվել է ուղղակի հարկման ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ հարկաբյուջետային արդյունավետության հետ կապված երկրների երկու հիմնական քլաստերների մակարդակով: Հեղինակները կիրառել են քլաստերային մեթոդներ՝ ԵՄ հիմնական երկրները դասակարգելով ըստ հարկաբյուջետային արդյունավետության բարձր և բավական ցածր մակարդակ ունեցող երկու խմբի: Ուսումնասիրության մեջ օգտագործվել են ամբողջական ազդեցության մոդելներ և դինամիկ GMM մեթոդներ՝ ուղղակի հարկման բաղադրիչների (անձնական և կորպորատիվ եկամտահարկեր) ազդեցությունը տնտեսական աճի վրա ուսումնասիրելու համար: Դիտարկվել է նաև ոչ ֆորմալ տնտեսության դերը՝ կապված պաշտոնական տնտեսության հետ: Ընկերիկ արդյունքները ցույց տալիս, որ կորպորատիվ եկամտահարկն էապես բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա՝ ինչպես բարձր, այնպես էլ սահմանափակ ֆիսկալ արդյունավետությամբ երկրների քլաստերների դեպքում: Բացի այդ, անձնական եկամտահարկը կապված է սահմանափակ հարկաբյուջետային արդյունավետության խմբի երկրների տնտեսական աճի հետ: Այսպիսով՝ քաղաքականություն մշակողների տեսանկյունից, ուղղակի հարկման իջեցումը կարող է մեծացնել տնօրինվող եկամուտը, խթանել սպառումը և տնտեսական աճը, խրախուսել ներդրումները, որոնք հան-

<sup>79</sup> Tax changes and economic growth: Empirical evidence for a panel of OECD countries. Davide Furceri. Georgios Karras. OECD, University of Palermo.

[https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/ws\\_pubfinance/paper\\_Furceri.pdf?e6a4da695b59b4e8685dc92b037c6c3c](https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/ws_pubfinance/paper_Furceri.pdf?e6a4da695b59b4e8685dc92b037c6c3c)

<sup>80</sup> Balasoiu, Narciz, Iulian Chifu, and Marian Oancea. 2023. "Impact of Direct Taxation on Economic Growth: Empirical Evidence Based on Panel Data Regression Analysis at the Level of Eu Countries" Sustainability 15, no. 9: 7146. <https://doi.org/10.3390/su15097146>

գեցնում են աշխատատեղերի ստեղծմանը, բարձրացնել մրցունակությունը և նվազեցնել հարկերից խուսափումը՝ դրանով իսկ հանգեցնելով ավելի արդյունավետ հարկային համակարգի ստեղծմանը: Դիտարկված հիմնական գործոններն են՝ տնտեսական աճ, ներդրումներ, գնաճ, գործազրկության մակարդակ, կառավարության ծախսեր, հարկաբյուջետային եկամուտների աճ, ֆիզիկական անձանց եկամտահարկ, շահութահարկ, ստվերային տնտեսության չափ, կոռուպցիայի վերահսկում:

ՏՀԶԿ 21 երկրում մեկ շնչին ընկնող ՀՆԱ իրական աճի տեմպերի վրա հարկման ազդեցության վերաբերյալ մեկ այլ ուսումնասիրությունում<sup>81</sup> օգտագործվում է կիսապարամետրային տեխնիկա, մասնավորապես՝ վերջավոր խառնուրդի մոդել, որը միավորում է պանելային տվյալների խառը էֆեկտների մոդելների առանձնահատկությունները և քլաստերային վերլուծության մեթոդները՝ հաշվի առնելու երկրին հատուկ չդիտարկվող տարատեսակությունը: Արդյունքները ցույց են տալիս, որ հարկերը բացասաբար են ազդում աճի վրա. բազային մոդելում գործակիցների գնահատականները վկայում են, որ անձնական եկամտահարկի դրույքաչափի 10 տոկոս կրճատումը ՀՆԱ աճի տեմպը կարող է բարձրացնել 0.6 տոկոսով, իսկ կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափի փոփոխությունը, համապատասխանաբար՝ 0.3 տոկոսով:

Մեկ այլ հետազոտություն, որի հեղինակներն են Ն. Ալինագին, Ռ. Ռիդը, վերաբերում<sup>82</sup> է մետավերլուծությանը՝ գնահատելու համար ՏՀԶԿ երկրներում տնտեսական աճի վրա հարկերի ազդեցության 42 ուսումնասիրությունների և 641 անհատական գնահատումների արդյունքները: Վերլուծությունն անդրադառնում է մի շարք բարդ խնդիրների, ինչպիսիք են տնտեսական աճի տեմպերի և հարկերի դրույքաչափերի չափման միավորները, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները, չափող հավասարումների հետևանքները, ժամանակահատվածի երկարությունը (տարեկան տվյալներ՝ բազմամյա ժամանակաշրջանների համեմատ) և այլ գործոններ: Հիմնական բացահայտումները հանգում են նրան, որ գրականությունում առկա գնահատականներն աչքի են ընկնում զգալի (բացասական) կողմնակալությամբ: Հեղինակները կարծում են, որ խեղաթյուրող հարկերի և/կամ պակասուրդների հաշվին ֆինանսավորվող ոչ արդյունավետ ծախսերի աճը էական բացասական ազդեցություն է ունենում տնտեսական աճի վրա, մինչդեռ արտադրողական ծախսերը և/կամ պետական հավելուրդները ֆինանսավորելու համար չխեղաթյուրող հարկերի ավելացումները նշանակալի դրական ազդեցություն են ունենում: Այս քաղաքականությունների գնահատված տարբե-

<sup>81</sup> Alfó, M., Carbonari, L., & Trovato, G. (2022). On the effects of taxation on growth: An empirical assessment. *Macroeconomic Dynamics*, 1-30. doi:10.1017/S1365100522000219

<sup>82</sup> Taxes and Economic Growth in OECD Countries: A Meta-Analysis Nazila Alinaghi W. Robert Reed WORKING PAPER No. 37/2016 Department of Economics and Finance School of Business and Economics University of Canterbury Private Bag 4800, Christchurch New Zealand <https://repec.canterbury.ac.nz/cbt/econwp/1637.pdf>

րությունները ցույց են տալիս, որ հնարավորություն կա հարկային քաղաքականությամբ տնտեսական աճի վրա նշանակալի ազդեցություն ունենալու: Վերջապես, թույլ ապացույցներ կան նաև, որ աշխատուժի հարկերն ավելի են դանդաղեցնում աճը, քան հարկերի այլ տեսակները, մինչդեռ այլ հարկերի վերաբերյալ վկայությունները տարաբնույթ են: Դիտարկվող հիմնական փոփոխականներն են ներդրումները, առևտրի բացությունը, մարդկային կապիտալը, բնակչության աճը, զբաղվածության աճը, գործազրկությունը և գնաճը:

Է. Էնջենը և Ջ. Սկիներիերը, իրենց հետազոտության<sup>83</sup> մեջ դիտարկելով ԱՄՆ-ում հարկային բարեփոխումների և տնտեսական աճի փոխազդեցությունը, օգտագործում են երեք հիմնական մոտեցումներ: Նախ՝ գնահատելու համար ուսումնասիրելով ԱՄՆ-ի տնտեսության պատմական տվյալները՝ փորձում են պարզել, թե արդյոք հարկերի կրճատումը կապված է տնտեսական աճի հետ: Երկրորդ՝ դիտարկում են հարկման և աճի վերաբերյալ ապացույցները երկրների մեծ ընտրանքի համար: Եվ վերջինը՝ օգտագործում են աշխատուժի առաջարկի, ներդրումների պահանջարկի և արտադրողականության աճի միկրոմակարդակի ուսումնասիրությունների ապացույցները: Արդյունքները ցույց են տալիս չափավոր ազդեցություն՝ տնտեսական աճի տեմպերի 0,2-ից մինչև 0,3 տոկոսային կետի տարբերությունների վրա՝ ի պատասխան խոշոր հարկային բարեփոխման, որը փոխում է բոլոր սահմանային հարկերի դրույքաչափերը 5, իսկ միջին հարկային դրույքաչափերը՝ 2,5 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, ըստ հեղինակների, նույնիսկ նման փոքր ազդեցությունը կարող է մեծ կուտակային ազդեցություն ունենալ կենսամակարդակի վրա: Իրականացված ռեգրեսիոն վերլուծությունը կատարվել է հետևյալ խմբերում.

1. միջին հարկային դրույք, սահմանային հարկային դրույք և ՀՆԱ փոփոխություն,
2. մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ և կապիտալից եկամտի հարկ,
3. աշխատավարձի եկամտային հարկ և մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ,
4. ՏՀԶԿ երկրների համար մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ և սպառողական հարկ,
5. աշխատուժի, ներդրումների և արտադրության գործոններից եկամտի հարկման դրույքի և ՀՆԱ կապ,
6. ՏՀԶԿ երկրների համար կապիտալից եկամտի հարկի դրույք և ներդրումային դրույքների միջև կապ:

Հարավարևելյան Եվրոպայի երկրներից Բուլղարիայի և Խորվաթիայի

<sup>83</sup> Engen E. M. and Skinner J., Taxation and Economic Growth, NBER Working Paper No. 5826, Public Economics, Cambridge, 1996

օրինակով կատարված հետազոտությունում<sup>84</sup> հարկումը դիտարկվում է որպես տնտեսական աճի ապահովման գործոն: Ձեռնարկատիրական գործունեության վրա իր ազդեցությամբ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, ինչպես նաև տնօրինվող եկամուտների և խնայողությունների վրա ազդեցության միջոցով հարկումը կարող է վճռորոշ գործոն լինել տնտեսական աճի համար: Այս համատեքստում աշխատությունն ուսումնասիրում է հարկման դերը որպես մակրոտնտեսական կայունացման որոշիչ Հարավարևելյան Եվրոպայի աշխարհաքաղաքական տարածքում, որը որոշակի լագային ուշացումով տուժեց 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամից: Վերլուծությունը հիմնված է Հարավարևելյան Եվրոպայի երկրներում տիրող ինստիտուցիոնալ հարկային դաշտի ներկայացման վրա: Հայեցակարգային վերլուծությունը կատարվում է տնտեսաչափական (էկոնոմետրիկ) մոդելով, որը բնութագրում է այս երկրների ՀՆԱ-ի վրա հարկային եկամուտների վիճակագրական ազդեցությունը: Հետազոտության ընթացքում դիտարկված մոդելներում քննվել է ՀՆԱ-ի վրա հետևյալ գործոնների ազդեցությունը՝ փոխառության դրույք, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, հարկային եկամուտներ:

Ի. Լին և Ռ. Գորդոնը, հետազոտելով հարկային կառուցվածքի և տնտեսական աճի կառուցվածքի կապը,<sup>85</sup> նշում են, որ կորպորատիվ հարկերի բարձր դրույքաչափերը պետք է նվազեցնեն տնտեսական աճի տեմպերը, մինչդեռ անձնական հարկի բարձր դրույքաչափերի ազդեցությունն ավելի քիչ է ակնհայտ: Հոդվածում ուսումնասիրվում է, թե ինչպես է հարկային քաղաքականությունն ազդում երկրի տնտեսական աճի տեմպի վրա՝ օգտագործելով 1970–1997 թվականների միջերկրային տվյալները: Հեղինակները նշում են, որ կորպորատիվ հարկի դրույքաչափերը զգալիորեն բացասաբար են փոխկապակցված միջին տնտեսական աճի տեմպերի հետ: Ըստ ամրագրված ազդեցությամբ ռեգրեսիայի՝ նրանք ցույց են տալիս, որ կորպորատիվ հարկերի դրույքաչափերի բարձրացումը հանգեցնում է երկրների ներսում ապագա տնտեսական աճի ավելի ցածր տեմպերի: Գործակիցների գնահատումները վկայում են, որ կորպորատիվ հարկի դրույքաչափի 10 տոկոսային կետով կրճատումը կբարձրացնի տարեկան աճի տեմպը մեկից երկու տոկոսային կետով: Վերլուծության ժամանակ դիտարկված գործոններն են՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ, կորպորատիվ հարկման դրույք, եկամտային հարկման դրույք, ընդհանուր հարկման միջին դրույք, ապրանքային հարկեր, տարրական դպրոցներում ընդգրկվածության ցուցանիշ, բնակչության աճ, առևտրի բացություն,

<sup>84</sup> Glykou I., Siokorelis V., Taxation as a determinant of economic growth in South-Eastern Europe: The case of Bulgaria and Croatia, *European Research Studies*, Vol. XVI, Issue (2), 2013, pp. 68-81.

<sup>85</sup> Lee Y., Gordon R., Tax structure and economic growth, *Journal of Public Economics*, vol. 89, issue 5-6, 2005

միջին գնաճ, կոռուպցիայի և բյուրոկրատիայի մակարդակը բնութագրող գործոններ, պետական ծախսեր և այլն:

Ռ. Մասեկի հետազոտությունը<sup>86</sup>, որտեղ դիտարկվում է հարկման ազդեցությունը տնտեսական աճի վրա, նպատակ է ունի գնահատելու առանձին հարկատեսակների ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ կատարելով ռեգրեսիոն վերլուծություն ՏՀԶԿ երկրների համար 2000-2011 թթ. ժամանակահատվածում: Վերլուծությունը հիմնված է նորդասական աճի ընդլայնված մոդելի վրա, իսկ հարկման և տնտեսական աճի միջև կապի ստուգման համար օգտագործվում է պանելային ռեգրեսիայի մեթոդը: Վերլուծությունների արդյունքներից պարզվում է, որ տնտեսական աճի համար բացասական ազդեցություն ունեն կորպորատիվ հարկումը, որին հաջորդում են անձնական եկամտահարկերը և սոցիալական ապահովության վճարները: Միաժամանակ, ավելացված արժեքի հարկի դեպքում տնտեսական աճի վրա բացասական ազդեցությունը չի հաստատվել: Գույքահարկի ազդեցությունը վիճակագրորեն աննշան է եղել: Վերլուծության արդյունքների հիման վրա ակնհայտ է դառնում, որ ՏՀԶԿ երկրներում տնտեսական աճը խթանելու նպատակով տնտեսական-քաղաքական իշխանությունները պետք է նվազեցնեն կորպորատիվ հարկումը և անձնական եկամտահարկը, իսկ եկամտահարկի եկամուտների կորուստը պետք է փոխհատուցվի անուղակի հարկային եկամուտների աճով: Դիտարկված գործոններն են եղել մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ-ն, կապիտալի կուտակումը, մարդկային կապիտալը, պետական ծախսերը, հարկման դրույքաչափը:

Հ. Դավուդին և Հ. Ջուն դիտարկել են ֆիսկալ ապակենտրոնացվածության և տնտեսական աճի միջև կապը<sup>87</sup>: Օգտագործելով 46 երկրների պանելային տվյալները 1970-1989 թվականների համար՝ նրանք ուսումնասիրում են հարկաբյուջետային ապակենտրոնացման և տնտեսական աճի միջև կապը: Ըստ հետազոտողների՝ զարգացող երկրներում հարկաբյուջետային ապակենտրոնացման և տնտեսական աճի միջև կապը բացասական է, իսկ զարգացած երկրներում՝ դրական: Դիտարկված հիմնական գործոններն են միջին հարկման դրույքը, ֆիսկալ ապակենտրոնացումը, բնակչության աճը, մարդկային կապիտալը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ներդրումների կշիռը ՀՆԱ-ում:

Ռ. Ռիդը, ուսումնասիրելով ԱՄՆ-ում հարկման և պետական եկամուտների աճի միջև կապը<sup>88</sup>, կարծում է, որ ընդհանուր ծախսերը ֆինանսավորելու համար օգտագործվող հարկերը բացասական ազդեցություն են գործում եկամտի աճի վրա: Ռեգրեսիոն վերլուծության ժամանակ դիտարկված հիմնական

<sup>86</sup> Macek R., The Impact of Taxation on Economic Growth: Case Study of OECD Countries, Review of Economic Perspectives, Vol. 14, Issue 4, 2015, pp. 309-328

<sup>87</sup> Davoodi H., Zou H., Fiscal Decentralization and Economic Growth: A Cross-Country Study, Journal of Urban Economics, 1998

<sup>88</sup> Reed R., The robust relationship between taxes and U.S. state income growth, National Tax Journal, Vol. 61, No. 1, 2008



գործոններն են հարկային բեռը, հարկային և ոչ հարկային եկամուտները, բարեկեցությունը, կրթությունը, աշխատուժի քանակի փոփոխությունը, տնտեսության տարբեր ճյուղերի ծավալների փոփոխությունը:

Ջ. Հունադը և Մ. Օրվիսկան հետազոտում են կորպորատիվ հարկերի ոչ գծային ազդեցությունը տնտեսական աճի վրա<sup>89</sup>: Հետազոտությունը կատարվել է ԵՄ երկրների 1999-2011 թթ. տվյալների հիման վրա: Աշխատանքի հիմնական նպատակն է եղել ստուգել կորպորատիվ հարկերի դրույքաչափերի ենթադրյալ ոչ գծային ազդեցությունը տնտեսական աճի վրա: Հիմնվելով պետական ֆինանսների և հարկման տեսության վրա՝ հեղինակները ենթադրում են, որ համեմատաբար ցածր հարկային դրույքաչափերի դեպքում հնարավոր է, որ հարկման ազդեցությունը տնտեսական աճի վրա դառնա փոքր-ինչ դրական: Մյուս կողմից՝ բարձր հարկային դրույքաչափերը բացասական ազդեցություն կարող են թողնել տնտեսական աճի վրա: Չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեցող ուսումնասիրությունների մեծ մասում ընդգծվում է այս փոփոխականների միջև առկա բացասական գծային կապը, հեղինակները, հիմնվելով ամրագրված էֆեկտների էկոնոմետրիկ մոդելների պանելային տվյալների վրա, վկայում են անվանական և արդյունավետ կորպորատիվ հարկերի դրույքաչափերի և տնտեսական աճի միջև ոչ գծային կապի առկայության մասին: Արդյունքների հիման վրա նրանք ներկայացնում են նաև կորպորատիվ հարկի դրույքաչափի օպտիմալ մակարդակը, որը թույլ կտա տնտեսական աճը հասցնել ԵՄ երկրների առավելագույն պատմական մակարդակին: Դիտարկված փոփոխականներն են ՀՆԱ տարեկան աճի տեմպը, կորպորատիվ հարկի արդյունավետ միջինացված դրույքը, օրենքով սահմանված կորպորատիվ հարկման դրույքը, ՕՈՒՆ-ի կշիռը ՀՆԱ-ում, հետազոտությունների և զարգացման վրա կատարված պետական ծախսերը, պետական պարտքը, գործազրկությունը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, տնտեսության բացությունը, կոռուպցիայի ընկալման ինդեքսը:

Բլանչարտի և Պերոտիի հետազոտությունը<sup>90</sup> վերաբերում է հետպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ-ի տնտեսության վրա պետական ծախսերի և հարկերի շոկային դինամիկ ազդեցությանը: Դա իրականացվել է՝ օգտագործելով VAR մոդելը Արդյունքները ցույց են տալիս, որ պետական ծախսերի ցնցումները դրական, իսկ հարկային ցնցումները բացասական ազդեցություն ունեն արտադրության վրա: Միաժամանակ, և՛ հարկերի, և՛ պետական ծախսերի ավելացումը չափազանց բացասական ազդեցություն ունի ներդրումների վրա: Դիտարկված հիմնական գործոններն են պետական ծախսերը, ապրանքների և ծառայությունների գնման ծավալները, զուտ հարկերը,

<sup>89</sup> Hunady J., Orviska M., The non-linear effect of corporate taxes on economic growth, Timisoara Journal of Economics and Business, 2015, pp. 14-31

<sup>90</sup> Blanchard O. and Perotti R., An Empirical Characterization of the Dynamic Effects of Changes in Government Spending and Taxes On Output, Quarterly Journal of Economics, Vol. 117, N 4, 2002, pp. 1329-1368

պաշտպանության ծախսերը, բնակչության եկամուտներն ու ծախսերը:

Ֆիսկալ բազմարկիչների (մուլտիպլիկատորների) հետազոտման ընթացքում<sup>91</sup> Ն. Բատինին և մյուսները վերլուծում են սպառման, կորպորատիվ և եկամտային հարկերը, պետական սպառումը, պետական ներդրումները, պաշտոնական տրանսֆերտները: Հետազոտության ընթացքում դիտարկվում է ֆիսկալ շոկերի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա և փորձ է արվում հասկանալու ՀՆԱ կանխատեսման հնարավորությունները դրանց ազդեցությամբ: Հետազոտությունն առավելապես ուղղված է հարկաբյուջետային հիմնական բազմարկիչների բացահայտմանը, դրանց նշանակության գնահատմանը մակրոտնտեսական կանխատեսումների և քաղաքականության մշակման համար: Դիտարկվում են այդ բազմարկիչների չափն ու կայունությունը: Առաջ է քաշվում տվյալների սահմանափակության պայմաններում բազմարկիչների գնահատման հարցը: Փորձ է արվում բազմարկիչները ներառելու մակրոտնտեսական կանխատեսումների մեջ:

Հարկերի և տնտեսական զարգացման փոխառնչություններին անդրադարձել են նաև հայ հեղինակները: Մասնավորապես՝ Ա. Սարգսյանն իր «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունում<sup>92</sup> ուսումնասիրում է ՀՀ տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործմանն ուղղված մոտեցումներն ու առաջարկությունները: Հեղինակը դիտարկում է հարկային քաղաքականության կարգավորման գործիքները՝ մասնավորապես շեշտադրելով հարկային արտոնությունները՝ միտված սոցիալ-տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Տ. Շահինյանն ու Տ. Ռաֆայելյանը տնտեսության մեջ հարկային մարմինների դերին ու նշանակությանը վերաբերող հոդվածում<sup>93</sup> ուսումնասիրում են հարկային մարմնի կողմից օրենքի ու իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողությունները՝ ուղղված հարկային օրենսգրքի ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը ու հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Հոդվածում ուսումնասիրվել են 2007-2016 թվականների ՀՀ պետական բյուջեի հարկերն ու տուրքերը, հիմնական հարկային խախտումները, ինչպես նաև խոշոր հարկ

<sup>91</sup> Batini. N et al., Fiscal Multipliers: Size, Determinants, and Use in Macroeconomic Projections, Fiscal Affairs Department, IMF, 2014, p. 6

<sup>92</sup> Անի Ժորայի Սարգսյան, «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 2022, [https://www.bok.am/sites/default/files/2022-11/015-Ani\\_Sargsyan%20L.pdf?fbclid=IwAR3GPrOQmtjW99vm1tg8OXloLMk8XoiPeW\\_tCzzSzZ7n6MWSbOfPHHTBJM](https://www.bok.am/sites/default/files/2022-11/015-Ani_Sargsyan%20L.pdf?fbclid=IwAR3GPrOQmtjW99vm1tg8OXloLMk8XoiPeW_tCzzSzZ7n6MWSbOfPHHTBJM)

<sup>93</sup> Տաթևիկ Վազգենի Շահինյան, Տաթևիկ Արայի Ռաֆայելյան, «Հարկային մարմինների դերն ու նշանակությունը տնտեսության մեջ», ՀՀ ԳԱԱ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2017, <https://arar.sci.am/dlibra/publication/280873/edition/257891/content>

վճարողների հարկային մուտքերը:

Ս. Անաստայանի «Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում» թեմայով հետազոտությունում<sup>94</sup> ներկայացված են հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև հարկային քաղաքականության պետական կարգավորման բարելավման ուղղությունները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում: Ըստ հեղինակի, ելնելով հարկային քաղաքականության ոլորտում առկա խնդիրների և ներկայիս տնտեսական հարաբերությունների զարգացման առանձնահատկություններից, հարկային քաղաքականության պետական կարգավորման ոլորտի բարեփոխումները պետք է ընթանան երեք հիմնական ուղղություններով՝ օրենսդրական, տնտեսական, վարչարարական:

Վ. Բոստանջյանի և Գ. Կիրակոսյանի հոդվածը<sup>95</sup> սվիրված է տնտեսական անվտանգության ապահովման գործում հարկային համակարգի դերին և տնտեսական անվտանգության տեսական հիմքերի ուսումնասիրությանը: Ներկայացվել են տնտեսական անվտանգության վրա ազդող գործոնները, հիմնավորվել հարկային համակարգի ազդեցությունը տնտեսական անվտանգության վրա: Դիտարկվել է հարկային քաղաքականության և տնտեսական անվտանգության միջև գոյություն ունեցող կապը: Անդրադարձ է կատարվել հանրապետությունում հարկային քաղաքականության բացթողմաներին և, տնտեսական անվտանգության առումով, դրանց բացասական հետևանքներին: Ներկայացվել են հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման նպատակով հարկային գործիքների կիրառման հիմնական մոտեցումները:

Գ. Կիրակոսյանի Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ կառուցվածքի բարելավման և հարկային բեռի բաշխման հիմնախնդիրներին վերաբերող հոդվածում<sup>96</sup> ուսումնասիրվում են ՀՀ-ում համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի փոփոխությունները, տնտեսական աճի շարժընթացը և այդ գործոնների ազդեցությունը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա: Հիմնավորվում է տնտեսության ոչ հարկվող հատվածների բացասական ազդեցությունը հարկային բեռի անհավասար բաշխման վրա: Առաջարկվում են

<sup>94</sup> Սուրբիաս Անաստայան, «Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում», ՀՀ ԳԱԱ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2014, <https://arar.sci.am/dlibra/publication/280669/edition/257696/content>

<sup>95</sup> Վարդան Բոստանջյան, Գևորգ Կիրակոսյան, Հարկային համակարգի դերը տնտեսական անվտանգության գործում, «Բանբեր ՀՊՏՀ», «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2017, [https://asue.am/upload/files/science/banber/2017-year-4/15-B\\_2017.4\\_13.pdf](https://asue.am/upload/files/science/banber/2017-year-4/15-B_2017.4_13.pdf)

<sup>96</sup> Գևորգ Կիրակոսյան, ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավման և հարկային բեռի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», 2021, N1, [http://www.old.ysu.am/files/05G\\_Kirakosyan.pdf](http://www.old.ysu.am/files/05G_Kirakosyan.pdf)

Հայաստանում տնտեսական աճի կառուցվածքի փոփոխության հնարավոր ուղիները՝ թե՛ դրա որակի բարելավման, թե՛ հարկեր/ ՀՆԱ հարաբերակցության բարձրացման առումով:

Կ. Սարոյանի թեկնածուական ատենախոսությունում<sup>97</sup> ուսումնասիրվում են ՀՀ հարկային համակարգը, դրա հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև հարկային բեռի ձևավորման և կառավարման գործընթացները: Հեղինակը հարկային բեռի իրական մակարդակը որոշելու նպատակով կառուցվածքային հավասարումների մոդելավորման MIMIC մոդելի միջոցով գնահատել է ՀՀ-ում ստվերային տնտեսության մակարդակը և դիտարկել հարկային արտոնությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում: Տնտեսության վրա հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների ազդեցությունը վերլուծելու նպատակով տնտեսաչափական SVAR մոդելի միջոցով գնահատվել են ՀՆԱ ծախսային բազմարկիչների մեծությունները: Աշխատանքում դիտարկվել են ՀՀ առանձին հարկատեսակներ, դրանց գծով հարկային բեռի ազդեցությունը տնտեսության վրա, ինչպես նաև էկոնոմետրիկ մոդելի միջոցով գնահատվել է ընդհանուր հարկային բեռի և տնտեսական աճի միջև փոխազդեցությունը:

Ա. Մարգարյանի աշխատությունում<sup>98</sup>, որը վերաբերում է ՀՀ տնտեսական աճի վրա հարկային համակարգի տնտեսական ազդեցություններին, վերլուծվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հիմք հանդիսացող հարկատեսակների և համախառն ավելացված արժեքի փոխազդեցությունը: Վերլուծությամբ փորձ է արվել բացահայտելու տարբեր տեսակի հարկերի՝ կորպորատիվ եկամտահարկի վարքագծային ազդեցությունները: Բացահայտվել են անձնական եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և երկրի ՀՆԱ աճի փոխազդեցության գործընթացների հիմնական միտումներն ու առավել բնորոշ կողմերը: Հեղինակը կարևորել է ֆինանսական ռեսուրսների հավաքագրման հարկային կառուցակարգերի կշիռը և հարկային բեռի բաշխումը տնտեսության ոլորտների, տնային տնտեսությունների և տնտեսությանը մասնակցող այլ ոլորտների միջև: Ի-տարակվող հարաբերությունների բնույթը և ազդեցության ուղղությունները պարզելու համար օգտագործվել է ARDL (autoregressive distributed lag) մոդելը, որի կիրառումը թույլ է տվել բացահայտել դիտարկվող ցուցանիշների և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ փոխկապակցվածությունները:

<sup>97</sup> Կ. Ի. Սարոյան, «Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապակցվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսություն, Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի համար, Երևան, 2022:

<sup>98</sup> A. Margaryan, Structural Impacts of the Tax System on the Economic Growth in the Republic of Armenia, Messenger of ASUE 2023.1, pp. 5-18, <https://asue.am/upload/files/science/banber/2023-year-1/1.pdf>

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

**2.1 Տնտեսական աճի վրա ազդող գործոնների շարժընթացն ու հիմնական զարգացումները**

Տնտեսական աճը, լինելով տնտեսության առկա վիճակը բնութագրող բարդ և բազմակողմ ցուցանիշ, ենթակա է տարաբնույթ գործոնների ազդեցության, որոնց դասակարգումը գործնականում հաճախ կրում է պայմանական բնույթ: Տնտեսական աճի վրա ազդող գործոններն ըստ դրանց աղբյուրի կարելի է դասակարգել երկու խոշոր խմբերի՝ արտաքին և ներքին: Չնայած այս բաժանմանը, շատերի պնդմամբ, աճի վրա ազդող արտաքին և ներքին գործոնները փոխկապված են և լրացնում կամ խոչընդոտում են իրար: Մասնավորապես՝ թեման ուսումնասիրած հեղինակներից շատերը համակարծիք են, որ արտաքին գործոնները տնտեսական աճի վրա ունեն ուղղակի և մեծ ազդեցություն հիմնականում կարճաժամկետում: Մյուս կողմից, քանակական հետազոտությունները ցույց են տալիս, որ արտաքին գործոնների ազդեցության չափը պայմանավորված է միայն տնտեսության ներքին բարենպաստ միջավայրով<sup>99</sup>: Այստեղից կարելի է վկայել, որ ներքին գործոններն ունեն լծակի էֆեկտ արտաքին գործոնների ազդեցությունը մեծացնելու կամ փոքրացնելու համար:


*Արտաքին գործոններ*

Յուրաքանչյուր երկրի համար տնտեսական աճը բարձր տեմպերի վրա պահելը կարևորագույն նպատակներից մեկն է, և յուրաքանչյուր կառավարություն ձգտում է վարել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը հնարավոր կդարձնի հասնել ցանկալի արդյունքի: Մինչև 2008 թվականը՝ Հայաստանի տնտեսական աճը մշտապես ունեցել է բարձր տեմպ, և միջին տարեկան աճի տեմպն այդ ժամանակահատվածում եղել է 11.2%: Դա հիմնականում պայմանավորված է եղել շինարարության ոլորտի շարունակական աճով: Մասնավորապես՝ շինարարության աճի տարեկան միջին տեմպը հասնում էր 25.4%-ի, ինչը մնացյալ ճյուղերի համեմատ բարձր ցուցանիշ էր: Դա էլ, իր հերթին, պայմանավորված էր դեպի Հայաստան դրամական փոխանցումների շարունակական աճով: Դիտարկվող տարիներին արձանագրվել է դեպի ՀՀ մեծ ծավալներով դրամական ներհոսք, և եթե 2000 թվականին դրամական

<sup>99</sup> Kui-Wai Li, “The Optimal Level and Impact of Internal Factors on Growth,” *Modern Economy* 2, no. July 2011 (2011): 189.7

ներհոսքը դեպի ՀՀ կազմել է ընդամենը 182,2 մլն ԱՄՆ դոլար, ապա արդեն 2008 թ.-ին այդ ցուցանիշը հասել է 1 մլրդ 904 մլն ԱՄՆ դոլարի, իսկ ՀՆԱ-ի մեջ վերջինիս մասնաբաժինն ավելացել էր 8.3%-ային կետով՝ 9.5-ից հասնելով գրեթե 18 տոկոսի:

2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամն իր ազդեցությունն է թողել նաև ՀՀ տնտեսության, տնտեսության կառուցվածքի և այն գործոնների վրա, որոնք ապահովում են հետագա կայուն զարգացում: Մասնավորապես, 2008 թվականի հետ համեմատած, 2009-ին 24.4%-ով նվազել են դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցները, սակայն 2010-ից մինչև 2013 թ.-ը, տնտեսական աճին զուգընթաց, դրանք աճել են՝ 2013 թվականին հասնելով դիտարկվող ողջ ժամանակահատվածի ամենաբարձր արժեքին՝ 2 մլրդ 192 մլն ԱՄՆ դոլար և ՀՆԱ-ի մեջ կազմելով 19.7%: Դեպի Հայաստանի տնտեսություն դրամական փոխանցումների հաջորդ 2 կտրուկ անկումներն արձանագրվել են 2016 և 2020 թվականներին: Առաջին անկումը հիմնականում Ռուսաստանի տնտեսությունում տեղի ունեցող բացասական իրավիճակի հետևանք էր, քանի որ վերջինս դեպի ՀՀ դրամական ներհոսքի հիմնական աղբյուրն է, իսկ երկրորդը պայմանավորված էր 2020 թ.-ին բռնկված COVID-19 համավարակով: Ըստ 2022 թ.-ի տվյալների՝ դեպի ՀՀ դրամական ներհոսքի աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կազմել է 30.7% կամ ավելի քան 2 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ համախառն ներքին արդյունքի մեջ վերջինիս տեսակարար կշիռը հասել է մինչև 10.4%-ի:



**Գծապատկեր 2.1.1**

*ՀՀ իրական ՀՆԱ աճի տեմպի (աջ ստանդը)՝ դեպի ՀՀ դրամական փոխանցումների և դրամական փոխանցումներ/ՀՆԱ (աջ ստանդը) շարժընթացը, 2000-2022 թթ.<sup>100</sup>*

<sup>100</sup> Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա:


Զարգացող երկրների համար արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավումը, հատկապես որպես օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տնտեսության կայուն զարգացման գլխավոր գրավականներից մեկն է: ՕՈՒՆ-ի ներգրավումը տնտեսական քաղաքականություն մշակողների և իրականացնողների ուշադրության կենտրոնում է, և վերջինիս շարունակական և կայուն աճը նոր հնարավորություններ է ստեղծում յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար:

Գծապատկեր 2.1.1-ում պատկերված է ինչպես ՀՀ, այնպես էլ համաշխարհային և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումների շարժընթացը 2000-2022 թվականներին:

Ինչպես պարզ է դառնում գծապատկերից, 2000-ական թվականներին ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի ծավալները Հայաստանում բավական փոքր էին: Այնուհետև օտարերկրյա ներդրողների համար տարեցտարի Հայաստանը դարձավ ավելի գրավիչ, ինչը հանգեցրեց օտարերկրյա ներդրումների ծավալների աճին, և այս ժամանակահատվածում միջին տարեկան աճի տեմպը կազմեց 37.5%: Ընդ որում, 2000-ական թվականներին ներդրումներն առավելապես ուղղվել են դեպի էլեկտրաէներգետիկայի, հեռահաղորդակցության ոլորտներ, իսկ դրանց գերակշիռ մասը պատկանել է Ռուսաստանին: Արդեն 2008 թ.-ին Հայաստանում ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը կազմում էր 943 մլն ԱՄՆ դոլար, ինչը շուրջ 14 անգամ գերազանցում էր 2001 թվականի ցուցանիշը: 2008 թվականին նույնպես գլխավոր ներդրող երկիրն էր Ռուսաստանը, որին հաջորդում էր Արգենտինան: Համեմատության համար նշենք նաև, որ համաշխարհային ՕՈՒՆ-ի միջին տարեկան աճի տեմպը 2000-2008 թվականներին կազմում էր 11.6%, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 14%:

2008 թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամը խոր հետք թողեց ՀՀ ՕՈՒՆ-ի շարժընթացի վրա, և 2009-2010 թթ. ներդրումների աճող ծավալները փոխարինվեցին կտրուկ անկման միտումներով: Մասնավորապես, չնայած 2011, 2015-2016 թթ. ՕՈՒՆ-ի համաշխարհային ծավալը գերազանցել է 2008 թ. մակարդակը, մի շարք երկրներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ԵԱՏՄ անդամներ Ռուսաստանի Դաշնությունը և Ղազախստանը այդպես էլ չկարողացան վերականգնել մինչճգնաժամային ցուցանիշը: 2020 թվականի համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ Հայաստանում ՕՈՒՆ-ի ծավալը կրկին կրճատվեց շարժընթացում՝ հասնելով ընդամենը 58.6 մլն ԱՄՆ դոլարի, ինչը դիտարկվող ժամանակահատվածի համար նվազագույն ցուցանիշն է: Սակայն, 2021 թվականից սկսած, արդեն նկատվում է ՕՈՒՆ-ի կտրուկ աճ՝ հասնելով ընդհուպ մինչև 525%-ի (նախորդ տարվա նկատմամբ): Ըստ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի բաշխվածության՝ 2021 թվականին կտրուկ աճ է արձանագրվել բուսաբուծության, անասնաբուծության, որսորդության և հարակից ոլորտներում, մետաղական հանքաքարի արդյունահանում հանքագործական արդյու-

նաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերի գործունեության տեսակներում: Ըստ 2022 թվականի տվյալների՝ Հայաստանում ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը կազմել է 998 մլն ԱՄՆ դոլար, որն առավելապես պայմանավորված է 2021 թվականից սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով դեպի ՀՀ մեծ քանակությամբ ֆինանսական կապիտալի ներհոսքով:




**Գծապատկեր 2.1.2**

*Հայաստանի, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների և համաշխարհային ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը, 2000-2022 թթ.<sup>101</sup>*

Դիտարկելով ՕՈՒՆ-ի զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը 2000-2022 թվականներին ՌԴ-ում, ՀՀ-ում և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ կարող ենք ասել, որ ՕՈՒՆ-ի կատարողականի առումով, ՀՀ ցուցանիշը մինչև 2008 թվականը միջինում կազմել է մոտ 6%, իսկ դիտարկվող ցուցանիշի ամենաբարձր արժեքն արձանագրվել է 2009 թ.-ին (8.8%): Չնայած այն փաստին, որ 2009 թվականին ՕՈՒՆ-ի ներհոսքը կրճատվել է դեպի ՀՀ՝ ՀՆԱ 14.4%-ով անկման հետևանքով, ՕՈՒՆ զուտ ներհոսք/ՀՆԱ ցուցանիշը հարաբերականորեն բարձր է գրանցվել: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ դիտարկվող ցուցանիշի արժեքները մինչև 2012 թվականը մշտապես գերազանցել են թե՛ հիմնական գործընկեր ՌԴ-ին, թե՛ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբին: Ըստ 2022 թ.-ի տվյալների՝ տվյալ ցուցանիշը Հայաստանում կազմում է 5.1%, ՌԴ-ում՝ 1.9%, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում՝ 1.4%:

<sup>101</sup> Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա:






**Գծապատկեր 2.1.3**

*ՕՈՒՆ/ՀՆԱ հարաբերակցությունը Հայաստանում, Ռուսաստանում, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում<sup>102</sup>*

Կապիտալի ներհոսքի կամ արտահոսքի հիմնական պատճառը, ըստ տեսության, համաշխարհային և ներքին տոկոսադրույքների տարբերությունն է: Արտաքին տոկոսադրույքը կարող է ազդել տնտեսության վրա մի քանի լծակների միջոցով՝ կապիտալի շարժ, փոխարժեքի փոփոխություն, դրամավարկային քաղաքականության արձագանք, պետական պարտքի սպասարկման ծախսի փոփոխություն և այլն: Դիտարկելով տոկոսադրույքի շարժը գործընկեր երկրներում՝ նկատելի է, որ դա Ռուսաստանի դեպքում անկայուն է եղել՝ կտրուկ աճ գրանցելով 2008 և 2015 թվականներին: ԱՄՆ-ում և եվրագոտու երկրներում տոկոսադրույքը կայուն է եղել 2009 թվականից մինչ 2021 թվականը, որից հետո գնաճի դեմ պայքարի արդյունքում ԱՄՆ-ում դա կազմել է 4.27 տոկոս (միջին եռամսյակային ցուցանիշ)՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճելով 4.13 տոկոսային կետով: Իսկ եվրագոտում դա կազմել է 1.77 տոկոս՝ աճելով 2.33 տոկոսային կետով:

<sup>102</sup> Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա:




**Գծապատկեր 2.1.4**

*Կարճաժամկետ փոկոսադրույթի շարժընթացը հիմնական գործընկեր երկրներում<sup>103</sup>*

Գծապատկեր 2.1.5-ում ներկայացված է դրամի նկատմամբ եվրոյի, դոլարի և ուրբլու միջին փոխարժեքների շարժընթացը 2000-2023 թվականների ընթացքում: Ինչպես երևում է գծապատկերից, 2000-2003 թթ., չնայած դրամ/դոլար փոխարժեքը դրսևորել է անկանոն վարքագիծ, սակայն հիմնական միտումը եղել է դեպի արժեզրկում: 2003 թ. մարտին, ըստ ՀՀ ԿԲ տվյալների, դրամ/դոլար փոխարժեքը հասել է առավելագույնին. 591.76 դրամ՝ 1 դոլարի դիմաց: 2004-2007 թթ. դրամի արժևորումը պայմանավորված էր արտաքին առևտրաշրջանառության, ներգնա և արտագնա զբոսաշրջության, մասնավոր տրանսֆերտների և ներդրումների զգալի աճով: Դրամ-դոլար փոխարժեքը նվազագույն մակարդակի է հասել 2008 թվականին՝ կազմելով 302.3 դրամ, որից հետո աճել է և մինչ 2020 թվականը կայունացել 480 դրամի սահմանում: Սակայն, 2021 թվականին դրամն արժեզրկվել է դոլարի նկատմամբ՝ միջինում հասնելով 525.12 դրամի, իսկ այսպիսի արժեզրկումից հետո միանգամից գրանցվել է կտրուկ արժևորում, որին նպաստել են ԿԲ տոկոսադրույթի բարձրացումը, դրամական փոխանցումների և արտարժույթի առաջարկի ավելացումը ներքին շուկայում:

<sup>103</sup> Աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության վիճակագրություն:



**Գծապատկեր 2.1.5**


**Դրամի նկատմամբ եվրոյի, դոլարի և ռուբլու (աջ առանցք) միջին փոխարժեքների շարժընթացը<sup>104</sup>**

Ռուբլու փոխարժեքը դրամի նկատմամբ շարունակաբար նվազել է և վերջին տարիներին սկսել տատանվել 7-8 դրամի սահմաններում: Նկատելի է, որ 2020-2021 թվականների իրադարձությունների արդյունքում դոլարի և եվրոյի փոխարժեքները շատ ավելի կտրուկ են փոփոխվել, իսկ ռուբլու դեպքում՝ 2022 թվականի երկրորդ եռամսյակից ի վեր, նկատելի է շարունակական արժեզրկում՝ 2023 թվականի երկրորդ եռամսյակում կազմելով 4.76 դրամ: Ինչ վերաբերում է եվրոյին, ապա վերջինս իր առավելագույն մակարդակին է հասել 2004 թվականին՝ կազմելով 668.73 դրամ, որից հետո կայուն կերպով նվազել է մինչև 2008 թվականը՝ հասնելով 404.66 դրամի: Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո եվրոն տատանվել է 510-590 դրամի սահմաններում: Վերջին ժամանակաշրջանում ամենամեծ արժեզրկումը տեղի է ունեցել հենց եվրոյի դեպքում՝ 2021 թվականի ապրիլի նկատմամբ 2023 թվականի ապրիլին նվազելով 203.35 դրամով կամ 32.36 տոկոսով:

Գծապատկեր 2.1.6-ում ներկայացված է արտահանման, ներմուծման և իրական արդյունավետ փոխարժեքի շարժընթացը: Եթե դիտարկենք դրամի իրական արդյունավետ փոխարժեքը, ապա նկատելի է, որ այն ներկայումս գտնվում է դիտարկվող ժամանակաշրջանի առավելագույն մակարդակում, որը նախորդ տարվա նկատմամբ աճել է 46.81 տոկոսային կետով: Նկատելի է նաև, որ իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման առավելագույն մակարդակներն ուղեկցվել են արտահանման ծավալի կրճատմամբ:

<sup>104</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, արտաքին հատվածի վիճակագրություն:

Մինչև 2008 թվականը, ներմուծման ծավալների աճին զուգահեռ, արտահանման ծավալները նույնպես աճում էին: 2009 թվականին, չնայած արտահանման ծավալները կրճատվեցին, միաժամանակ, կրճատվեցին նաև ներմուծման ծավալները՝ հանգեցնելով զուտ արտահանման նվազմանը: 2015 թվականին արտաքին առևտրի ծավալների անկումը հիմնականում կապված է ՌԴ-ի և գործընկեր երկրների տնտեսությունների անկման հետ, քանի որ ՀՀ արտաքին առևտրի մեծ մասն իրականացվում է ՌԴ-ի հետ: Արտահանումը կտրուկ կերպով կրճատվել է նաև 2020 թվականին՝ տարեկան կտրվածքով գրանցելով 27.57 տոկոս անկում, որը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների արտահանման ծավալի 54.83 տոկոս անկմամբ, իսկ ապրանքների գծով անկումը կազմել է 19.1 տոկոս: Սակայն, 2022 թվականի առաջին եռամսյակում արտահանման ծավալը վերականգնվել է, և նույնիսկ 33.91 տոկոս աճ է գրանցվել նախաճգնաժամային 2019 թվականի առաջին եռամսյակի նկատմամբ: Գծապատկեր 2.1.6-ից նաև նկատելի է ՀՀ վճարային հաշվեկշռի բացասական սալդոն, որը մեղմվել է 2021 թվականից սկսած, իսկ 2022 թվականին տարբերությունը բավական փոքր էր՝ 148.2 մլն դոլար: Նման աճին նպաստել են առավելապես ծառայությունների արտահանման ավելացումը (նախորդ տարվա նկատմամբ գրանցվել է մոտ 1.5 անգամ ավելի աճ) և ապրանքների արտահանման աճը՝ 74.5 տոկոս:



**Գծապատկեր 2.1.6**


**Դրամի իրական արդյունավետ փոխարժեքի (աջ առանցք), արտահանման և ներմուծման ծավալների շարժընթացը<sup>105</sup>**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործընկեր երկրների տնտեսու-

<sup>105</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Արտաքին հատվածի վիճակագրություն:

թյուններում տեղի ունեցող ինչպես դրական, այնպես էլ բացասական իրադարձություններն ուղիղ ազդեցություն են ունենում մեր երկրի տնտեսական ցուցանիշների հետագծի վրա, գծապատկեր 2.1.7-ում ներկայացրել ենք ՀՀ, ՌԴ, ԱՄՆ և եվրագոտու երկրների իրական ՀՆԱ աճի տեմպերը 2000-2022 թվականներին:

Ինչպես պարզ է դառնում գծապատկեր 2.1.7-ից, ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքների ազդեցությունն ամենաշատը զգացվել է ՀՀ տնտեսությունում, իսկ ամենափոքր ճեղքը ԱՄՆ-ի տնտեսությունում է: Ճգնաժամից հետո թռիչքային աճի տեմպով նույնպես դիտարկվող երկրների և խմբերի շարքում Հայաստանն առաջատար է, և հաջորդիվ՝ աճի տեմպը բարձր է եղել այն երկրներում, որտեղ սախկինում անկումը մեծ էր: Բոլոր դիտարկվող երկրներում տնտեսական աճի հաջորդ կտրուկ անկումը նկատվել է 2020 թ.-ի համավարակով պայմանավորված, այս դեպքում, սակայն, անկումն առավել խորն է եղել եվրագոտու երկրներում, իսկ Ռուսաստանը, որն ավելի քիչ սահմանափակումներ է կիրառել, արձանագրել է ավելի մեղմ անկում: Նկատելի է նաև, որ 2021 թվականի պիկից հետո դիտարկվող երկրներում տնտեսական աճը դանդաղել է, իսկ ՀՀ-ում դա շարունակվել է՝ հիմնականում պայմանավորված լինելով արտահանման և դրամական ներհոսքերի ավելացմամբ:




**Գծապատկեր 2.1.7**

*ԱՄՆ, եվրոգոտու երկրների, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի տեմպերը, 2000-2023 թթ.<sup>106</sup>*

<sup>106</sup> Աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության վիճակագրություն, ՀՀ վիճակագրական կոմիտե:

Արտաքին գործոններից էական և նշանակալի ազդեցություն ունեն համաշխարհային շուկայում հիմնական ռեսուրսային և էներգակիրների գների տատանումները, որոնք կարող են ազդել երկրի տնտեսության վրա: Ման ազդեցության համար փոխանցումային կառուցակարգեր են արտադրության ծախսերի մեծացումը, գնաճի արագացումը, եկամուտների վերաբաշխումը (օրինակ՝ նավթի դեպքում նավթ ներկրող երկրներից դեպի նավթ արդյունահանող երկրներ եկամտի փոխանցումը): Նշված գործոնների ազդեցության ուղղությունը հիմնականում կախված է տվյալ երկրի տնտեսական կառուցվածքից: Օրինակ՝ եթե համադրենք նավթի գնի և Ռուսաստանի ՀՆԱ աճի տեմպերը, ապա նկատելի է դրական կապ այս երկու ցուցանիշի միջև:



**Գծապատկեր 2.1.8**

*Brent տնասկի նավթի գնի և FAO Կարևնային ապրանքների գների ինդեքսի շարժրնթացը, 2000-2023 թթ.<sup>107</sup>*


2000-ականների սկզբին նավթի գինը համեմատաբար կայուն էր՝ տատանվելով 30-40 դոլարի սահմաններում: 2005-2007 թվականներին նկատվեց դրա կտրուկ արժևորում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական ակտիվության շեշտակի աճով: Իսկ ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում արձանագրվեց մոտ 64 տոկոս անկում, որից հետո մինչ 2011 թվականը վերականգնվեց նախաճգնաժամային դիրքում՝ մինչ 2014 թվականը մնալով 100-120 դոլարի տիրույթում: 2015 թվականին, աշխարհաքաղաքական զարգացումների, ՕՊԵԿ որոշումների, դոլարի արժևորման և այլ գործոնների ազդեցությամբ պայմանավորված, նավթի գինը կրկին մոտ 68 տոկոս անկում

<sup>107</sup> Աղբյուրը՝ ԱՄՆ դաշնային պահուստի պաշտոնական վիճակագրություն:

ապրեց: Նման անկում գրանցվել է նաև 2020 թվականի սահմանափակումների հետևանքով, որից հետո, պահանջարկի վերականգնման հետ միասին, վերադարձավ նախկին՝ 110-120 դոլարի մակարդակին: 2022 թվականի երկրորդ քառորդից սկսած՝ նկատելի է գնի անկում, որը 2023 թվականի երկրորդ քառորդում կազմել է մոտ 28.8 տոկոս:

**Ներքին գործոններ**

Հայաստանում **Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (HDI)**, պայմանավորված անկախությունից ի վեր կատարվող ինստիտուցիոնալ բարեփոխումներով, արձանագրել է որոշակի աճ: Աճի տեմպը որոշակիորեն նվազել է 2007-2009 թթ., ինչը կարող է պայմանավորված լինել համաշխարհային ճգնաժամով:



**Գծապատկեր 2.1.9**

*Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը ՀՀ-ում, 2000-2021 թթ.<sup>108</sup>*

Աճի միտումը որոշակիորեն փոխվել է նաև 2020 թ.-ից հետո՝ պայմանավորված 2020 թ. պատերազմի և համավարակի հետևանքով կյանքի սպասվող տևողության և կենսամակարդակի բաղադրիչներում բացասական միտումով (օրինակ՝ կյանքի սպասվող տևողությունը 75.1 տարուց նվազել է մինչև 72.0 տարի):


Հատկանշական է, որ Հայաստանի մարդկային ներուժի զարգացման հիմնական ցուցանիշները 2021 թվականին, 2019-ի համեմատ, վատթարացել են, և արձանագրվել է անկում ինչպես ըստ զբաղեցրած հորիզոնականի

<sup>108</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները՝ հիմնվելով Համաշխարհային բանկի տվյալների բազայի վրա:

(81-րդից Հայաստանը տեղափոխվել է 85-րդ հորիզոնական), այնպես էլ ըստ ՄՆԶԻ արժեքի (0.778-ից նվազել է մինչև 0.759 միավոր):

Հայաստանը տարածաշրջանում համեմատական առավելություն ունի կրթության ոլորտում (կրթության միջին տևողությամբ զիջում է միայն Վրաստանին): Միաժամանակ, հարկ է նշել, որ միջին կենսամակարդակի առումով, Հայաստանն իր բոլոր հարևանների շարքում գերազանցում է միայն Իրանին:

Գաղտնիք չէ, որ Հայաստանն ունի գրագիտության բարձր ցուցանիշ, սակայն կրթական համակարգի առջև ծառայած մի շարք մարտահրավերների, այդ թվում՝ պետության կողմից ոչ բավարար չափով կրթական ծախսերի կատարման, ոլորտում ցածր աշխատավարձերի առկայության հետևանքով տարիների ընթացքում կրթության մակարդակն իջնում է:



**Գծապատկեր 2.1.10**


*Պետության կողմից կրթական ոլորտում կատարված ծախսերի կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ<sup>109</sup>*

Պետք է նշել, որ 2000-ականների սկզբին, տնտեսական ակտիվության հետ մեկտեղ, կտրուկ կերպով ավելացել է կրթության ոլորտում կատարված ծախսերի մասնաբաժինը: 2010-2014 թթ. ճգնաժամին հաջորդած շրջանում ոլորտում արձանագրվել է միջոցների նվազում, ինչից հետո՝ 2015-2021 թթ., ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ գտնվել են որոշակիորեն կայուն ցածր մակարդակի վրա: Միաժամանակ, վերջին 5 տարիներին նկատելի է դրական միտում՝ կրթության ռազմավարական դերի բարձրացման տեսանկյունից:

<sup>109</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները՝ հիմնվելով Համաշխարհային բանկի տվյալների բազայի վրա:



Հայաստանում, ավանդաբար, գոյություն ունի բարձրագույն կրթություն ստանալու հասարակական բարձր պահանջարկ, ինչի արդյունքում այստեղ առկա են թե՛ մեծ թվով համալսարաններ, թե՛ ուսանողներ: Համեմատության համար նշենք, որ վերջին տվյալներով Հայաստանում առկա է ավելի քան 20 բուհ, ինչը գերազանցում է բնակչության թվով Հայաստանին գերազանցող հարևան Վրաստանի կամ Ադրբեջանի նույն ցուցանիշը:



**Գծապատկեր 2.1.11**

*Բարձրագույն ուսումնական հաստատությունների և սովորողների քանակը<sup>110</sup>*


Պետք է նկատել նաև, որ, 2008 թ.-ից սկսած, ուսանողների թվաքանակի նվազող միտումը փոխակերպվում է աճի, մինչդեռ ուսումնական հաստատությունների քանակի անկման միտումը կայուն է՝ պայմանավորված ուսանողների նախընտրություններով (որոշ համալսարաններ միաձուլվում են):

Հայաստանում անկախությունից ի վեր կյանքի սպասվող տևողության առումով արձանագրվում է աճի միտում, ինչը կարելի է բացատրել առողջապահության ոլորտում կատարվող բարեփոխումներով և մարդկանց կյանքի որակի բարելավմամբ:

Պետք է նկատել, որ կտրուկ անկում է արձանագրվել 2020 թ.-ին՝ պայմանավորված համաճարակով և պատերազմով<sup>111</sup>:

<sup>110</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները՝ հիմնվելով ԱՎԿ տվյալների վրա:

<sup>111</sup> Ցուցանիշի հաշվարկման հիմքում տվյալ տարիքի անձի ապելյո տարիների քանակն է՝ ըստ պատմական տվյալների: Հաշվի առնելով պատմական տվյալների ազդեցությունը՝ անկանոնությունները (ինչպես, օրինակ, պատերազմի հետևանքով մեծաքանակ երիտասարդների կորուստը) նվազեցնում են կյանքի սպասվող տևողությունը:




**Գծապատկեր 2.1.12**

*Բնակչության 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և կյանքի սպասվող տնտեսական աճի արագացումը, 2000-2021 թթ.<sup>112</sup>*

Գծապատկեր 2.1.12-ում ներկայացված տվյալները վկայում են, որ առկա է կախվածություն բնակչության կյանքի սպասվող տնտեսական աճի արագացումից և 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ ցուցանիշի միջև. նշված ցուցանիշների միջև կոռելյացիայի գործակիցը 0,76 է, ինչը ևս հավաստում է առկա կախվածության մասին: Առկա կապը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ երբ բնակչության 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ավելանում է, գոյանում են դրամական միջոցներ, որոնք կարելի է ուղղել բժշկական ապահովագրության հարցերի լուծմանը:

Խնայողությունները կարևոր նշանակություն ունեն երկրում տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացման գործում: Դիտարկվող ժամանակաշրջանում խնայողություններ/ՀՆԱ ցուցանիշի առաջին մեծ անկումը գրանցվել է հենց 2009 թ.-ին, երբ արձանագրվել է նաև ՀՆԱ աճի տեմպի ամենամեծ անկումը:


<sup>112</sup> Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի և Համաշխարհային բանկի տվյալների, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb> և <https://data.worldbank.org/indicator/SP.DYN.LE00.IN?end=2021&locations=AM&start=2000>



**Գծապատկեր 2.1.13**

*Սպառողական գների ինդեքսը, ինսպորտություններ/ ՀՆԱ ցուցանիշը և ՀՆԱ աճի արեւելքը, 2000-2022 թթ.<sup>113</sup>*

Ըստ ՄԱԿ-ի գնահատումների՝ հետազոտությունների և զարգացումների (Research and Development) ֆինանսավորումը Հայաստանում չի գերազանցել ՀՆԱ 0.3%-ը:



**Գծապատկեր 2.1.14**

*Հերազոտությունների և զարգացումների ֆինանսավորման ծախսերի կշիռը ՀՆԱ նկատմամբ <sup>114</sup>*

<sup>113</sup> Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի և Համաշխարհային բանկի տվյալների, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb> և <https://data.worldbank.org/indicator/NY.GNS.ICTR.ZS>

<sup>114</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները՝ հիմնվելով Համաշխարհային բանկի տվյալների բազայի վրա:

Համեմատության համար նույն ցուցանիշը ցածր եկամուտ ունեցող երկրներում միջինում կազմում է 0.58%, միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 1.73%, բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 2.59%, իսկ, ասենք, Իսրայելում՝ 4.95%<sup>115</sup>:

Պետք է նշել, որ պետությունը կառավարության ծրագրերում մշտապես ընդգծել է գիտատեխնիկական զարգացման և նորարարության դերը: Վերջին շրջանում պետական համակարգի կողմից որոշակի քայլեր են կատարվում նաև ֆինանսավորման խնդրի լուծման ուղղությամբ, առավելապես՝ գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացման տեսքով: Դրա հիմքում նորարարության միջոցով տարբեր ասպարեզներում խնդիրների լուծումների որոնումն է, ինչը բազմիցս շեշտվում է կառավարության 2021-2026 թթ. ծրագրում<sup>116</sup>: Նման ուղղություններից են՝

- ներդրումները («Ներդրումային քաղաքականության առաջնահերթ թիրախը նորարարական, նոր գիտելիք ստեղծող ծրագրերի իրագործման համար առավել արագ և ճկուն գործընթացների<sup>117</sup>...»),
- տնտեսության ռիսկերի չեզոքացումը («Նորարարական աջակցության գործիքակազմի միջոցով չեզոքացվելու են տնտեսությունում առկա ռիսկերը՝ տնտեսական բարդությունն ապահովող ներդրումային ծրագրերի համար<sup>118</sup>»),
- էներգետիկայի ոլորտը («...շարունակական ծրագրեր են իրականացվելու գիտելիքահենք և խելացի էներգետիկա ունենալու համար՝ աջակցելով կրթական նոր ծրագրերի, նոր հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը<sup>119</sup>»),
- արտահանումը («միջազգային մրցունակության ավելացման ուղին է լինելու արտահանմանը միտված, գիտելիքահենք և ներառական տնտեսության ձևավորումը<sup>120</sup>»),
- աղքատությունը («մարդու ստեղծարար հմտությունների զարգացման և իրացման միջոցով միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը<sup>121</sup>»):

<sup>115</sup> Համաշխարհային բանկի տվյալների բազա, հասանելի է՝ <http://wdi.worldbank.org/table/5.13#>, հիմնված է ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (UNESCO) տվյալների վրա, հասանելի է՝ <http://data.uis.unesco.org/> (վերջին մուտքը՝ 21.01.2022 թ.)

<sup>116</sup> ՀՀ կառավարության որոշում՝ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին՝ ընդունված 2021 թվականի օգոստոսի 26-ին, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 ծրագիր», հավելված, <https://www.gov.am/am/gov-program/> (վերջին մուտքը՝ 25.11.2021 թ.):

<sup>117</sup> Նույն տեղում՝ էջ 25:

<sup>118</sup> Նույն տեղում՝ էջ 26:

<sup>119</sup> Նույն տեղում՝ էջ 55:


<sup>120</sup> Նույն տեղում՝ էջ 23:

<sup>121</sup> Նույն տեղում՝ էջ 23:

**Ինստիտուցիոնալ կարողություններ:** Ինստիտուցիոնալ խնդիրների առկայության հանգամանքն ակներև դարձավ հատկապես 2020 թ., երբ կորոնավիրուսային համավարակի և արցախյան պատերազմի հետևանքով երկիրը կանգնեց լքազույն խնդիրների առաջ: Այս իրավիճակում ինստիտուցիոնալ խորքային վերլուծության միջոցով պետական և տնտեսական հատվածում առկա խոչընդոտները վեր հանելու և վերանայումներ իրականացնելու կարևորության մասին նշված է նաև ՀՀ կառավարության գործունեության 2021-2026 թթ. ծրագրում<sup>122</sup>:

Հայաստանում ինստիտուցիոնալ համակարգերը ձևավորվել են Խորհրդային Միության ոչ ֆորմալ համակարգի և որոշակիորեն ֆորմալ կանոնների հիմքի վրա, ինչը ունեցել է թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր: Ինստիտուցիոնալ և պետական կառավարման մի շարք մարտահրավերներից զուգահեռ, Հայաստանում, ինչպես ԱՊՀ այլ երկրներում, ինստիտուցիոնալ միջավայրի կայացման գործընթացը երկարել է՝ պայմանավորված պատերազմով կամ քաղաքական անկայունությամբ:

Ինստիտուտների գնահատման համար օգտագործվում է պետական կառավարման որակի հետևյալ վեց ցուցանիշը՝ իշխանությունների հաշվետվողականություն և բնակչության ձայնի իրավունք, քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, կառավարության արդյունավետություն, կարգավորման որակ, իրավունքի գերակայություն, կոռուպցիայի վերահսկողություն:



**Գծապատկեր 2.1.15**

*Ինստիտուցիոնալ որակի ցուցանիշների ամփոփ պատկերը Հայաստանում, 2000, 2010, 2021 թվականներ<sup>123</sup>*


<sup>122</sup> ՀՀ կառավարության որոշում՝ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին՝ ընդունված 2021 թվականի օգոստոսի 26-ին, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 ծրագիր» հավելված, <https://www.gov.am/am/gov-program/> (վերջին մուտքը՝ 25.11.2021 թ.)

<sup>123</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները՝ հիմնվելով Համաշխարհային բանկի պետական կառավարման որակի ցուցանիշների վրա (WB WGI), հասանելի է՝ <https://info.worldbank.org/governance/wgi/Home/Reports> (վերջին մուտքը՝ 21.01.2022 թ.):

Հայաստանը հետխորհրդային շրջանում ունեցել է ինստիտուցիոնալ համակարգի՝ միմյանց հետ բավական մոտ դիրքում գտնվող բաղադրիչներ: Հաջորդող 24 տարիներից առաջին կեսի ընթացքում՝ մինչև 2010 թվականը, ավելի արագորեն զարգացել է կարգավորման որակը, մինչդեռ իրավունքի գերակայության ասպարեզում արձանագրվել է անկում, այլ կերպ ասած՝ քաղաքականությունների և իրավական ակտերի որակը բարելավվել է, սակայն դրանց կիրառությունը նվազել՝ գուցե հենց պայմանավորված նոր՝ ավելի որակյալ նորմերի և ոչ ֆորմալ ինստիտուտների հակադրությամբ: Նվազել է նաև հաշվետվողականության և ձայնի իրավունքի ցուցանիշը:

Երկրորդ տասներկուամյա ժամանակահատվածի (2011-2021 թթ.) առաջին կեսին անկում արձանագրած ինստիտուտները՝ հաշվետվողականությունը և ձայնի իրավունքը, իրավունքի գերակայությունը, արձանագրել են որակի բարելավում: Դա նկատելի է հատկապես 2018 թվականից հետո՝ կապված, հավանաբար, նոր իշխանությունների կողմից ավելի թույլ օղակների հետ կատարվող աշխատանքի հետ:

Քանակական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարևան համադրելի երկրների համեմատ անկախությանը հաջորդած փուլում Հայաստանն ինստիտուցիոնալ միջավայրի որակով եղել է առաջատար, մինչդեռ այսօր Վրաստանն ունի ավելի որակյալ ինստիտուցիոնալ միջավայր, իսկ Ադրբեջանն արձանագրել է կտրուկ բարելավում մի շարք ինստիտուտների որակի առումով:




**Գծապատկեր 2.1.16**

ՀՀ պետական բյուջեի եկամուտները, 2000-2022 թթ.<sup>124</sup>

<sup>124</sup> Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, ֆինանսների նախարարության և Համաշխարհային բանկի տվյալների, <https://www.armstat.am/am/?mid=81>, [https://www.minfin.am/hy/page/\\_hy\\_chart\\_/](https://www.minfin.am/hy/page/_hy_chart_/) <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2022&locations=AM&start=2000>

Պետական բյուջեի ձևավորման և բաշխման գործընթացի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ վերջինս պարունակում է մակրոտնտեսական կարգավորման այնպիսի կառուցակարգեր, որոնք ուղղակիորեն կարող են խթանել կամ զսպել երկրում տնտեսական աճի տեմպերը, ինչով էլ պայմանավորված՝ պետական բյուջեի ուսումնասիրությունն առանձնակի կերպով կարևորվում է: ՀՀ պետական բյուջեի եկամուտների գերակշիռ մասը՝ 2000-2022 թթ. ընթացքում՝ 77,9%-96,9%-ը, կազմել են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ պետական քաղաքականության տարբեր ուղղություններում ընդգծելով հարկային քաղաքականության դերն ու նշանակությունը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում պետական բյուջեի եկամուտները մինչև 2009 թ. աճել են: Այնուհետև 2009 թ.-ին, նախորդ տարվա համեմատությամբ, գրանցվել է շուրջ 12% անկում: 2009 թվականին ՀՀ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով, նկատվել է տնտեսական անկում: ՀՀ առևտրի շրջանառությունը նվազել է 6,2%-ով, իսկ գործազրկության մակարդակն ավելացել 2,3 տոկոսային կետով<sup>125</sup>, ինչի ուղղակի ազդեցությունը նկատելի է պետական բյուջեի եկամուտների կատարողականում:



**Գծապատկեր 2.1.17**

*ՀՀ պետական պարտքը և պետական բյուջեի դեֆիցիտը (պրոֆիցիտը), 2001-2022 թթ.<sup>126</sup>*

<sup>125</sup> Ցուցանիշները հաշվարկել են հեղինակներն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>

<sup>126</sup> Ըստ ՀՀ Ֆինանսների նախարարության տվյալների, [https://www.minfin.am/hy/page/\\_hy\\_chart/](https://www.minfin.am/hy/page/_hy_chart/)

Պետական բյուջեի եկամուտների հաջորդ անկումը գրանցվել է արդեն 2020 թվականին՝ պայմանավորված COVID-19 համավարակով և արցախա-ադրբեջանական պատերազմով: Հավաքագրված եկամուտների ցածր մակարդակը պայմանավորված է ոչ միայն տնտեսության անկմամբ, այլև այդ անկումը մեղմելու, համավարակի և պատերազմի բացասական արդյունքները չեզոքացնելու համար կառավարության կողմից տրվող արտոնություններով: Խոսելով պետական բյուջեի եկամուտների մակարդակի վրա ազդեցության դրական գործոններից՝ նշենք, որ դրանք կապված են ինչպես տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման, հարկային օրենսդրության բարելավման, այնպես էլ գնաճային գործոնների հետ:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի շարժընթացում կրկին առանձնա-նում են 2009 և 2020 թվականները՝ պակասուրդի կտրուկ ավելացումով, ինչը պայմանավորող գործոններն ուղղակիորեն կապված են ճգնաժամային իրա-վիճակների հետ: 2015-2017 թթ. ընթացքում պակասուրդի ավելացումը հիմնա-կանում պայմանավորված է եղել եկամուտների նկատմամբ ծախսերի առա-վել բարձր կատարողականով և ստացված արտաքին վարկերի մեծ ծավալով, որոնց նպատակը ճգնաժամի թողած բացասական հետևանքների մեղմումն էր: Պետական պարտքի կառուցվածքում ամենամեծ կշիռն ունի արտաքին պետական պարտքը, ինչը բացասաբար կարող է ազդել երկրում տնտեսա-կան կայունության վրա արտարժույթի փոխարժեքների տատանումների փու-լում: Փոխարժեքների տատանումների նկատմամբ պարտքի զգայնությունը մեղմելու համար ՀՀ կառավարությունն իր ծրագրում նախատեսել է ֆինան-սավորման պահանջը բավարարել առավելապես դրամով արտահայտված փոխառությունների միջոցով, թիրախավորվել է նաև մինչև 2026 թվականը հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25 տոկոսի<sup>127</sup>: Ուսում-նասիրելով ՀՀ կառավարության տարբեր տարիների ծրագրերում գետեղված գերակայությունները՝ նկատելի է, որ մինչև 2009 թվականը՝ ՀՀ կառավարու-թյան ծրագրերում ամփոփված են տնտեսական աճի հայեցակարգերը, սա-կայն ճգնաժամից հետո շեշտադրվել է տնտեսական զարգացման հայեցա-կարգի կարևորությունը, քանի որ ճգնաժամային իրավիճակում ակնհայտ է դարձել, որ միայն տնտեսական աճի բարձր տեմպերը բավարար չեն երկրում մրցունակ տնտեսություն կառուցելու համար: Ասվածով պայմանավորված՝ կառավարության կողմից իրականացվող միջոցառումներում մեծ տեսակա-րար կշիռ ունեն արտահանող ճյուղերին և ՏՏ ոլորտին տրամադրվող աջակ-ցությունները:

<sup>127</sup> «ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր», ՀՀ կառավարության 18.08.2021 թ. N1363-Ս որոշում, էջ 94-95:



## 2.2

### Արտաքին գործոնների ազդեցությունը տնտեսական աճի վրա և տնտեսական աճի վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը պետական եկամուտների վրա

Համաձայն թեմային առնչվող գրականության ուսումնասիրության՝ կարելի է ասել, որ արտաքին աշխարհից փոխանցվող ցնցումներն էական և նշանակալի ազդեցություն ունեն զարգացող երկրների տնտեսական զարգացումների վրա: Հայաստանը, նույնպես լինելով փոքր բաց տնտեսություն, իր վրա ուղղակի կամ անուղղակի կերպով կրում է արտաքին գործոնների ազդեցությունը:

Այս վերլուծությունը թույլ է տվել գնահատել արտաքին գործոնների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի և հարկային եկամուտների վրա: Որպես հիմնական արտաքին ցնցումներ՝ դիտարկվել են արտաքին պահանջարկի, առաջարկի և դրամավարկային քաղաքականության ցնցումները, իսկ որպես վերոնշյալ ցնցումների հիմնական փոխանցումային ուղիներ՝ հետևյալ ցուցանիշները՝ դրամական փոխանցումներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, արտաքին առևտուր (արտահանում կամ ներմուծում), փոխարժեք:

Գնահատման համար կառուցվել է կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիվ մոդել, որի ընդհանուր տեսքը հետևյալն է.

$$AY_t = A_1^S Y_{t-1} + \dots + A_p^S Y_{t-p} + B \varepsilon_t, \quad (1)$$

որտեղ՝  $Y_t$ -ն էնդոգեն (ներծին) փոփոխականների վեկտորն է,

$p$ -ն՝ լագերի քանակը,

$A_i^S$ , ( $i = 1, \dots, p$ )-ն՝ գործակիցների մատրիցը,

$\varepsilon_t$ -ն՝ կառուցվածքային ցնցումների վեկտորը:

$A$  մատրիցը ( $K \times K$ ) չափանի տրանսպոնացվող մատրից է, որի տարրերը ներկայացնում են փոփոխականների միջև միաժամանակյա փոխազդեցությունները: Կառուցվածքային շոկերը կարող են իդենտիֆիկացվել (նույնակալացվել) ըստ կրճատված տեսքով մոդելի սխալների՝ համապատասխան քանակի սահմանափակումների առկայության պարագայում:  $\varepsilon_t$ -ն «սպիտակ աղմուկ» գործընթաց է՝ 0-ական միջինով և հաստատուն դիսպերսիայով<sup>128</sup>:

Մոդելի կրճատված վեկտորի ավտոռեգրեսիվ տեսքը (reduced form VAR) ստացվում է՝ հավասարման երկու մասերը բազմապատկելով  $A^{-1}$  մատրիցով.

$$Y_t = A^{-1} A_1^S Y_{t-1} + \dots + A^{-1} A_p^S Y_{t-p} + A^{-1} B \varepsilon_t = A_1 Y_{t-1} + \dots + A_p Y_{t-p} + u_t \quad (2)$$

<sup>128</sup> Nakahira K. "A structural VAR analysis of the monetary policy stance in Japan". International Journal of Economic Policy Studies. 2009. pp. 77-103.

որտեղ կրճատված տեսքի մատրիցներն են՝

$$A_i = A^{-1}A_i^S, \quad (i = 1, \dots, p): \tag{3}$$

Իսկ սխալների կրճատված ձևի կառուցվածքային տեսքը կլինի հետևյալը՝

$$\begin{aligned} u_t &= A^{-1}B\varepsilon_t = S\varepsilon_t \\ E(u_t u_t') &= \Sigma_u = A^{-1}BBA^{-1} = SS \\ S &= A^{-1}B \end{aligned} \tag{4}$$

**Աղյուսակ 2.2.1**

**Մոդելում ներառված փոփոխականները\***

Ցուցանիշ	Նշանակում	Ներառված ժամանակահատված	Աղբյուր
ԱՄՆ-ի կարճաժամկետ փոկուսադրույթ	US_RATES	2004-2022 թ. Եռամսյակային	ԱՄՆ Դաշնային պահուստի վիճակագրություն
Նավթի գներ - աճի ինդեքս	OIL_GR	2004-2022 թ. Եռամսյակային	ԱՄՆ Դաշնային պահուստի վիճակագրություն
ՌԴ ՀՆԱ աճ	RUS_GDP_GR	2004-2022 թ. Եռամսյակային	ԵԱՏՄ պաշտոնական վիճակագրություն
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ - աճի ինդեքս	FDI_GR	2004-2022 թ. Եռամսյակային	ՀՀ Վիճակագրական կոմիտե
Դրամական փոխանցումներ - աճի ինդեքս	REMITTANCES_GR	2004-2022 թ. Եռամսյակային	ՀՀ ԿԲ
Արտահանում - աճի ինդեքս	EXPORTS_GR	2004-2022 թ. Եռամսյակային	ՀՀ Վիճակագրական կոմիտե
Դրամ/ դոլար փոխարժեք - աճի ինդեքս	AMDUSD	2004-2022 թ. Եռամսյակային	ՀՀ ԿԲ
ՀՀ ՀՆԱ աճ	GDP_GR_ARM	2004-2022 թ. Եռամսյակային	ՀՀ Վիճակագրական կոմիտե
ՀՀ հարկային եկամուտներ - աճի ինդեքս	TAXGR	2004-2022 թ. Եռամսյակային	ՀՀ Վիճակագրական կոմիտե

\*Աղյուսակը կազմել են հեղինակները:

Բոլոր փոփոխականները ներկայացված են աճի ինդեքսների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս շարքերը մաքրելու սեզոնայնությունից և ապահովելու ստացիոնարություն: Մոդելում բոլոր փոփոխականներն էնդոգեն են, սակայն լազային փոխազդեցության մատրիցների մեջ սահմանափակումներ են կիրառվել՝ ՀՀ ներքին փոփոխականներից արտաքին փոփոխա-

կանների վրա ազդեցությունը բացատրելու նպատակով: Լագերի քանակությունն ընտրվել է՝ հիմնվելով տեղեկատվական չափանիշների, մասնավորապես՝ Շվարցի և Հանան-Քուինի վրա: Ըստ վերոնշյալի՝ մոդելում ընդգրկվել է փոփոխականների մեկ լագ:

**Աղյուսակ 2.2.2**

**Լագերի օպտիմալ քանակի ընտրության թեստի արդյունքները**

VAR Lag Order Selection Criteria  
 Endogenous variables: US\_RATES OIL\_PRICE RUS\_GDP FDI REMMITANCES EXPORT EXCH\_RATE ARM\_GDP TAXES  
 Exogenous variables: C  
 Included observations: 67

Lag	LogL**	LR	FPE	AIC	SC	HQ
0	-2318.621	NA	1.21e+19	69.48122	69.77737	69.59840
1	-1993.446	553.2824	8.44e+15	62.19242	65.15394*	63.36430*
2	-1905.579	125.8987	7.78e+15	61.98744	67.61434	64.21402
3	-1803.148	119.2480	5.80e+15	61.34771	69.63998	64.62898
4	-1684.461	106.2873*	4.02e+15	60.22271	71.18036	64.55868
5	-1529.660	97.03952	2.07e+15*	58.01969*	71.64271	63.41035


\* Indicates lag order selected by the criterion  
 LR: sequential modified LR test statistic (each test at 5% level)  
 FPE: Final prediction error  
 AIC: Akaike information criterion  
 SC: Schwarz information criterion  
 HQ: Hannan-Quinn information criterion

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

Գնահատված SVAR-ը կայուն է, եթե ավտոռեգրեսիայի բոլոր գործակիցների հակադարձ արմատները բացարձակ արժեքով փոքր են մեկից և, հետևաբար, միավորի շրջանակի մեջ են<sup>129</sup>: Կատարված թեստի արդյունքները ցույց են տալիս, որ բավարարված է կայունության ապահովման պայմանը, քանի որ ոչ մի արմատ միավոր շրջանակից դուրս չէ (գծապատկեր 2.2.1):

<sup>129</sup> Lütkepohl H. “New introduction to multiple time series analysis”. Springer Science & Business Media. 2005. 764 pages.

### Inverse Roots of AR Characteristic Polynomial




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

#### Գծապատկեր 2.2.1

#### *Մոդելի կայունության ստուգման թեստի արդյունքները*

Մոդելի գնահատման արդյունքում ուսումնասիրվել են փոխանցումային կառուցակարգերը, որոնց միջոցով արտաքին ցնցումներն ազդում են Հայաստանի ՀՆԱ աճի տեմպի և հարկային եկամուտների աճի վրա: Վերլուծվել են իմպուլս-արձագանքման ֆունկցիաները և սխալի վարիացիայի բաշխումները՝ բացահայտելու հիմնական ցնցումները, դրանց ազդեցությունները ներքին փոփոխականների վրա և այն ուղիները, որոնց միջոցով այդ ազդեցությունները փոխանցվում են:

Գծապատկեր 2.2.2-ում ներկայացված են ներքին փոփոխականների արձագանքման ֆունկցիաները ԱՄՆ-ի կարճաժամկետ տոկոսադրույքի շոկի առնչությամբ:




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

**Գծապատկեր 2.2.2**

*Ներքին փոփոխականների արձագանքն ԱՄՆ-ի կարճաժամկետ տոկոսադրույքի շոկին*

ԱՄՆ-ի դաշնային պահուստի կողմից սահմանված կարճաժամկետ տոկոսադրույքները կարող են անուղղակիորեն ազդել փոքր բաց տնտեսություններում դրամական հոսքերի վրա՝ պայմանավորված ինչպես ընդունող (որտեղից ստացվում են դրամական փոխանցումները), այնպես էլ ստացող (որտեղ փոխանցումները ստացվում են) երկրի տնտեսական իրավիճակով, ինչպես նաև փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխություններով: Գծապատկեր 2.2.2-ը մատնանշում է տրանսֆերտների աճի դրական արձագանքը ԱՄՆ-ի տոկոսադրույքների շոկին: Սկսած 2004 թ.-ից մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ ԱՄՆ-ի դաշնային պահուստի կարճաժամկետ տոկոսադրույքը տարեցտարի շարունակաբար բարձրացել է, ինչը զուգորդվել է դրամական փոխանցումների աճով դեպի ՀՀ: Գծապատկեր 2.2.3-ում ներկայացված է վերջին տարիներին ՀՀ և ԱՄՆ-ի կարճաժամկետ տոկոսադրույքների շարժընթացը: Նկատելի է, որ ԱՄՆ-ի դաշնային պահուստի կողմից կարճաժամկետ տոկոսադրույքի բարձրացումն ուղեկցվել է մեր երկրի ԿԲ-ի կողմից տոկոսադրույքի բարձրացմամբ՝ զսպելու համար կապիտալի արտահոսքը երկրից: Ներքին տոկոսադրույքների բարձրացման ավելի մեծ տեմպը կարող է նպաստել արտաքին դրամավարկային շոկի նկատմամբ փոխարժեքի նման արձագանքին (ըստ գծապատկեր 2.2.2-ի՝ դրամն արժևորվում է դոլարի նկատմամբ): Սա խոսում է այն մասին, որ գոյություն ունի անուղղակի կապ վերոնշյալ դրամական փոխանցումների և ԱՄՆ-ի կարճաժամկետ տոկոսադրույքի միջև, որը հնարավոր է ԱՄՆ-ում

բարելավված տնտեսական պայմանների և հայ աշխատողների համար ավելի բարձր եկամտի, ԱՄՆ-ի շուկայում ակտիվների արժեզրկման ռիսկերի մեծացման և հետևաբար՝ միջոցների արտահոսքի, ՀՀ ԿԲ արձագանքի և այլ պատճառներով:



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ և ԱՄՆ-ի դաշնային պահուստի վիճակագրություն:

**Գծապատկեր 2.2.3**

*ԱՄՆ-ի կարճաժամկետ և ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքների շարժընթացը*

Իմպուլս-արձագանքման ֆունկցիան ցույց է տալիս Հայաստանի արտահանման աճի դրական արձագանքն ԱՄՆ-ի տոկոսադրույքների շուկին: Սա համընկնում է այն ընդհանուր պատկերացման հետ, որ եթե ԱՄՆ-ի բարձր տոկոսադրույքները պահանջարկի աճի հետևանք են, ապա կհանգեցնեն ԱՄՆ-ի ավելի ուժեղ տնտեսության և հայկական արտահանման պահանջարկի ավելացմանը: Նկատելի է, որ փոխարժեքի արժևորմանը զուգահեռ, թուլանում է նաև արտահանման տեմպը:


Գծապատկեր 2.2.3-ից պարզ է դառնում, որ ՀՆԱ-ն դրականորեն է արձագանքում ԱՄՆ-ի տոկոսադրույքների շուկին: Նկատելի է, որ շուկը տնտեսական աճին է փոխանցվում տրանսֆերտների և արտահանման աճի միջոցով: Վերջիններիս ազդեցությամբ պայմանավորված՝ փոխարժեքն արժևորվում է՝ նպաստելով արտահանման և ՀՆԱ աճի տեմպի հետագա դանդաղեցմանը:

ՕՌԻՆ-ի սկզբնական արձագանքը դրական է, սակայն դա արագ կերպով վերափոխվում է և, 2-րդ եռամսյակից սկսած, դառնում բացասական արտաքին դրամավարկային քաղաքականության շուկի նկատմամբ:

ԱՄՆ-ի բարձր տոկոսադրույքները կարող են նպաստել ՀՀ կառավարության հարկային եկամուտների ավելացմանը՝ ՀՆԱ, դրամական փոխանցում-

ների և արտահանման փոխանցումային կառուցակարգերի միջոցով:

Հաջորդիվ ներկայացված է ներքին փոփոխականների արձագանքը նավթի գնի հետ կապված շոկին:



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

#### Գծապատկեր 2.2.4

*Ներքին փոփոխականների արձագանքը նավթի գնի շոկին (ՕՈՒՆ-ի արձագանք - աջ ստանդը)*

Գծապատկեր 2.2.4-ում ներկայացված ՕՈՒՆ-ի դրական արձագանքը նավթի գնի շոկին վկայում է այն մասին, որ կարճաժամկետում նավթի ավելի բարձր գինը նպաստում է դեպի ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելացմանը: Սա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերն այս ոլորտում Ռուսաստանի Դաշնությունն է<sup>130</sup>, որը համաշխարհային նավթ արդյունահանող երկրներից է, և նավթի գնի աճն ուղղակիորեն իր ազդեցությունն է ունենում վերջինիս եկամուտների աճի վրա՝ մեծացնելով Հայաստանում կատարվող ներդրումները: Այնուամենայնիվ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում այս գործոնի ազդեցությունը թուլանում է և իր առավելագույն մակարդակին է հասնում 3-րդ եռամսյակում, որից հետո աստիճանաբար նվազում է:

Դրամական փոխանցումները նույնպես դրականորեն են արձագանքում նավթի գնի շոկին: Սա վկայում է այն մասին, որ նավթի ավելի բարձր գինը խթանում է դրամական փոխանցումները դեպի Հայաստան, ինչը պայմանավորված է տնտեսական պայմանների բարելավմամբ նավթ արտահանող երկրներում, որտեղ աշխատում են հայ միգրանտները (մասնավորապես՝ ՌԴ

<sup>130</sup> Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թվականին արտահանման մոտ 45.5, իսկ ներմուծման մոտ 30 տոկոսը բաժին է ընկնում ՌԴ-ին: 2023 թվականի տվյալներով, դեպի ՌԴ արտահանումն աճել է 7.1 տոկոսային կետով:

տնտեսական աճի և նավթի գնի միջև գոյություն ունի ակնհայտ դրական կոռելյացիա): Այսպես՝ կոռելյացիայի գործակիցը ՌԴ տնտեսական աճի և նավթի գնի միջև կազմում է 0.62<sup>131</sup>, ինչն ակնհայտորեն հավաստում է դիտարկվող գործոնների միջև գոյություն ունեցող դրական գծային կապի մասին, երբ մեկի բարձրացումն անկասկած հանգեցնում է մյուսի՝ դեպի վեր տեղաշարժին: Հավելենք նաև, որ դրական արձագանքը ժամանակի ընթացքում համեմատաբար պահպանվում է:

Իմպուլս-արձագանքման ֆունկցիան մատնանշում է Հայաստանի արտահանման աճի դրական արձագանքը նավթի գնի շոկին: Արձագանքից հետևում է, որ նավթի գնի բարձրացումը հանգեցնում է արտահանման մրցունակության բարելավմանը կամ հայկական արտահանման պահանջարկի ավելացմանը: ՀՀ արտահանման ծավալի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում հանքահումքային արտադրատեսակները, որոնց գներն ունեն դրական կոռելյացիա նավթի գնի հետ, ինչի շնորհիվ՝ ՀՀ-ում նավթի գների դրական շոկը հանգեցնում է արտահանման ծավալի մեջ գերակշռող արտադրատեսակների գնի աճին, որն էլ, իր հերթին, բերում է համախառն եկամտի և ՀՆԱ դրական արձագանքին: Մասնավորապես, ըստ 2021 թ.-ի տվյալների, վերջինիս մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ կազմել է մոտ 32.6%, իսկ 2022 թ.-ին աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ՝ 104.1%<sup>132</sup>:

Նավթի գնի բարձրացումը հանգեցնում է հայկական դրամի արժևորմանը ԱՄՆ դոլարի նկատմամբ: Դա կարող է հիմնավորվել նավթի բարձր գնի ազդեցությամբ՝ պայմանավորված դեպի ՀՀ դրամական փոխանցումների, ՕՌԻՆ-ի և արտահանման ավելացմամբ, որոնցից յուրաքանչյուրը հանգեցնում է փոխարժեքի արժևորմանը:

Նավթի գնի բարձրացումը կարող է հանգեցնել Հայաստանի կառավարության հարկային եկամուտների ավելացմանը՝ արտահանվող հիմնական արտադրատեսակների գների բարձրացման, արտահանման, դրամական փոխանցումների և ՀՆԱ աճի ազդեցությամբ պայմանավորված: ՀՆԱ-ն նույնպես դրականորեն է արձագանքում նավթի գնի շոկին՝ արտահանման եկամուտների ավելացման, էներգետիկայի հետ կապված ոլորտներում ներդրումների, դրամական փոխանցումների և հարկային եկամուտների ավելացման և այլ գործոնների ազդեցությամբ պայմանավորված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեպի ՀՀ դրամական փոխանցումների մեծ մասի աղբյուրը, ինչպես նաև արտահանման գերակշիռ ուղղությունը Ռուսաստանի Դաշնությունն է<sup>133</sup>, ՀՀ-ում դրամական փոխանցումները և արտահանման ծավալները ունեն դրական կապ ՌԴ ՀՆԱ իրական աճի հետ, ինչի շնորհիվ՝ ՌԴ ՀՆԱ դրական շոկը փոխանցվում է ՀՀ տնտեսություն


<sup>131</sup> Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

<sup>132</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, սոցիալ-տնտեսական վիճակը ՀՀ-ում:

<sup>133</sup> ՀՀ ԿԲ արտաքին հատվածի վիճակագրություն:



(գծապատկեր 2.2.5): Մասնավորապես՝ ՌԴ ՀՆԱ իրական աճի և դեպի ՀՀ դրամական փոխանցումների աճի միջև կոռելյացիայի գործակիցը 0.7 է<sup>134</sup>, ինչը վկայում է վերջիններիս միջև գոյություն ունեցող ուղիղ համեմատական գծային կապի մասին: Շոկի արդյունքում ՀՀ ՀՆԱ-ն առավելագույն մակարդակի է հասնում 2-րդ եռամսյակում, որից հետո աստիճանաբար կայունանում է: Գծապատկեր 2.2.4-ից նկատելի է հարկային եկամուտների և դրամական փոխանցումների նմանատիպ արձագանքը՝ այն տարբերությամբ, որ հարկային եկամուտների դեպքում ազդեցությունն ավելի փոքր է: Դրանք շոկի արդյունքում արժևորվում է դոլարի նկատմամբ:



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

**Գծապատկեր 2.2.5**

*Ներքին փոփոխականների արձագանքը ՌԴ փոփոխական աճի շոկին (ՕՈՒՆ արձագանք – աջ առանցք)*


Ուսումնասիրելով ՀՀ և ՌԴ իրական ՀՆԱ աճի տեմպի փոփոխության շարժընթացը՝ կարող ենք հավաստել, որ ՌԴ տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններն անմիջական ազդեցություն են ունենում մեր երկրի տնտեսության վրա: Ըստ 2022 թ.-ի Համաշխարհային բանկի տվյալների՝ ՌԴ իրական ՀՆԱ անկումը կազմում է -2.1%, և կանխատեսվում է, որ հետագայում նույնպես դա շարունակվելու է: Ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների՝ վատագույն սցենարի դեպքում ՌԴ ՀՆԱ-ն կնվազի 2.5%-ով (ՏՀԶԿ) կամ 0.2%-ով: ՌԴ տնտեսության ոչ բարենպաստ իրավիճակը պայմանավոր-

<sup>134</sup> Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

ված է 2022 թ.-ի փետրվարին սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմով, որի հետևանքով հատկապես ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների կողմից կիրառվեցին մի շարք պատժամիջոցներ, որոնք, անշուշտ, բացասաբար են ազդում ՌԴ տնտեսության զարգացման վրա:

Հակառակ այս ամենի, ՀՀ-ում տնտեսությունը շարունակում է մեծ թափով աճ արձանագրել, որի մեջ մեծ ներդրում ունի նաև ՌԴ-ից արտահոսող և ՀՀ մտնող կապիտալը: Ըստ հաշվարկների՝ 2015-2019 թթ. ժամանակահատվածում ՌԴ-ից ՀՀ ուղղակի ներդրումների մասնաբաժինն ընդհանուրի մեջ կազմում էր միջինում 61%<sup>135</sup>, իսկ միայն 2022 թ.-ին՝ ՀՀ ընդհանուր ՕՌԻՆ-ի մոտ 73%-ը, որն անկասկած դրական էֆեկտ է ունեցել ՀՀ տնտեսության աճի վրա: Դրամական փոխանցումների առումով նույնպես ՌԴ-ն ունի գերակշիռ դիրք. 2022 թվականին դրանք կազմել են մոտ 69%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով մոտ 28 տոկոսային կետով<sup>136</sup>:

Հաջորդիվ ներկայացված են ՀՆԱ և հարկային եկամուտների արձագանքները ներքին փոփոխականների շուկերին:



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

**Գծապատկեր 2.2.6**

**ՀՆԱ արձագանքը ներքին փոփոխականների շուկերին**

<sup>135</sup> Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

<sup>136</sup> ՀՀ ԿԲ արտաքին հատվածի վիճակագրություն:


Իմպուլս արձագանքման ֆունկցիաներից կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի վրա արտաքին գործոններից փոխանցվող ցնցումները հիմնականում տարածվում են դրամական փոխանցումների, արտահանման և հարկային եկամուտների լծակների միջոցով: Դիտարկված մոդելի արդյունքների համաձայն՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների դրական և փոխարժեքի արժեզրկման ցնցումները շատ թույլ ազդեցություն ունեն: Դրամական փոխանցումներն ունեն առավելապես կարճաժամկետ ազդեցություն՝ շուրջ մարում է 2-րդ եռամսյակից սկսած, իսկ արտահանման շուկա ունի համեմատաբար ավելի երկար ազդեցություն՝ մարում է մոտ 7 եռամսյակ անց: Գծապատկեր 2.2.6-ից պարզ է դառնում նաև այն հանգամանքը, որ, չնայած ՕՈՒՆ-ի դրական արձագանքին, այնուամենայնիվ, վերջինս զիջում է ինչպես դրամական փոխանցումներին, այնպես էլ արտահանմանը: Մրա գլխավոր պատճառներից մեկը ՕՈՒՆ-ի բաշխվածությունն է ըստ տնտեսական գործունեության տեսակների: Մասնավորապես, ըստ 2022 թ.-ի տվյալների, ՕՈՒՆ-ի հոսքերի զերակշիռ մասը՝ մոտ 58%-ը, բաժին է ընկել էլեկտրականության, գազի գոլորշու և լավորակ օդի մատակարարման ուղղություններին, որոնց տարեկան միջին աճի տեմպը 2013–2022 թվականներին կազմում է 0.9 տոկոս, իսկ ՀՆԱ-ի մեջ կշիռը՝ միջինում 3.7 տոկոս<sup>137</sup>: Հաջորդիվ մետաղական հանքաքարի արդյունահանման և հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության ուղղություններն են, համապատասխանաբար՝ 14.6% ու 6%, և այս պատկերը կրկնվում է նաև նախորդ տարիներին՝ տարբեր տատանումներով հանդերձ<sup>138</sup>: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ՕՈՒՆ-ի ներգրավումը ՀՀ-ում ունի չափազանց տատանողական բնույթ, ինչպես նաև ներդրումները հիմնականում կենտրոնացված են մի քանի ոչ արտադրողական, ինչպես նաև ցածր արդյունավետություն ունեցող ճյուղերում, իսկ մնացյալ ճյուղերում դրանց աճի կամ նվազման տեմպերը մտահոգիչ են:

Հարկային եկամուտների ազդեցությունը ՀՆԱ աճի վրա ազդում է 1 եռամսյակ ուշացումով՝ առավելագույն մակարդակին հասնելով 2-րդ եռամսյակում:

Գծապատկեր 2.2.7-ում ներկայացված է հարկային եկամուտների արձագանքը ներքին փոփոխականների շուկային: Նկատելի է, որ նշանակալի ազդեցություն ունեն ՀՆԱ և դրամական փոխանցումների դրական շուկայերը: Փոխարժեքի և ՕՈՒՆ-ի ազդեցությունը չեզոք է, իսկ արտահանումն ունի շատ թույլ արտահայտված դրական ազդեցություն:

<sup>137</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, հաշվարկները կատարել են հեղինակները:

<sup>138</sup> Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հաշվարկները կատարել են հեղինակները:



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

**Գծապատկեր 2.2.7**

*Հարկային եկամուտների արձագանքը ներքին փոփոխականների շուկերին*

Հաջորդիվ ներկայացված են ՀՆԱ և հարկային եկամուտների վարիացիայի բաշխումները:

Թե՛ ՀՆԱ, թե՛ հարկային եկամուտների վարիացիայի հիմնական շարժիչ ուժը նավթի գնի շոկն է, որն արտացոլում է նավթի գների կարևորությունը Հայաստանի տնտեսության մեջ: Ազդեցությունը տարածվում է մոտ 2 տարում՝ աճելով մինչև 25.6 տոկոս՝ ՀՆԱ-ի և 34.4 տոկոս՝ հարկային եկամուտների դեպքում:

Ռ-Դ ՀՆԱ շուկը մեծ ազդեցություն ունի ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ հարկային եկամուտների վարիացիայի վրա՝ արտացոլելով Հայաստանի և Ռուսաստանի միջև ամուր տնտեսական կապերը, թեև ՀՆԱ-ի վրա ազդեցությունն ավելի մեծ է՝ մոտ 12.3 տոկոս դիտարկված ժամանակաշրջանի վերջում և 7.1 տոկոս՝ հարկային եկամուտների դեպքում:

Արտաքին դրամավարկային քաղաքականության ցնցումն առավելապես մեծ ազդեցություն ունի ՀՆԱ-ի վրա՝ կրելով ՀՆԱ վարիացիայի մոտ 15 տոկոսը: Այս ազդեցությունը համեմատաբար փոքր է հարկային եկամուտների դեպքում՝ ժամանակաշրջանի վերջում կազմելով 8.7 տոկոս:

ՀՆԱ-ի դեպքում արտաքին ցնցումների համար հիմնական փոխանցումային կառուցակարգեր հանդիսացող դրամական փոխանցումները և արտահանումը առավելապես ունեն կարճաժամկետ ազդեցություն (միջնաժամկետում ազդեցությունը թուլանում է): Ժամանակաշրջանի սկզբում վերոնշյալ

գործոնները բացատրում են ՀՆԱ վարիացիայի համապատասխանաբար՝ 8.2 և 10.3, իսկ ժամանակաշրջանի վերջում՝ 4.2 և 7.7 տոկոսը:

**Աղյուսակ 2.2.3**

**ՀՀ ՀՆԱ և հարկային եկամուտների վարիացիայի բաշխումը**

ՀՀ ՀՆԱ ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ԲԱՇԽՈՒՄ										
Քաղաք	S.E.	ԱՄՆ կայք. փոխադրոյթի շուկ	Նավթի գնդերի շուկ	Ռ.Գ. ՀՆԱ շուկ	ՕՈՒՆ շուկ	Գրամ. փոխանց. շուկ	Արդյունաբերական շուկ	Փոխադրերի շուկ	ՀՀ ՀՆԱ շուկ	Հարկային եկամուտների շուկ
1	16.93	12.51	13.79	0.38	0.33	8.25	10.34	0.18	54.24	0.00
4	21.64	14.55	21.21	10.10	0.32	5.09	9.04	0.28	37.18	2.23
8	23.76	14.89	25.63	11.89	0.30	4.42	7.98	0.42	32.24	2.23
1	24.56	15.01	26.31	12.24	0.29	4.31	7.78	0.42	31.45	2.18
2										
1	24.75	15.16	26.35	12.32	0.29	4.29	7.74	0.42	31.27	2.17
6										
ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ԲԱՇԽՈՒՄ										
1	17.09	5.31	8.23	0.29	0.00	8.46	0.36	0.23	10.00	67.14
4	29.21	6.26	25.57	3.15	0.02	5.33	0.54	0.21	14.86	44.06
8	31.16	7.27	33.26	6.49	0.02	4.28	0.55	0.19	12.53	35.41
1	31.25	7.95	34.41	7.06	0.01	4.08	0.53	0.20	11.96	33.80
2										
1	31.26	8.33	34.45	7.14	0.01	4.04	0.53	0.19	11.85	33.46
6										

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

Հարկային եկամուտների դեպքում վարիացիայի բաշխման մոտ 12 տոկոսը բաժին է ընկնում ՀՆԱ-ին, իսկ դրամական փոխանցումներն այս դեպքում նույնպես ունեն ավելի ուժեղ կարճաժամկետ ազդեցություն՝ ժամանակաշրջանի սկզբում կրելով վարիացիայի մոտ 8.4 տոկոսը, իսկ ժամանակաշրջանի վերջում՝ մոտ 4 տոկոսը:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- Ինչպես նշվում է թե՛ տեսական և թե՛ փորձառական աշխատանքներում, օտարերկրյա ուղղակի ներդրումները տնտեսական աճի ապահովման հիմնական արտաքին գործոնն են: Սակայն, մեր կատարած վերլուծության արդյունքները մատնանշում են, որ ՕՈՒՆ-ի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա նշանակալի ազդեցություն չունի:
- ՀՀ տնտեսությունը չափազանց զգայուն է արտաքին առաջարկի, պահանջարկի և դրամավարկային ցնցումների նկատմամբ: Ըստ վարիա-

ցիայի բաշխման արդյունքների՝ վերոնշյալ 3 ցնցումները միասին բացատրում են ՀՆԱ վարիացիայի մոտ կեսը: Առաջարկի ցնցումը հատկապես գերիշխող ազդեցություն ունի ՀՆԱ-ի վրա: Արտաքին առաջարկի մեծ դերը կապված է առևտրային հաշվեկշռի կառուցվածքի և դրա մեջ ներմուծման մեծ մասնաբաժնի հետ:

- Նավթի գների շուկի նկատմամբ ՀՆԱ դրական արձագանքը հիմնականում պայմանավորված է արտահանման ավելացմամբ և նավթի առավել բարձր գների արդյունքում ՌԴ տնտեսական աճի արագացմամբ, որտեղից էլ դրական ազդեցությունները փոխանցվում են ՀՀ տնտեսության: Տնտեսության բազմազանեցման ցածր մակարդակը և արտահանման ոչ մեծ կշիռը ՀՆԱ աճը կախվածության մեջ են դնում որոշակի երկրների աճի ցնցումներից: ՌԴ տնտեսության զարգացումից կախվածությունը դրա լավագույն օրինակն է: Վերջինս նավթի գների տատանման ազդեցությունների հիմնական աղբյուրն է:
- Արտաքին ցնցումների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա տարածվում է հիմնականում դրամական փոխանցումների և առևտրի լծակների միջոցով: Արտաքին միջավայրում եկամուտների աճը հանգեցնում է դեպի ՀՀ դրամական հոսքերի ավելացմանը, ինչպես նաև մեծացնում արտահանման պահանջարկը: Արտաքին միջավայրում անկման միտումները բերում են դրամական փոխանցումների և արտահանման նվազում, որն էլ բացասաբար է ազդում ինչպես ներքին պահանջարկի, այնպես էլ ՀՆԱ աճի վրա: Փոխարժեքի լծակը, ըստ մոդելի գնահատման արդյունքների, ունի շատ թույլ ազդեցություն:
- ՕՈՒՆ-ի՝ եկամուտների և ՀՆԱ աճի վրա թույլ ազդեցության հիմնական պատճառներից են ոչ բազմազանեցված և քիչ արտադրողական ճյուղերում կատարված ներդրումները, ինչպես նաև դրանց տատանողական վարքագիծը և ոչ բավարար մակարդակը, որը ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ՀՆԱ-ի նկատմամբ միջինում կազմել է մոտ 3.2 տոկոս:
- Հարկային եկամուտները նույնպես չափազանց զգայուն են արտաքին ցնցումների նկատմամբ: Այս դեպքում ՕՈՒՆ-ի աճը ևս որևէ էական ազդեցություն չունի, փոխարենը՝ դրամական փոխանցումները նպաստում են հարկային եկամուտների աճին: Փոքր կշիռը, արդյունավետության ցածր մակարդակը նվազեցնում են ՕՈՒՆ-ի ազդեցությունը հարկային եկամուտների վրա: Բացի դրանից, ներքին գործոնների բարձր տատանողական բնույթը և կախվածությունն արտաքին շուկերից նվազեցնում են դրանց դերը՝ շեշտադրելով հիմնականում արտաքին գործոնների կարևորությունը:
- Հարկային եկամուտները բացատրում են ՀՆԱ վարիացիայի բավական փոքր մասը, իսկ ՀՆԱ-ն կրում է հարկային եկամուտների վա-

րիացիայի մոտ 14 տոկոսը, ինչից կարելի է եզրակացնել, որ հարկային եկամուտների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա ավելի թույլ է, քան հակառակ ազդեցությունը: Վերջինս թույլ է տալիս հարկային եկամուտների թույլ ազդեցությունը պայմանավորել այդ եկամուտների հետագա օգտագործման ցածր արդյունավետությամբ:

## 2.3

### Ներքին գործոնների ազդեցությունը տնտեսական աճի և պետական եկամուտների վրա

Տնտեսական աճը, որպես զարգացած տնտեսությունների առանցքային խնդիր, ենթակա է բազմաթիվ՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների ազդեցությանը: Տարբեր հեղինակներ իրենց աշխատանքներում լայնորեն ուսումնասիրել են արտաքին գործոնները, օրինակ՝ առևտրի շարժընթացը և օտարերկրյա ուղղակի ներդրումները, մինչդեռ առկա է մեծ հետազոտական բաց՝ կապված տնտեսական աճը բնութագրող ներքին գործոնների ուսումնասիրության հետ:

Այս հետազոտության առանցքում են ներքին գործոնները, որոնք գործնականում երկրի սահմաններից ներս են և գտնվում են նրա կողմից վարվող քաղաքականության թիրախում: Նման գործոնները ներառվում են այն ոլորտներում, որոնք կապված են ժողովրդագրության, հարկաբյուջետային քաղաքականության, ինստիտուցիոնալ որակի և այլնի հետ:

Վերլուծության նպատակն է նշված ներքին գործոնների համակարգված ուսումնասիրությունը, ինչի շրջանակում կատարված բացահայտումների նշանակությունը տնտեսական գրականության մեջ ավելի է ընդգծվում՝ հաշվի առնելով ներքին գործոնների վերաբերյալ ամբողջական դիտարկումների սակավությունը:

Տնտեսական աճը, որպես համընդհանուր ցանկալի արդյունք, կրում է բազմաթիվ և բազմաբնույթ գործոնների ազդեցությունը: Չնայած տնտեսական աճի և նրա վրա ազդող գործոնների վերաբերյալ առկա են բազմաթիվ հետազոտություններ, ներքին և արտաքին գործոնների հարաբերական կարևորության հարցը շարունակում է վիճելի մնալ: Այս ուսումնասիրությունը նպատակ ունի ավելի լավ հետազոտելու առկա տարակարծությունները՝ օգտագործելով նշված հիպոթեզերը (վարկածները)։

**Հիպոթեզ 1 (H1):** Ներքին գործոնները և ՀՆԱ աճը: Առաջին հիպոթեզի համաձայն՝ ներքին գործոնները նշանակալիորեն ազդում են ՀՆԱ աճի վրա, թեև արտաքին գործոնները՝ առևտրի շարժընթացը, համաշխարհային տնտեսական իրավիճակը և աշխարհաքաղաքական իրադարձությունները, ան-

կասկած, ունեն որոշակի դեր երկրի տնտեսության կատարողականում: Փաստորեն, մենք ենթադրում ենք, որ ներքին գործոնները՝ կառավարման որակը, հարկաբյուջետային քաղաքականությունը և ժողովրդագրությունը, առանցքային են տնտեսական աճի ձևավորման գործում:

**Հիպոթեզ 2 (H2):** Հիմնական ներքին գործոնների բացահայտում: Այս հիպոթեզի շրջանակում, համակարգի ուսումնասիրության փոխարեն, ներքին գործոնները տարանջատվում են՝ ըստ տնտեսական աճի վրա ազդեցության աստիճանի:

**Հիպոթեզ 3 (H3):** Կարճաժամկետ սահմանափակումներ և երկարաժամկետ ազդեցություն: Ենթադրում ենք, որ կարճաժամկետում ներքին գործոնների ազդեցությունը ՀՆԱ աճի վրա սահմանափակված է: Սա հիմնված է այն մոտեցման վրա, որ կարճաժամկետ տնտեսական տատանումների բնույթը պայմանավորված է արտաքին շոկերով, ինչպիսիք են ապրանքների գների տատանումները, կապիտալի արտահոսքը կամ համաշխարհային տնտեսական անկումները: Այսպիսով՝ մինչ ներքին գործոնները հիմքեր են ստեղծում, արտաքին գործոնները գրանցում են արտահայտված կարճաժամկետ ազդեցություններ: Հակառակ նշված կարճաժամկետ ազդեցությանը, ենթադրում ենք, որ երկարաժամկետում ներքին գործոնների ազդեցությունն ուժգնանում է: Երկրի ինստիտուցիոնալ որակը, քաղաքականության հետևողականությունը և ներքին տնտեսական կառուցակարգերը, ի թիվս այլ գործոնների, հավանաբար, ավելի որոշիչ են, քանի որ դրանք ձևավորում են երկարաժամկետ տնտեսական աճ:

Մյուս բաժիններում, օգտագործելով էկոնոմետրիկական մեթոդներ, փորձել ենք պարզել այս հիպոթեզների ճշմարտացիության աստիճանը՝ որոշակի պարզություն հաղորդելով տնտեսական աճի շուրջ շարունակ ընթացող բանավեճերին: Հայաստանի Հանրապետության հետ համադրելի երկրների բացահայտման նպատակով որդեգրել ենք մի մեթոդաբանություն, որը կառուցված է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, մեկ շնչին բաժին ընկնող և շուկայական գներով արտահայտված ՀՆԱ-ի և բնակչության ցուցանիշների շուրջ: Ընտրվել են այնպիսի երկրներ, որոնց դեպքում նշված ցուցանիշների արժեքները Հայաստանի ցուցանիշների նկատմամբ [-100%, +100%] միջակայքում են: 20 շուկայից բաղկացած նախնական ցանկից չորսը բացառվել է տվյալների անբավարարության պատճառով:



**Աղյուսակ 2.3.1**

**Մոդելավորման մեջ դիտարկված երկրների ցանկը**

Երկիր	Հապավում	Տարածաշրջան
Բոտսվանա	BWA	Ենթասահարյան Աֆրիկա
Բոսնիա և Հերցեգովինա	BIH	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Գաբոն	GAB	Ենթասահարյան Աֆրիկա
Ճամայկա	JAM	Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան
Մավրիկիա	MUS	Ենթասահարյան Աֆրիկա
Մոնղոլիա	MNG	Արևելյան Ասիա և Խաղաղ օվկիանոս
Հյուսիսային Մակեդոնիա	MKD	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Ռուսաստանի Դաշնություն	RUS	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Ալբանիա	ALB	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Հայաստան	ARM	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Բելառուս	BLR	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Վրաստան	GEO	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Ղազախստան	KAZ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Ղրղզստանի Հանրապետություն	KGZ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Մոլդովա	MDA	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
Նամիբիա	NAM	Ենթասահարյան Աֆրիկա

Տվյալների համախումբն ընդգրկում է 2000-2022 թվականները՝ ներառելով այնպիսի ցուցիչներ, որոնք ներառված են գրականության ակնարկում առանձնացված 9 բաժնում՝ կրթություն (օրինակ՝ կրթությանն ուղղվող պետական ծախսերը՝ որպես ՀՆԱ տոկոս, դպրոցների ընդգրկվածության աստիճանը, տարրական դպրոցների մասնաբաժինն ընդհանուրում), մարդկային կապիտալ (օրինակ՝ մարդկային զարգացման ինդեքսը, ինտերնետից օգտվող անհատների կշիռն ընդհանուր բնակչության կազմում), ժողովրդագրություն (օրինակ՝ կյանքի սպասվող տևողությունը, կյանքի միջին տևողությունը, ուրբանիզացման մակարդակը), հարկաբյուջետային/կառավարության հատված (օրինակ՝ ընդհանուր կառավարության վերջնական սպառման ծախսերը ՀՆԱ կազմում, հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը), դրամավարկային քաղաքականություն (օրինակ՝ ընթացիկ հաշվի մնացորդը ՀՆԱ կազմում, բանկերի կողմից մասնավոր հատվածին տրամադրվող ներքին վարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ), աշխատանքի շուկա (օրինակ՝ ծառայությունների ոլորտում զբաղվածությունն ընդհանուր զբաղվածության նկատմամբ, գործազրկությունը), աշխարհագրություն (օրինակ՝ հարևան երկրների թիվը, քաղաքներում բնակչության խտությունն ըստ յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի), ինստիտուցիոնալ միջավայր (օրինակ՝ ձայնի և հաշվետվողականության իրավունքը, օրենքի գերակայությունը), այլ (օրինակ՝ համախառն խնայողությունները ՀՆԱ կազմում, Ջինիի ինդեքսը)։ Այս ռեգրեսիոն վերլուծության համար օգտագործվել է ավելի քան 70 փոփոխական։

Տվյալների ծավալուն բնույթը հաշվի առնելով՝ դրանց նախնական մշա-

կումը չափազանց կարևոր է: Այդ գործընթացը ներառում է բացակայող տվյալները լրացնելը, հնարավոր կրիտիկական արժեքների փոխարինումը, մուլտիկոլենատության բացահայտումը կոռեյացիայի մատրիցի միջոցով: Նշվածները հանգեցրին նրան, որ առկա տվյալների բազայում ներառվեցին ավելի հակիրճ և վիճակագրորեն նշանակալի փոփոխականներ՝ ՀՆԱ աճի վրա ունեցած ներգործության տեսանկյունից:

**ՀՆԱ աճի վրա ազդող անկախ փոփոխականների նկարագրությունը**

**Աղյուսակ 2.3.2**

Փոփոխականի անուն	Նկարագրություն
ՀՆԱ աճ	ՀՆԱ տարեկան աճի տեմպ
Ընթացիկ հաշվի մնացորդ (% , ՀՆԱ)	Ազգային հաշվի մնացորդ՝ ՀՆԱ-ի համեմատ
Բնակչության խտություն	Մարդկանց թիվ՝ մեկ միավորի տարածքի վրա
Հարկային եկամուտ (ՀՆԱ տոկոս)	Ընդհանուր հարկային եկամուտներ՝ որպես ՀՆԱ տոկոս
Բջջային բաժանորդագրություններ	Բջջային հեռախոսների բաժանորդագրությունների քանակ
Պետական սպառողական ծախսեր	Կառավարության ընդհանուր ծախսեր
Վերջնական սպառման ծախսերի աճ	Վերջնական սպառման ծախսերի աճի տեմպեր
Համախառն խնայողություններ	Ընդհանուր խնայողություններ՝ առանց սպառման
Դպրոցական ընդունելություն, տարրական	Տարրական կրթության համախառն ընդգրկվածության հարաբերակցություն
Ջինիի ինդեքս	Երկրի ներսում եկամտի անհավասարության չափում
Ջբաղվածություն ծառայությունների ոլորտում	Ծառայություններում զբաղվածության ընդհանուր տոկոս
Գործազրկություն	Գործազուրկ, բայց աշխատանք փնտրող աշխատուժի տոկոս
Բնակչության աճ	Ընդհանուր բնակչության տարեկան տոկոսային աճ
Քաղաքային բնակչություն	Քաղաքային բնակավայրերում ապրող ընդհանուր բնակչության տոկոս


Աղյուսակ 2.3.3-ում ներկայացված է նկարագրական վիճակագրություն՝ ներառյալ փոփոխականների միջինը, ստանդարտ շեղումը, նվազագույն և առավելագույն արժեքները, մեդիանան (կիսորդը), առաջին և երրորդ քվարտիլները:

Աղյուսակ 2.3.3

Նկարագրական վիճակագրություն

Փոփոխական	Count	Mean	Std. Dev.	Min	25%	Median	75%	Max
Current account balance (% of GDP)	391	-0.0422	0.0790	-0.2725	-0.0923	-0.0504	-0.0030	0.2459
Population density (people per sq. km of land area)	391	0.0057	0.0413	-0.1940	-0.0043	0.0008	0.0110	0.2627
Tax revenue (% of GDP)	391	0.1870	0.0498	0.0832	0.1500	0.1800	0.2200	0.3463
Mobile cellular subscriptions (per 100 people)	391	0.3223	1.0012	-0.2506	0.0029	0.0744	0.3080	11.8174
General government final consumption expenditure (% of GDP)	391	0.1668	0.0499	0.0883	0.1335	0.1600	0.1900	0.3614
Households and NPISHs Final consumption expenditure per capita growth (annual %)	391	0.0462	0.0541	-0.1348	0.0169	0.0400	0.0800	0.2197
Gross savings (% of GDP)	391	0.2223	0.0916	0.0100	0.1538	0.2178	0.2884	0.4551
School enrollment, primary (% gross)	391	1.0396	0.1161	0.8071	0.9813	1.0261	1.0704	1.4088
Gini index	391	-0.0047	0.0338	-0.1750	-0.0061	0.0000	0.0000	0.1810
Employment in services (% of total employment) (modeled ILO estimate)	391	0.5266	0.0858	0.3564	0.4688	0.5297	0.5851	0.7128
Unemployment, total (% of total labor force) (modeled ILO estimate)	391	0.1225	0.0806	0.0198	0.0571	0.0914	0.1834	0.3732
Population growth (annual %)	391	0.0047	0.0115	-0.0200	-0.0027	0.0016	0.0127	0.0400
Urban population (% of total population)	391	0.5683	0.1338	0.3237	0.4560	0.5646	0.6414	0.9100

Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս ընտրված փոփոխականների միջև կոռելյացիայի մատրիցը: Կոռելյացիայի գործակցի 1-ին կամ -1-ին մոտ արժեքները ցույց են տալիս, համապատասխանաբար, ուժեղ դրական կամ բացասական գծային կախվածություն:



**Գծապատկեր 2.3.1** | *Կոռելյացիոն մատրից*

Մուլտիկոլինատության կամ անկախ փոփոխականների միջև կոռելյացիայի բացառումը կարևոր է, քանի որ հակառակ պարագայում դա կարող է մեծացնել գործակիցների գնահատումների շեղումը և գնահատականները շատ զգայուն դարձնել աննշան փոփոխությունների նկատմամբ:

Ռեգրեսիայի մոդելի գործակիցները ներկայացնում են կախյալ փոփոխականի փոփոխությունն (ՀՆԱ աճը) այն դեպքում, երբ կանխատեսվող փոփոխականը փոխվում է 1 միավորով՝ մնացած փոփոխականների հաստատուն մնալու պայմաններում: Մաթեմատիկորեն՝ որպես պարզագույն գծային ռեգրեսիա, դա կունենա հետևյալ տեսքը.

$$y = \beta_0 + \beta_1x_1 + \varepsilon$$

Ստանդարտ սխալը չափում է այն ճշգրտությունը, թե որքանով է ընտրանքը ներկայացնում համախումբը: Ռեգրեսիոն վերլուծություններում դա տվյալների ցրվածության աստիճանն է ռեգրեսիայի ուղղի շուրջ: Ինչքան ցածր է ստանդարտ սխալը, այնքան տվյալների ցրվածությունը ռեգրեսիայի ուղղից փոքր է:

T-վիճակագրության միջոցով չափվում է համախմբի գնահատված արժեքների և ընտրանքի գնահատման տարբերությունները: Ինչքան մեծ է T-արժեքը, այնքան մեծ է հավանականությունը, որ պարամետրը 0 չէ:

**F-թեստը** հաստատուն ազդեցությամբ մոդելներում ստուգում է բոլոր առանձին գործոնների գրոյական ազդեցության հավանականությունը: Այլ խոսքով, դա ստուգում է այնպիսի առանձնահատուկ գործոնների առկայությունը, որոնք պետք է դիտարկվեն՝ կախված երկրի առանձնահատկություններից՝

F-statistic: 9.60853

p-value: < 2.22e-16

1. F-statistic (9.60853): Ինչքան մեծ է այս արժեքը, այնքան ժխտվում է այն պնդումը, որ ընտրված գործոնների ազդեցությունը գրոյական է:
2. p-value (< 2.22e-16): Շատ փոքր՝ գրոյին մոտ արժեք է: Սա այն հավանականությունն է, որը բնութագրում է ընտրված գործոնների գրոյական ազդեցություն ունենալը:

F-վիճականու 9.60853 և p-արժեքի 2.22e-16-ից էլ փոքր ցուցանիշների համադրությունը նշանակում է, որ մենք մերժում ենք ընտրված գործոնների գրոյական ազդեցություն ունենալու հնարավորությունը: Սա նշանակում է, որ առկա է վիճակագրորեն ուժեղ ապացույց առ այն, որ առնվազն մեկ երկրի դեպքում ազդեցությունը ոչ գրոյական է: Այլ խոսքով, երկրների միջև տարբերությունները (անհատական էֆեկտները) վիճակագրորեն նշանակալի են և կարևոր կախյալ փոփոխականի տատանումները բացատրելու համար:

Հաշվի առնելով p-value-ի ցածր արժեքը՝ ստացված արդյունքները նշանակալի են 1%, 5%, 10% վստահելիության մակարդակներում: Սա նշանակում է, որ հաստատուն ազդեցությունների մոդելն ավելի նպատակահարմար է պանելային ռեգրեսիոն վերլուծության համար, քանի որ առկա են բազմաթիվ նշանակալի և ոչ նկատելի անհատական ազդեցություններ, որոնք պետք է կառավարել:

**Հատումանի թեստը** կիրառելի է հաստատուն և պատահական ազդեցությունների մոդելների միջև ընտրություն կատարելիս: Եթե այս մոդելների գործակիցների տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են, նշանակում է, որ պատահական ազդեցությունների մոդելի արդյունքները պարունակում են անհամապատասխանություններ՝ առավելությունը տալով հաստատուն ազդեցությունների մոդելին: Հակառակ դեպքում պատահական ազդեցությունների մոդելը կընտրվի իր արդյունավետության համար:

Պատահական ազդեցությունների մոդելի գնահատումը հանգեցրեց սխալի: Ավելի հստակ, մոդելը փորձում է գնահատել ավելի շատ գործակիցներ (27՝ ներառյալ ազատ անդամը), քան առկա են տվյալների բազայում՝ 17: Այսպիսի իրավիճակում պատահական ազդեցությունների մոդելը դառնում է ոչ գնահատելի՝ օգտագործելով Swamy-Arora մեթոդը:

Քանի որ Հաուսմանի թեստը հիմնված է հաստատուն ազդեցությունների և պատահական ազդեցությունների մոդելների համեմատության վրա, գնահատելու անկարողությունն անհնարին է դարձրել դրա կիրառումը:

Անդրադառնալով 3-րդ հիպոթեզին՝ նշենք, որ հիմնական ներքին գործոնների վերաբերյալ ավելի ընդգրկուն պատկերացում ձևավորելու նպատակով կազմվել է լրացուցիչ մոդել: Այս մոդելում, աճի տեմպի վրա կենտրոնանալու փոխարեն, ուշադրությունը սևեռվել է ՀՆԱ բացարձակ ցուցանիշներին: Տնտեսական տեսությունների վրա հիմնված այս մոտեցումն ապահովում է ներքին գործոնների երկարաժամկետ ազդեցության բացահայտում՝ անկախ տարեկան տատանումներից: Բացարձակ արժեքներն ուսումնասիրելով՝ մոդելը ցույց է տալիս ներքին գործոնների կայուն ազդեցությունը երկրի տնտեսական միջավայրի վրա:

**Աղյուսակ 2.3.4**  
*Մոդելի արդյունքները*

	Results
Intercept <sup>1</sup>	
Current account balance (% of GDP)	-0.1169** (0.0038)
Population density	-0.0964* (0.0342)
Tax revenue (% of GDP)	0.0273. (0.1000)
Mobile cellular subscriptions	0.0060** (0.0038)
Government consumption expenditure	-0.4065*** (0.0001)
Final consumption expenditure growth	0.3903*** (0.0000)
Gross savings	0.1704*** (0.0000)
School enrollment, primary	-0.0835* (0.0340)
Gini index	0.0931. (0.0845)
Employment in services	-0.1428** (0.0058)
Unemployment	0.1269. (0.0924)
Population growth	0.5794. (0.0906)
Urban population	0.1718** (0.0079)
F-test	17.60580
DF	374
Time fixed effects	YES
B-PLM test	0.04201
Hausman test	0.04173
R <sup>2</sup>	0.38801
P-value	< 2.22e-16

Standard errors in parenthesis

Statistical significance: 0 '\*\*\*' 0.001 '\*\*' 0.01 '\*' 0.05 '.' 0.1 '.' 1

1. Panel fixed effects model does report an intercept (constant)

Source: author

Ֆիքսված էֆեկտներով մոդելի վիճակագրական բնութագրերն են՝

Balanced Panel: n = 17 (Countries), T = 23 (Time periods), N = 391 (Total observations)
R-Squared: 0.84632
Adjusted R-Squared: 0.83305
F-statistic: 131.804 (p-value: < 2.22e-16, indicating the model is statistically significant.)

Մոդելավորման այս մոտեցումը հիմնվում է այն բանի վրա, որ որոշ ներքին գործոններ ունեն երկարատև ազդեցություն տնտեսական արդյունքների վրա: Բացարձակ արժեքների օգտագործումը հեշտացնում է միջավայրի երկարաժամկետ շարժընթացի մեկուսացումը կարճաժամկետ տատանումներից՝ թույլ տալով համապարփակ ձևով հասկանալ ներքին գործոնների և տնտեսական աճի փոխազդեցությունը: Այս մոտեցումը համահունչ է հիպոթեզի նպատակին, այն է՝ բացահայտել այն հիմնական ներքին գործոնները, որոնք էական են երկրի տնտեսական կյանքի ձևավորման գործում:

Ըստ էության, այս լրացուցիչ մոդելն ընդլայնում է մեր վերլուծական գործիքակազմը՝ ձևավորելով պատկերացում ներքին գործոնների ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ազդեցության վերաբերյալ:

Մոդելի շրջանակներում կատարված հիմնական եզրակացությունները կարելի է ներկայացնել հետևյալ երեք հիպոթեզի շրջանակում:

**Հիպոթեզ 1 (H1):** Ներքին գործոնները և ՀՆԱ աճը: Պանել ռեգրեսիոն մոդելն առաջին հիպոթեզի դեպքում ցույց տվեց, որ ներքին գործոններն իրապես նշանակալի ազդեցություն ունեն ՀՆԱ աճի վրա: Մոդելի R քառակուսու 0.34 արժեքը ցույց է տալիս, որ դիտարկվող երկրների դեպքում ՀՆԱ աճի մոտ 1/3-րդը բացատրվում է ներքին գործոններով: Ընդ որում, ներքին գործոնները՝ կառավարման որակը, հարկաբյուջետային քաղաքականությունը և ժողովրդագրական տեղաշարժերը, առանցքային են տնտեսական աճի օրինաչափությունների ձևավորման գործում: Համապատասխան փոփոխականների դրական գործակիցներն ընդգծում են ներքին գործոնների նշանակությունը տնտեսական էքսպանսիայի խթանման մեջ: Այս բացահայտումները հաստատում են հիպոթեզի այն պնդումը, որ ներքին գործոններն էականորեն ազդում են ՀՆԱ աճի վրա և ընդգծում ներքին գործոնների շարժընթացին ուշադրություն դարձնելու կարևորությունը կայուն տնտեսական աճի հասնելու համատեքստում:

**Հիպոթեզ 2 (H2):** Հիմնական ներքին գործոնների բացահայտում: Բնակչության աճի գործակիցն (0.5794) առաջարկում է վիճակագրորեն նշանակալի դրական կախվածություն կախյալ փոփոխականից: Էմպիրիկ գրականության մեջ հաճախ նշվում է, որ բնակչության աճը կարող է լինել տնտեսական պահանջարկի կատալիզատորը: Պետական սպառողական ծախսերի դիտարկված բացասական գործակիցը (-0,4065) կարող է վկայել պետական հատվածի ներդրումների անարդյունավետության մասին. մի պնդում, որը հաստատվում

է որոշ տնտեսական մոդելներով, ըստ որոնց՝ չափից ավելի շատ պետական սպառումը կարող է սահմանափակել հնարավոր մասնավոր ներդրումները:

Եվ ընդհակառակը. վերջնական սպառման ծախսերի աճը (0,3903) ունի դրական գործակից, ինչը համահունչ է ստանդարտ մակրոտնտեսական մոդելներին, որտեղ սպառումն ուղղակիորեն նպաստում է ՀՆԱ-ին: Ընթացիկ հաշվի մնացորդը (որպես ՀՆԱ տոկոս) (-0,1169), սակայն, ունի բացասական գործակից: Հետևաբար՝ ընթացիկ հաշվի ավելցուկի աճը կարող է վկայել ներքին սպառման կամ ներդրումային գործունեության կրճատման մասին:

Համախառն խնայողությունների դրական գործակիցը (0,1704) համընկնում է տնտեսական այն տեսություններին, որոնք խնայողությունները դիտում են որպես ներդրումների վրա հիմնված աճի նախադրյալ: Այնուամենայնիվ, «բնակչության խտություն» փոփոխականը (-0,0964) ունի բացասական գործակից, որը կարող է վկայել ռեսուրսների սահմանափակումների կամ ենթակառուցվածքների մարտահրավերների մասին, ինչպես ենթադրվում է տնտեսագիտության որոշ ուսումնասիրություններում:

Բնակչության խտության բացասական գործակիցը (-0,0964) երաշխավորում է հետաքրքրական հետազոտություն: Բնակչության խտությունը կամ մարդկանց թիվը մեկ միավոր տարածքի վրա կարող է համարվել ուրբանիզացման մակարդակի և ռեսուրսների կենտրոնացվածության ցուցանիշ: Բացասական գործակիցը ցույց է տալիս, որ երբ բնակչության խտությունը մեծանում է, կախյալ փոփոխականը (ենթադրաբար ՀՆԱ աճը կամ մակարդակը) նվազում է կամ հակառակը. երբ մեկ շնչի հաշվով մակերեսը մեծանում է, ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն է գրանցվում:

**Հիպոթեզ 3-ը (H3)** (հիմնական ներքին գործոնների նույնականացում) հաստատվում է հետազոտությամբ: Լրացուցիչ մոդելի բարձր բացատրական ուժը վկայում է, որ ներքին գործոնները ժամանակի ընթացքում ավելի էական ազդեցություն են ունենում: Կարճաժամկետ սահմանափակումները բխում են արտաքին ցնցումներից, որոնք հաստատվել են վերլուծությամբ: Սա ցույց է տալիս ներքին և արտաքին գործոնների բարդ փոխազդեցությունը կարճաժամկետ հեռանկարում՝ գերակշռող արտաքին ազդեցություններով: Այնուամենայնիվ, լրացուցիչ մոդելի արդյունքներն ամրապնդում են հիպոթեզի երկարաժամկետ ազդեցության պնդումը: Փոփոխականները, ինչպիսիք են ինստիտուցիոնալ որակը և քաղաքականության հետևողականությունը, առաջադիմական դեր են խաղում՝ վարկածին համահունչ:




**ԵԿԱՄՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**3.1 Օպտիմալ հարկային բեռի և հարկային  
եկամուտների վրա ազդող հիմնական  
գործոնների գնահատումը**

Պետության եկամտային քաղաքականությունն ու տնտեսական իրավիճակը սերտորեն փոխկապակցված են: Եկամտային քաղաքականությունը ոչ միայն ապահովում է պետական բյուջեի եկամուտների ձևավորումն ու դրանց ծախսումը, այլև ազդում մակրոտնտեսական վիճակի վրա, որն էլ հետադարձ կապով ապահովում է հարկային համակարգի անխափան գործողությունն ու շարունակական բարելավման գործընթացները: Մա է պատճառը, որ հարկային համակարգի և համախառն ներքին արդյունքի փոխազդեցությունները գիտական շրջանակներում ամենաշատ ու սուր քննարկումների տեղիք են տալիս: Հարկերի բարձրացումը կարող է էականորեն զսպել տնտեսական ակտիվությունը և հանգեցնել ինչպես խնայողությունների, այնպես էլ ներդրումային խթանների թուլացմանը: Եկամուտների հարկման ոչ օպտիմալ դրույքաչափերն էլ, իրենց հերթին, կարող են հանգեցնել աշխատուժի առաջարկի կրճատմանը և բացասաբար անդրադառնալ մարդկային կապիտալի բնականոն վերարտադրության վրա: Ոչ տրամաբանական և չարդարացված հարկային դրույքաչափերը հանգեցնում են կապիտալի և աշխատուժի միջոլորտային անարդյունավետ վերաբաշխմանը, ինչպես նաև երկրից դրանց արտահոսքին: Այս առումով, կարևոր է հարկային բեռի օպտիմալ մակարդակի գնահատումը տնտեսական աճի վրա՝ ազդեցության համատեքստում: Տնտեսական աճի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների բազմազանությունը ստիպում է հարկային բեռը դիտարկել նշված գործոնների հետ համադրության մեջ: Փոքր, բաց տնտեսությամբ երկրներում, որտեղ մեծ կախվածություն կա արտաքին դրամական հոսքերից, իսկ տնտեսական աճի կայունությունն ապահովող ներքին գործոնները չեն կարողանում բավարար թափ հաղորդել տնտեսական աճին, հարկային բեռի օպտիմալ մակարդակը կարող է տնտեսական աճի կայունությունն ապահովող գործիք հանդիսանալ:

ՀՀ-ում ՀՆԱ աճը մշտապես ենթակա է արտաքին շոկերի, ինչի հետևանքով ամենամեծ անկումները դիտարկվել են համաշխարհային տնտեսությունում առաջացած ցնցումների կամ ճգնաժամերի ազդեցությամբ: Պատմականորեն՝ հարկային բեռի ամենացածր մակարդակը դիտարկվում է 2000-ական թվականների սկզբին, երբ գրանցվել է ամենաբարձր տնտեսական աճը: Մակայն, տնտեսական հետագա զարգացումները ցույց են տալիս, որ տնտեսական աճի կառուցվածքը և տնտեսության բազմազանեցման աստիճանն ավելի

Էական են աճի կայունությունն ապահովելու գործում: Հետագա ժամանակաշրջանում դիտարկվում է հարկային բեռի շարունակական աճի միտում:



**Գծապատկեր 3.1.1**

*ՀՀ-ում ՀՆԱ աճի և հարկային բեռի շարժունքացն ըստ տարիների, 2003-2022 թթ.*

Հարկային բեռի օպտիմալ մակարդակի բացահայտումը հնարավորություն է տալիս մատնանշելու հարկային համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունները և մշակելու տնտեսական աճի կայունությանը միտված եկամտային քաղաքականություն: Հետևապես՝ հետազոտության նպատակն է գտնել ՀՀ հարկային բեռի օպտիմալ մակարդակը, այսինքն՝ այն մակարդակը, որի դեպքում ապահովվում է հարկային եկամուտների և համախառն արտադրության ծավալի լավագույն համադրություն, այսինքն՝ հարկային բեռի մակարդակի սահմանային կամ լրացուցիչ տոկոսային աճը հանգեցնում է բացասական տնտեսական աճի:

Այս նպատակին հասնելու համար օգտագործվել է Լաֆերի կորի՝ Բալացկու կողմից ձևափոխված տարբերակը<sup>139</sup>: Արդյունքում գնահատվել է հետևյալ մոդելը՝

$$GDP\_GR_t = \beta_0 + \beta_1 * TAX\_BURDEN_t + \beta_2 * TAX\_BURDEN_t^2 + \beta_3 * X_t + \varepsilon_t, t = \underline{2008Q1, 2023Q2}, \tag{1}$$

որտեղ  $GDP\_GR_t$ -ն ՀՀ տնտեսական աճի ցուցանիշն է,  $TAX\_BURDEN_t$ -ն՝ ՀՀ հարկային բեռի ցուցանիշը,  $TAX\_BURDEN_t^2$ -ն՝ հարկային բեռի քառակուսին, որն արտացոլում է վերջինիս և տնտեսական աճի միջև ոչ գծային կապի հնա-

<sup>139</sup> Балацкий Е. В., Эффективности фискальной политики государства, 2000, с. 35

րավորությունը:

Եթե գնահատումների արդյունքները ցույց տան, որ Հայաստանում ՕՈՒՆ-ի և եկամուտների անհավասարության միջև կապը բնութագրվում է շրջված  $U$ -աձև կորի միջոցով (այսինքն՝  $\beta_1 > 0$  և  $\beta_2 < 0$ ), ապա դա կնշանակի, որ որոշակի կետից այն կողմ հարկային բեռի բարձրացումն ունենում է նպատակին հակառակ արդյունք՝ հարկային բեռի մեծացմանը զուգահեռ երկրում համախառն արտադրության ծավալները նվազում են:

Վերոնշյալ կետը հարկային բեռի այն օպտիմալ մեծությունն է, որը մաքսիմալացնում է ՀՀ-ում տնտեսական աճը: Շրջման կետը գնահատվում է հավասարման առաջին կարգի մասնակի ածանցյալի միջոցով՝

$$\frac{\partial GDP\_GR}{\partial TAX\_BURDEN} = \beta_1 + 2 * \beta_2 TAX\_BURDEN: \quad (2)$$

Հարկային բեռի օպտիմալ մակարդակը, հիմնվելով վերոնշյալ հավասարումների վրա, ներկայացվում է հետևյալ տեսքով՝

$$GDP\_GR = \frac{-\beta_1}{2\beta_2}: \quad (3)$$

(1)-հավասարման մեջ  $X$ -ը վերահսկիչ փոփոխականների վեկտորն է, որը ներմուծվել է գնահատումների կայունությունը բարելավելու, ինչպես նաև տնտեսական աճի վրա այլ մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները գնահատելու համար: Որպես վերահսկիչ փոփոխականներ՝ ընտրվել են տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը, կառավարության վերջնական սպառման ծախսերը, դեպի ՀՀ դրամական փոխանցումները, ՀՀ-ից արտահանումը, ՀՀ համախառն խնայողությունները: Մոդելում ներառվել են վերոնշյալ ցուցանիշների 2008-2023 թվականների եռամսյակային տվյալները՝ կազմելով ընդհանուր 62 դիտարկում: Վերոնշյալ ցուցանիշները և դրանց աղբյուրները ներկայացված են աղյուսակ 3.1.1-ում:

### Աղյուսակ 3.1.1

#### Ներառված փոփոխականները

Փոփոխականը	Նկարագրությունը	Չափումը
<i>GDP growth</i>	ՀՆԱ իրական աճի տեմպ	Աճի ինդեքս
<i>Households cons</i>	Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր	Աճի ինդեքս
<i>Gov final cons</i>	Կառավարության վերջնական սպառման ծախսեր	Աճի ինդեքս
<i>Remittances</i>	Դրամական փոխանցումներ դեպի ՀՀ	Աճի ինդեքս
<i>Exports</i>	ՀՀ-ից արտահանում	Աճի ինդեքս
<i>Gross savings</i>	ՀՀ համախառն խնայողություններ	Աճի ինդեքս
<i>Tax burden</i>	Հարկային բեռ	ՀՆԱ-ի մեջ, %
<i>Tax revenue</i>	Հարկային եկամուտներ	Աճի ինդեքս

Աղյուսակը կազմել են հեղինակները:

Աղյուսակ 3.1.2-ում ներկայացված է վերոնշյալ ցուցանիշների միջև զույգ առ զույգ փոխկախվածությունները: Բացառելու համար գնահատվող մոդելներում բացատրող փոփոխականների միջև մուլտիկոլինենարության երևույթը

առանձնացվել և գնահատվել է 3 մոդել՝ ըստ վերահսկող փոփոխականների, որտեղ ներառված վերահսկող փոփոխականները միմյանց նկատմամբ չունեն կոռելյացիայի նշանակալի կամ մեծ գործակից: Մոդելի գնահատման համար նախ՝ պարզվել են դրանում ներառված բոլոր փոփոխականների ինտեգրման կարգերը, ինչի համար կիրառվել է միավոր արմատի (ADF) թեստն ըստ Ակայկեի չափանիշի: Ներառված բոլոր փոփոխականները ստացիոնար են, ուստի մոդել են ներմուծվել առանց փոփոխության:

**Աղյուսակ 3.1.2**

**Փոփոխականների միջև զույգ առ զույգ կոռելյացիաների մնացորիցը**

	1	2	3	4	5	6	7
<i>GDP growth</i>	1						
<i>Households cons</i>	0.65*	1					
<i>Gov final cons</i>	0.15	-0.03	1				
<i>Remittances</i>	0.63*	0.634*	0.058	1			
<i>Exports</i>	0.382*	0.407*	-0.122	0.345*	1		
<i>Gross savings</i>	0.543*	0.283*	0.008	0.426*	0.13	1	
<i>Tax burden</i>	-0.383*	-0.216*	-0.374*	-0.31*	0.24*	-0.4*	1

\*  $p < 0.1$

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

Կառուցված 3 մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.1.3-ում: Ներկայացված են նաև մոդելների մնացորդներում ավտոկոռելյացիայի և հոմոսկեդաստիկության երևույթների առկայությունը ստուգող թեստերի արդյունքները: Ինչպես ցույց են տալիս թեստերի արդյունքները, գնահատված բոլոր մոդելների մնացորդները հոմոսկեդաստիկ են և զուրկ ավտոկոռելյացիայից:

Ինչպես երևում է ստացված գործակիցներից, հարկային բեռը բոլոր 3 մոդելներում ունի նշանակալի ազդեցություն, իսկ ազդեցության գործակիցների նշանները համապատասխանում են ակնկալվող արդյունքներին ( $\beta_1 > 0$  և  $\beta_2 < 0$ ): Հարկային բեռի ավելացումը մեկ տոկոսային կետով հանգեցնում է 4.67-5.09 տոկոսային կետով տնտեսական աճի, սակայն ազդեցությունը դառնում է բացասական, երբ հարկային բեռը գերազանցում է 20.9-21.9 տոկոսը: Այսինքն, հաշվի առնելով գնահատման արդյունքները, ՀՀ տնտեսական աճն այլ հավասար պայմաններում կընդունի ընդհանուր առավելագույն արժեք, երբ հարկային բեռը 20.9-21.9 տոկոս է:

Աղյուսակ 3.1.3

Մոդելների գնահատման փորձառական արդյունքները  
և մնացորդների թեստերը

	1	2	3
<i>GDP growth</i> (-1)	0.438*** (4.581)	0.525*** (5.65)	0.465*** (5.184)
<i>Tax burden</i>	5.09*** (5.45)	4.667*** (4.9)	4.896*** (5.6)
<i>Tax burden</i> <sup>2</sup>	-11.6*** (-4.13)	-11.16*** (-3.795)	-11.235*** (-4.195)
<i>Households cons</i>	0.361*** (4.912)	-	-
<i>Gov final cons</i>	-	0.013 (0.206)	-
<i>Remittances</i>	-	0.142*** (4.4)	-
<i>Exports</i>	-	-	0.102*** (4.52)
<i>Gross savings</i>	-	-	0.06** (4.52)
<i>Constant</i>	-	-	-
<b>Obs.</b>	61	61	61
<i>R</i> <sup>2</sup>	0.59	0.57	0.63
<b>Turning Point</b>	<b>21.93%</b>	<b>20.91%</b>	<b>21.78%</b>
<b>Serial Correlation LM Test</b>			
<b>F-stat. (prob.)</b>	1.061 (0.31)	1.615 (0.21)	0.34 (0.54)
<b>Heteroskedasticity Test (BPG)</b>			
<b>Obs*R-sq. (prob. <math>\chi^2</math>)</b>	0.053 (0.99)	0.73 (0.57)	1.22 (0.3)

\*  $p < 0.1$ , \*\*  $p < 0.05$ , \*\*\*  $p < 0.01$ :

Փակագծերում ներկայացված են  $t$  վիճականու արժեքները:

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

Գնահատման նման արդյունքը ցույց է տալիս, որ տնտեսական աճի առավելագույն մակարդակ ապահովող հարկային բեռի օպտիմալ մակարդակը ցածր է հարկային բեռի փաստացի ներկա մակարդակից: Պատճառը նախ՝ այն հանգամանքն է, որ պատմականորեն տնտեսական աճի առավելագույն մակարդակ ապահովվել է հարկային բեռի ավելի ցածր մակարդակի պայմաններում (օրինակ՝ 2000-ական թվականների սկզբին): Մյուս կողմից էլ՝ նման պատկերը կարելի է մեկնաբանել հավաքագրված հարկային եկամուտների օգտագործման արդյունավետության ցածր մակարդակով: Պետական ծախսերը կամ ներդրումները հիմնականում ընթացիկ սպառման ոլորտներում են կատարվում և չեն ապահովում տնտեսական աճի բավարար աստիճան կամ բարձր աճի շարունակականություն: Նշենք նաև, որ, ըստ տարեկան ցուցանիշների հիման վրա կատարված վերլուծության, հարկային բեռի օպտիմալ մակարդակն ավելի ցածր է՝ 17,26-18,06 տոկոս, քան եռամսյակային ցուցանիշների դեպքում (հավելված 1): Եռամսյակային ցուցանիշների հիման վրա հաշվարկի պարագայում դրանց ընթացիկ տատանողականությունը մեղմում է պատկերը:

Վերջնական սպառման ծախսերի մեկ տոկոսային կետով աճը հանգեցնում է տնտեսական աճի ավելացմանը 0.361 տոկոսային կետով: Այս ազդեցությունը ևս մեկ անգամ հիմնավորում է նախորդ բաժնում կատարված պանելային վերլուծության արդյունքները: Կառավարության վերջնական սպառ-

ման ծախսերի աճի ազդեցությունը, ըստ գնահատման արդյունքների, չունի նշանակալի ազդեցություն ՀՀ-ում տնտեսական աճի վրա, ինչը նույնպես համահունչ է նախորդ վերլուծության այն եզրակացությանը, որ պետական հատվածի ներդրումներն անարդյունավետ են՝ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: Մինչդեռ ոչ պետական հատվածի կողմից կատարված ծախսերն այս առումով ավելի արդյունավետ են: Դրամական փոխանցումների և արտահանման աճը դրական ազդեցություն ունի, համապատասխանաբար՝ 0.14 և 0.1 ազդեցության գործակիցներով, իսկ համախառն խնայողությունների մեկ տոկոսային կետով աճը հանգեցնում է 0.06 տոկոսային կետով տնտեսական աճի: Դրամական փոխանցումները կարող ենք բացատրել որպես ՀՀ տնտեսական աճի վրա ազդող արտաքին գործոն, որն այժմ է ընկնում իր ուժգնությամբ և կարևորությամբ: Միայն այն հանգամանքը, որ ստացված դրամական տրանսֆերտները բնակչության սպառման ապահովման համար կարևոր դեր ունեն, վերջիններս վերածում է տնտեսական աճ ապահովող նշանակալի գործոնի: Արտահանումը նույնպես հավելյալ դրամական հոսքեր է ապահովում տնտեսության համար՝ մեծացնելով հետագա ծախսերի ու ներդրումների իրականացման հնարավորությունները: Խնայողությունների համեմատաբար փոքր, բայց նշանակալի ազդեցությունը կարող ենք պայմանավորել կապիտալի շուկայի գործիքակազմի թերզարգացածությամբ: Դրանց հետագա զարգացումն ավելի արդյունավետ կդարձնի խնայողությունների կառավարման և դրանք տնտեսության իրական հատված ուղղելու ու տնտեսական աճ ապահովելու գործընթացները:

**Աղյուսակ 3.1.4**

*Մոդելների գնահատման փորձատական արդյունքները և մնացորդների թեստերը*

	1	2	3
<i>Tax revenue(-1)</i>	0.526*** (9.72)	0.657*** (7.827)	0.67*** (9.02)
<i>Households cons</i>	0.688*** (7.017)	-	-
<i>Gov final cons</i>	-0.042 (-0.51)	0.006 (0.55)	-
<i>Remittances</i>	-	0.231*** (3.5)	-
<i>Exports</i>	-	-	0.12*** (2.736)
<i>Gross savings</i>	-	-	0.07 (1.47)
<i>Constant</i>	-	-	-
<b>Obs.</b>	62	62	62
<b>R<sup>2</sup></b>	0.64	0.56	0.56
<b>Serial Correlation LM Test</b>			
<b>F-stat. (prob.)</b>	1.59 (0.21)	0.022 (0.97)	0.056 (0.54)
<b>Heteroskedasticity Test (BPG)</b>			
<b>Obs*R-sq. (prob. <math>\chi^2</math>)</b>	1.92 (0.13)	0.82 (0.48)	1.22 (0.3)

\*  $p < 0.1$ , \*\*  $p < 0.05$ , \*\*\*  $p < 0.01$ : Փակագծերում ներկայացված են t վիճակաճանաչարկի արժեքները: Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ:

Հաջորդիվ՝ աղյուսակ 3.1.4-ում ներկայացված է ՀՆԱ աճը պայմանավորող ցուցանիշների ազդեցության գնահատումն ըստ հարկային եկամուտների: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ՀՆԱ աճը պայմանավորող ցուցանիշներն ընդհանուր առմամբ նշանակալի ազդեցություն ունեն նաև հարկային եկամուտների վրա: Մասնավորապես՝ տնային տնտեսությունների սպառման ծախսերի մեկ տոկոսային կետով աճը հանգեցնում է հարկային եկամուտների աճին՝ 0.526 տոկոսային կետով: Վերջինս կարող ենք պայմանավորել հարկային եկամուտների մեջ անուղղակի հարկերի զգալի կշռով: Անուղղակի հարկերը մի կողմից պետական եկամուտների աճ են ապահովում, սակայն մյուս կողմից, ըստ էության, նվազեցնում են մասնավոր հատվածի կողմից սպառման կամ հետագա ծախսերի իրականացման հնարավորությունները: Մինչդեռ մենք ցույց էինք տվել, որ տնտեսական աճի առումով, մասնավոր հատվածի կատարած ծախսերը պետական ծախսերի համեմատ ավելի նշանակալի ազդեցություն են ապահովում: Դրամական փոխանցումների և արտահանման աճը դրական ազդեցություն ունի, համապատասխանաբար՝ 0.231 և 0.12 ազդեցության գործակիցներով: Հետևաբար՝ կարող ենք նշել, որ դեպի տնտեսություն հոսքերը, ի տարբերություն պետական ծախսերի, ապահովում են հավելյալ սպառման ծախսեր, ներդրումներ, իսկ վերջիններս էլ ազդեցություն ունեն հարկային եկամուտների վրա՝ իրենց հետ կապված անուղղակի և ուղղակի հարկերի պատճառով: Համախառն խնայողությունների և կառավարության վերջնական սպառման ծախսերի աճերը նշանակալի ազդեցություն չունեն հարկային եկամուտների վրա: Այս առումով, հատկանշական է պետական ծախսերի գործոնը, ինչը հիմնավորում է մեր առաջ քաշած պնդումն առ այն, որ պետական ծախսերը որոշակի մակարդակում անարդյունավետ են, քանի դեռ չեն ուղղվում դեպի կապիտալ ներդրումներ, այլ առավելապես ուղղվում են դեպի ընթացիկ սպառում և աշխատավարձերի վճարում և նույնիսկ էական դեր չեն կատարում հետագայում, որպես հարկեր, պետական եկամուտների աճի գործում:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել.

- Դիտարկվող 3 մոդելում էլ հարկային բեռը նշանակալի ազդեցություն ունի՝ զուգորդվելով ակնկալվող արդյունքների ուղղությամբ համապատասխանող գործակիցներով:
- Հարկային բեռի ավելացումը մեկ տոկոսային կետով հանգեցնում է տնտեսական աճի ավելացմանը 4.67-5.09 տոկոսային կետով: Սա ենթադրում է, որ հարկային բեռի աճին միտված քաղաքականությունն այլ հավասար պայմաններում պետք է բերի տնտեսական աճի արագացում:
- ՀՀ տնտեսական աճը, այլ հավասար պայմաններում, կընդունի ընդհանուր առավելագույն արժեք, եթե հարկային բեռը կազմի 20.9-21.9

տոկոս, որն էլ դիտարկել ենք որպես հարկային բեռի օպտիմալ միջակայք:

- Առավելագույն տնտեսական աճ ապահովող հարկային բեռի օպտիմալ մակարդակը ցածր է հարկային բեռի ներկայիս փաստացի մակարդակից: Պատճառները հետևյալն են. նախ՝ հարկային բեռի նվազագույն մակարդակի զուգորդումը պատմականորեն բարձր տնտեսական աճի ժամանակաշրջանի հետ, երկրորդ՝ հավաքագրված հարկային եկամուտների ոչ արդյունավետ օգտագործումը: Առաջին հանգամանքը հիմնականում պայմանավորված է 2000-ականների սկզբին արձանագրված ցածր հարկային բեռի ու բարձր տնտեսական աճի ցուցանիշներով: Արդյունքում նշված ժամանակաշրջանի պատկերն էական ազդեցություն է թողնում ընդհանուր մոդելի վրա: Երկրորդ հանգամանքը հիմնականում պայմանավորված է ընթացիկ սպառում ապահովող ոլորտներում պետական ծախսերի կամ ներդրումների իրականացմամբ, որը չի կարող ապահովել տնտեսական աճի բավարար աստիճան կամ բարձր աճի շարունակականություն: Սա ենթադրում է, որ հարկային բեռի փոփոխմանն ուղղված քաղաքականությունը պետք է զուգորդել պետական ծախսային քաղաքականության բարելավմամբ, հակառակ պարագայում հարկային բեռի կամ դրա կառուցվածքի փոփոխությունը, տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, չի կարող ապահովել անհրաժեշտ արդյունք:
- Վերջնական սպառման ծախսերի և տնտեսական աճի կապը ցույց է տալիս դրա նշանակալի դերը, մինչդեռ ՀՀ կառավարության վերջնական ծախսերի աճի ազդեցությունը, ըստ գնահատման արդյունքների, տնտեսական աճի վրա նշանակալի չէ: Սա ենթադրում է, որ մասնավոր ոլորտի կողմից կատարված ծախսերը, տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, ավելի արդյունավետ են, քան պետական ծախսերը: Պատճառն այն է, որ պետական ծախսերը հիմնականում բաշխվում են ընթացիկ սպառմանն ուղղություններով:
- Դրամական փոխանցումներն ու արտահանման աճը, որպես արտաքին նշանակալի գործոններ, դրական ազդեցություն են ապահովում տնտեսական աճի վրա: Դրանք, ըստ էության, ոչ պետական ոլորտում եկամտի ապահովման աղբյուր են՝ հանգեցնելով ամբողջական պահանջարկի մեծացմանն ու տնտեսական աճի վրա դրական ազդեցությանը:
- ՀՆԱ աճը պայմանավորող ցուցանիշների ազդեցության գնահատումը ցույց է տալիս, որ այդ ցուցանիշներն ընդհանուր առմամբ նշանակալի ազդեցություն ունեն նաև հարկային եկամուտների վրա:
- Տնային տնտեսությունների սպառման ծախսերն էական ազդեցություն են ապահովում, մինչդեռ պետական ծախսերը՝ ոչ: Այսինքն՝ հար-



կային եկամուտների աճը, որը մասնավոր ոլորտում ուղեկցվում է տնօրինվող եկամուտների նվազմամբ կամ ծախսերի կրճատմամբ, տնտեսական աճի և հարկային եկամուտների աճի տեսանկյունից, արդյունավետ չէ, եթե դրան զուգահեռ չի բարելավվում պետական ծախսերի ոլորտը:

- Դրամական փոխանցումների ու արտահանման աճի ազդեցությունը հարկային եկամուտների աճի վրա ևս դրական է գնահատվել: Այս դեպքում էլ կապը տրամաբանական է, քանի որ դրամական փոխանցումների ավելացումը ենթադրում է եկամուտների ու սպառման հնարավորությունների աճ մասնավոր ոլորտում՝ ապահովելով հարկային եկամուտների լրացուցիչ մուտքեր: Արտահանման աճն էլ, իր հերթին, ենթադրում է լրացուցիչ հարկերի վճարում՝ շնորհիվ մասնավոր ոլորտի եկամուտների աճի:

## 3.2

### **Տնտեսական աճի վրա որոշ հարկատեսակների ազդեցության և օպտիմալ բեռի գնահատումը**


Տնտեսական աճին ուղղված պետական եկամուտների քաղաքականության իրականացման կարևորագույն քայլերից մեկը, որոշ հարկատեսակների առումով, արդյունավետ և համապատասխան քաղաքականության մշակումն է: Տնտեսական քաղաքականություն մշակելիս որոշ հարկատեսակների վրա շեշտադրում կատարելով կամ դրանք որպես զարգացման լծակ կիրառելով՝ հնարավոր է առավելագույն արդյունավետությամբ օգտագործել տնտեսության ներուժը՝ նպաստելով կայուն տնտեսական աճին: Ըստ այդմ՝ առաջնային կարևորություն ունի որոշակի հարկատեսակների և ՀՆԱ աճի միջև կապերի համապարփակ ուսումնասիրությունը, որը թույլ կտա տնտեսական աճին նպաստող քաղաքականության մշակելիս խթանել մի կողմից պահանջարկը, իսկ մյուս կողմից էլ՝ արտադրողականության աճը:

Վերոնշյալ խնդիրն ավելի կարևոր է այնպիսի փոքր զարգացող տնտեսությունների համար, ինչպիսին է ՀՀ-ն: Այս դեպքում տնտեսական աճի կախվածությունն արտաքին գործոններից պարտադրում է կարևորել և՛ ներքին գործոնների դերի բարձրացումը, և՛ դրանց իրական ներուժի օգտագործմանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը: Չպետք է անտեսել նաև հարկերի ազդեցությունը տնային տնտեսությունների և ձեռնարկությունների տնտեսական վարքագծի վրա: Այս առումով, հատկապես

եկամտային քաղաքականությունը դառնում է տնտեսական հարաբերությունների մասնակիցների վարքագիծը կառավարող գործոն:

Հետազոտության շրջանակում նպատակ է դրվել տնտեսամաթեմատիկական մոդելների կիրառմամբ ուսումնասիրելու որոշ հարկատեսակների և տնտեսական աճի կապը՝ բացահայտելով նաև յուրաքանչյուր հարկատեսակի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա՝ միտված առավել բարձր տնտեսական աճի ապահովմանը: Այլ խոսքով, մոդելների միջոցով հնարավոր է դարձել հարկային բեռի (հարկատեսակ/ՀՆԱ հարաբերակցության)՝ տնտեսական աճի վրա ազդեցության շրջման կետի գնահատումը: Դրանից բարձր դրույքաչափի կիրառելիս յուրաքանչյուր հարկատեսակի ազդեցությունը տնտեսության վրա դառնում է բացասական: Սա կարող է հիմք հանդիսանալ տնտեսական առավելագույն աճի ապահովմանն ուղղված պետական հարկային թիրախավորված քաղաքականության մշակման համար:

Ուսումնասիրության մեջ հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է պետական, այլ ոչ տեղական հարկերի վրա (անշարժ գույքի հարկ, փոխադրամիջոցների գույքահարկ)՝ պայմանավորված ոչ միայն տեղական հարկերի հարկային դրույքի և հարկման բազայի կայուն մակարդակով, ինչն անարդյունավետ է դարձնում մոդելների գնահատման ունակությունը, այլև պետական հարկատեսակների՝ ՀՆԱ կազմում ունեցած անհամեմատ բարձր տեսակարար կշռով (80%-ից ավելի):



**Գծապատկեր 3.2.1**

**Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից հավաքագրված եկամուտներն ըստ որոշ հարկատեսակների, 2022 թ. (մլրդ դրամ)<sup>140</sup>**


<sup>140</sup> ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2022>

Ըստ 2022 թ.-ի տվյալների՝ Հայաստանում պետական եկամուտները կազմել են գրեթե 2 տրիլիոն դրամ, որոնց մեջ ամենախոշոր կշիռն ԱԱՀ-ինն է, որն ապահովում է պետական հարկերի ավելի քանի 1/3-րդը: Դրան հաջորդում են եկամտային հարկը (25%) և շահութահարկը (12%): Գծապատկեր 3.2.1-ում մանրամասնորեն ներկայացված են որոշակի հարկատեսակների ներդրումն ընդամենը հարկային եկամուտների մեջ:

Ուսումնասիրության մեջ օգտագործված հիմնական հարկատեսակները կազմում են պետական եկամուտների ավելի քան 80%-ը, ինչը ցույց է տալիս մոդելավորման ներկայացուցչականությունը:

Ընտրված հինգ հարկատեսակից յուրաքանչյուրի գծով վերջին տարիներին նկատելի է հարկային եկամուտների առավել արագընթաց աճ՝ հատկապես ԱԱՀ-ի առումով: Դա, հավանաբար, պայմանավորված է արտաքին առևտրաշրջանառության կտրուկ աճով:

Գծապատկեր 3.2.2-ում ներկայացված է հետազոտության այս հատվածում թիրախավորված հարկատեսակների շարժընթացը վերջին 10 տարվա ընթացքում:



Գծապատկեր 3.2.2

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից հավաքագրված եկամուտներն ըստ որոշ հարկատեսակների, 2013-2022 թթ.<sup>141</sup>

Որոշ հարկատեսակների և ՀՆԱ-ի միջև գոյություն ունեցող կապը գնահատելու համար օգտագործել ենք վիճակագրական և էկոնոմետրիկական տարբեր մեթոդներ: Մոդելի հիմքում Լաֆերի կորն է՝ ըստ Բալացկու ձևափոխած տարբերակի<sup>142</sup>:

Գնահատվել են 5 տարբեր մոդելներ, որոնցում կախյալ փոփոխականը ՀՆԱ իրական աճի տեմպն է, իսկ անկախ փոփոխականները՝ ավելացված

<sup>141</sup> ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2022>

<sup>142</sup> Балацкий Е. В., Эффективности фискальной политики государства, 2000, с. 35 (cyberleninka.ru) ևս 30.10.2022 թ.:

արժեքի հարկի, եկամտային հարկի, շահութահարկի, ակցիզային հարկի և շրջանառության հարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ:

Մոդելի ընդհանրական տեսքը հետևյալն է՝

$GDP\_GR_t = \alpha_0 + \alpha_1 Tax\_burden_t + \alpha_2 Tax\_burden_t^2 + \alpha_3 X_T + \varepsilon_t$ ,  $t=2008Q1, 2022Q4$ , որտեղ՝

$GDP\_GR_t$ -ն ՀՀ տնտեսական աճի ցուցանիշն է,

$Tax\_burden_t$ -ն՝ ՀՀ հարկային բեռի ցուցանիշը (վերջինս 5 տարբեր մոդելների դեպքում ներկայացնում է ԱԱՀ/ՀՆԱ (VALUE\_ADDED), շահութահարկ/ՀՆԱ (INCOME), ակցիզային հարկ/ՀՆԱ (EXCISE\_TAX), եկամտային հարկ/ՀՆԱ (PROFIT), շրջանառության հարկ/ՀՆԱ (SALES) եռամսյակային ցուցանիշները),

$Tax\_burden_t^2$  -ն՝ որոշ հարկատեսակների համար հաշվարկված հարկային բեռի քառակուսիները, որոնք արտացոլում են վերջինիս և տնտեսական աճի միջև ոչ գծային կապի հնարավորությունը:

Բացի վերոնշյալից, մոդելներում ներառվել են նաև ՀՆԱ-ի վրա առավել բարձր ազդեցություն ունեցող որոշ արտաքին գործոններ՝ նպատակ ունենալով ոչ թե ուսումնասիրելու դրանց վարքագիծը, այլ ապահովելու մոդելների ներկայացուցչականությունը և կայունությունը: Արտաքին գործոնների ընտրության համար հիմք են հանդիսացել նախորդ գլխում մշակված մոդելների միջոցով դուրս բերված առավել կարևոր փոփոխականները:

Հավելենք նաև, որ ուսումնասիրության շրջանակում հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է պետական, այլ ոչ թե տեղական հարկերի վրա, հաշվի առնելով, որ նախ՝ դրանք պետական եկամուտների մեջ ունեն փոքր կշիռ, ապա այն, որ տեղական հարկերի թե՛ հարկման բազան և թե՛ դրույքաչափերը հաճախ պատմականորեն անփոփոխ են: Մեթոդի ընտրությունը պայմանավորված է հետազոտության նպատակով:

Յուրաքանչյուր հարկատեսակի օպտիմալ շեմը որոշելու նպատակով մոդելի գնահատականների հիման վրա կառուցված մոդելների համար հաշվարկվել են շրջման կետեր, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր հարկատեսակի մասով հարկային բեռի օպտիմալ մակարդակը: Վերջիններս հաշվարկվել են հետևյալ բանաձևով՝

$$\frac{UGDP\_GR_t}{UTax\_burden} = \alpha_1 + 2\alpha_2 Tax\_burden:$$

Մոդելների մշակման համար օգտագործվել են առանձին հարկատեսակների և տնտեսական աճի եռամսյակային տվյալներ: Հաշվի առնելով տվյալների հասանելիությունը և համադրելիության նախապայմանը՝ օգտագործվել են 2008-2022 թվականների տվյալները:

Որպես հիմք՝ օգտագործվել է ՀՀ պետական եկամուտների կողմից հրապարակված հարկային եկամուտների մասին պաշտոնական տեղեկատվությունը, իսկ տնտեսական աճի վերաբերյալ՝ ՀՀ ազգային վիճակագրական

կոմիտեի հրապարակումները: Ստորև ներկայացված են ներառված փոփոխականները՝

**Աղյուսակ 3.2.1**

**Ներառված փոփոխականները<sup>143</sup>**

Փոփոխականի անվանումը մոդելում	Նկարագրությունը	Չափումը	Աղբյուրը
GDP growth	ՀՆԱ իրական աճի տեմպ (կախյալ փոփոխական)	Աճի ինդեքս	ՀՀ ԱՎԿ
INCOME	Շահութահարկ/ՀՆԱ	ՀՆԱ-ի մեջ, %	ՀՀ ՊԵԿ
VALUE_ADDED	ԱԱՀ/ՀՆԱ	Աճի ինդեքս	ՀՀ ՊԵԿ
EXCISE_TAX	Ակցիզային հարկ/ՀՆԱ	ՀՆԱ-ի մեջ, %	ՀՀ ՊԵԿ
SALES	Շրջանառության հարկ/ՀՆԱ	ՀՆԱ-ի մեջ, %	ՀՀ ՊԵԿ
PROFIT	Եկամտային հարկ/ՀՆԱ	ՀՆԱ-ի մեջ, %	ՀՀ ՊԵԿ

Կատարված թեստերը ցույց են տալիս մոդելների ներկայացուցչականությունը: Մասնավորապես՝ նախքան փոփոխականները մոդելներում ներառելը, Դիքի-Ֆուլերի թեստի միջոցով ստուգվել է դրանց ստացիոնարությունը: Բոլոր ներառվածները ստացիոնար բացառությամբ շրջանառության հարկ/ ՀՆԱ փոփոխական են: Ուստի վերջիններս մոդել են ներմուծվել առաջին կարգի տարբերությամբ:

Բրեու-Գոդֆրիի սերիալ կոռելյացիոն թեստի միջոցով ստուգվել է մոդելի մնացորդներում ավտոկոռելյացիայի առկայությունը, որի արդյունքները ցույց են տվել, որ մոդելի մնացորդներում բացակայում է ավտոկոռելյացիան: Նորմալ բաշխվածությունը ռեգրեսիոն վերլուծության համար ևս կարևոր ենթադրություն է, ուստի Ջարք-Բեռայի թեստի միջոցով ստուգվել է մոդելի մնացորդների նորմալ բաշխվածությունը: Ըստ ստացված արդյունքի՝ մոդելի մնացորդներն ունեն նորմալ բաշխվածություն:

Ըստ նկարագրված մեթոդաբանության՝ առկա տվյալների շարքերի հիման վրա մշակված տնտեսամաթեմատիկական մոդելների հիմնական արդյունքները կարելի է արտացոլել աղյուսակ 3.2.2-ի միջոցով:

Արդյունքների վերլուծության համար կարևոր է համեմատել նաև հարկի բեռի իրական մակարդակն ըստ որոշ հարկատեսակների: Վերջինս պատկերված է աղյուսակ 3.2.3-ում:

<sup>143</sup> Տվյալները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2022>, ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/>

Աղյուսակ 3.2.2

Մոդելի արդյունքային ցուցանիշներ<sup>144</sup>

	INCOME	VALUE ADDED	EXCISE TAX	SALES	PROFIT
Tax burden	0.226*** (3.767)	0.110*** (5.159)	0.428*** (3.929)	-0.207** (-1.722)	0.537 (2.770)
Exports	0.101** (3.868)	0.114** (4.713)	0.10** (3.416)	0.001 (2.492)	-
Remittances	-	-	0.17 (0.135)	-	0.0005 (1.772)
Constant	-	-	-	0.330 (2.875)	-0.968 (-1.762)
Obs.	60	60	60	40	40
Turning Point	2.7	9.2	1.5	-0.1	5.7

Աղյուսակ 3.2.3

Հարկային բեռն ըստ որոշ հարկատեսակների

	Եկամտային հարկ/ՀՆԱ	ԱԱՀ/ՀՆԱ	Ակցիզային հարկ/ՀՆԱ	Շրջանառության հարկ/ՀՆԱ	Շահութահարկ/ՀՆԱ
2022q1	7,58	9,55	1,61	0,66	2,54
2022q2	6,03	7,66	1,34	0,44	6,57
2022q3	5,10	7,58	1,51	0,45	1,26
2022q4	4,62	7,74	1,55	0,43	1,11

Հավելված 2-ում ավելի մանրամասնորեն ներկայացված են արդյունքների հիմքում առկա մոդելների վիճակագրական նկարագրությունները:

Մշակված մոդելները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր հարկատեսակների դեպքում ուսումնասիրված ժամանակահատվածում որոշ հարկատեսակների հարկային բեռը դրական ազդեցություն ունի ՀՆԱ-ի վրա:

Միաժամանակ, մշակված մոդելները ցույց են տալիս, որ ՀՆԱ աճի վրա ուղղակի հարկատեսակներից առավել մեծ դրական ազդեցություն ունի շահութահարկը (դրա 1% փոփոխությունը միջինում նպաստում է 0.5 տոկոսային կետով ՀՆԱ փոփոխության): Համեմատած եկամտային հարկի (0.23) հետ՝ շահութահարկի ազդեցությունը կրկնակի է: Շահութահարկի բեռի փոփոխության ավելի բարձր ազդեցությունը կարելի է բացատրել նրանով, որ շահութահարկով հարկման սուբյեկտ են ձեռնարկությունները, որոնք, ըստ էության, ավելի արդյունավետ են գործում ռեսուրսների տնօրինման հարցում, քան որոշ անհատներ (եկամտային հարկի դեպքում): Ավելի բարձր հարկային բեռը նշանակում է կազմակերպության եռանդուն և արդյունավետ աշխատանք, ինչն ուղղակիորեն նպաստում է տնտեսական աճին: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել ստվերի գործոնը<sup>145</sup>, որն ավելի բարձր դրույքաչափերի պարագայում աճում է: Հարկ է նկատել նաև, որ շահութահարկի աճի ներքո դիտարկ-

<sup>144</sup> Աղբյուրը՝ հեղինակների գնահատումներ:

<sup>145</sup> Հաշվարկվում է ՀՆԱ-ում, սակայն չի ներառվում հարկերում:

վել է շահույթի ու շահութաբերության աճ, որն էլ հենց միկրոմակարդակում տնտեսական աճի արդյունք է: Հետևաբար՝ ոչ միայն շահութահարկի ծավալի աճն է հանգեցնում ՀՆԱ աճին, այլ հակառակը՝ ՀՆԱ աճը հանգեցնում է շահութահարկից պետական եկամուտների մուտքերի աճին:

Հատկանշական է նաև ակցիզային հարկի մեծ ազդեցությունը, որը կարող է պայմանավորված լինել նրանով, որ ակցիզային հարկով հարկման սուբյեկտների շրջանում խոշոր ձեռնարկությունների կշիռն ավելի մեծ է (օրինակ՝ խմիչք, ծխախոտ և այլն): Ակցիզային հարկի մեծ կարևորությունը ՀՆԱ-ի առումով, կարելի է բացատրել խոշոր ձեռնարկությունների, որպես կանոն, բարձր արտադրողականությամբ:

Հետազոտության նպատակն եղել նաև յուրաքանչյուր հարկատեսակի բեռի օպտիմալ մակարդակի գնահատումը կամ, այլ կերպ ասած, այն կետը, որից հետո հարկային բեռի ազդեցությունը դրականից դառնում է բացասական: Գրեթե բոլոր հարկատեսակների մասով հարկային բեռի փաստացի մակարդակը գերազանցում է օպտիմալ շեմը, ինչը համընկնում է հարկային՝ ընդամենը բեռի մասով կատարված նմանատիպ վերլուծությանը՝ սույն հետազոտության մեկ այլ բաժնում:

Միայն ակցիզային հարկի պարագայում հարկային բեռը բավական մոտ է օպտիմալ դրույքաչափին: Բացառություն է նաև շահութահարկը, որի պարագայում փաստացի մակարդակը (2.9%) մոտ կրկնակի քիչ է օպտիմալ մակարդակից, ինչը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ հավելյալ հարկային բեռը կարող է նպաստել տնտեսական աճին:

Մյուս հարկատեսակների պարագայում փաստացի մակարդակն ավելին է, քան օպտիմալը կամ, այլ կերպ ասած, փաստացի մակարդակի դեպքում ազդեցությունը բացասական է: Եկամտային հարկի առումով, այս շեղումը մոտ կրկնակի է, ԱԱՀ-ի պարագայում՝ շատ ավելի քիչ՝ մոտ 15%:

Շրջանառության հարկի դեպքում ազդեցությունը և շրջան կետը բացասական են: Այս հարկատեսակը հավաքագրված ընդամենը հարկային եկամուտների մեջ ունի փոքր կշիռ (2%): Այս դեպքում փոքր ազդեցության պատճառով կարող է պայմանավորված լինել ստվերի հանգամանքով: Վերջինիս նվազեցումն էական ազդեցություն կարող է ունենալ ստացված պատկերի փոփոխության կամ ճշգրտման տեսանկյունից:

Ընդհանրացնելով նշենք, որ որոշ հարկատեսակների տեսանկյունից, արձանագրված պատկերը համահունչ է ընդհանուր հարկային բեռի հետազոտման պատկերին, ինչը ենթադրում է, որ օպտիմալ հարկային բեռը ներկա հարկային բեռից ավելի ցածր մակարդակում է: Սակայն, հարկային բեռի շրջանակում կատարվող ամեն մի փոփոխություն պետք է կատարվի ստվերի կրճատումից ու պետական ծախսային քաղաքականության բարելավումից հետո միայն: Հակառակ պարագայում կատարված փոփոխությունների դրական էֆեկտները զգալի չեն լինի:

**Տ**նտեսական աճի և պետության եկամտային քաղաքականության միջև փոխադարձ կապի գնահատման համատեքստում նախ՝ ուսումնասիրվել է հայրենական և արտասահմանյան հեղինակների՝ թեմային վերաբերող հետազոտությունների հիմնական շրջանակը: Դա թույլ է տվել բացահայտել հետազոտության տեսամեթոդական հիմքը, ինչպես նաև միջազգային փորձն ու առաջադեմ մոտեցումները: Հետագա վերլուծության շրջանակում հետազոտվել են տնտեսական աճի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները, ապա գնահատվել է տնտեսական աճի գործում եկամտային քաղաքականության ունեցած դերը: Եկամուտների ավելացմանը միտված տնտեսական աճի ապահովման և տնտեսական աճին նպաստող եկամտային քաղաքականության մշակման ուղղությամբ կատարված հետազոտությունը թույլ է տվել գնահատել նաև օպտիմալ հարկային բեռի և հարկային եկամուտների վրա ազդող գործոնները, տնտեսական աճի վրա առանձին հարկատեսակների ազդեցությունը: Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարելի է կատարել մի շարք եզրահանգումները: Մասնավորապես՝ արտաքին գործոնների և եկամտային քաղաքականության կապի գնահատման ուսումնասիրությունից պարզվել է.

- Ինչպես նշվում է թե՛ տեսական և թե՛ փորձառական աշխատանքներում, օտարերկրյա ուղղակի ներդրումները տնտեսական աճի ապահովման հիմնական արտաքին գործոնն են, սակայն, դրանք նշանակալի ազդեցություն չունեն ՀՀ տնտեսական աճի վրա:
- ՕՈՒՆ-ի՝ եկամուտների և ՀՆԱ աճի վրա նվազ ազդեցության հիմնական պատճառներից մեկը ոչ բազմազանեցված և քիչ արտադրողական ճյուղերում կատարված ներդրումներն են, ինչպես նաև դրանց տատանողական վարքագիծն ու ոչ բավարար մակարդակը, որը ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է միջինում մոտ 3.2 տոկոս: ՀՀ տնտեսությունը չափազանց զգայուն է արտաքին առաջարկի, պահանջարկի և դրամավարկային ցնցումների հանդեպ: Այդ երեք ցնցումները միասին, ըստ վարիացիայի բաշխման արդյունքների, բացատրում են ՀՆԱ վարիացիայի մոտ կեսը: Առաջարկի ցնցումը գերիշխող ազդեցություն ունի հատկապես ՀՆԱ-ի վրա:
- Նավթի գների շոկի նկատմամբ ՀՆԱ դրական արձագանքը հիմնականում պայմանավորված է արտահանման ավելացման և նավթի բարձր գների արդյունքում ՌԴ տնտեսական աճի արագացմամբ, որտեղից էլ դրական ազդեցությունները փոխանցվում են ՀՀ տնտեսություն:
- Արտաքին ցնցումների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա տարածվում է հիմնականում դրամական փոխանցումների և առևտրի լծակների միջո-



ցով: Փոխարժեքի լծակը, ըստ մոդելի գնահատման արդյունքների, շատ թույլ ազդեցություն ունի:

- Հարկային եկամուտները նույնպես չափազանց զգայուն են արտաքին ցնցումների նկատմամբ: Այս դեպքում ՕՈՒՆ-ի աճը ևս որևէ էական ազդեցություն չունի, փոխարենը՝ դրամական փոխանցումները նպաստում են հարկային եկամուտների աճին:
- Հարկային եկամուտները բացատրում են ՀՆԱ վարիացիայի բավական փոքր մասը, իսկ ՀՆԱ-ն կրում է հարկային եկամուտների վարիացիայի մոտ 14 տոկոսը, ինչից կարելի է եզրակացնել, որ հարկային եկամուտների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա ավելի թույլ է, քան հակառակ ազդեցությունը:

Տնտեսական աճը պայմանավորող ներքին գործոնների պանելային վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- Ներքին գործոններն իրապես նշանակալի ազդեցություն ունեն ՀՆԱ աճի վրա: Մոդելի R քառակուսու 0.34 արժեքը ցույց է տալիս, որ դիտարկվող երկրների դեպքում ՀՆԱ աճի մոտ 1/3-րդը բացատրվում է ներքին գործոններով:
- Վերոնշյալը հաստատում է, որ ներքին գործոնները (կառավարման որակ, հարկաբյուջետային քաղաքականություն և ժողովրդագրական տեղաշարժեր) առանցքային դեր ունեն տնտեսական աճի օրինաչափությունների ձևավորման գործում, ուստի դրանց շարժընթացի ուսումնասիրությունը կարևոր նախապայման է կայուն տնտեսական աճ ապահովելու համար:
- Բնակչության աճի գործակիցը (0.5794) ենթադրում է վիճակագրորեն նշանակալի դրական կախվածություն կախյալ փոփոխականից: Էմպիրիկ գրականության մեջ հաճախ կարելի հանդիպել այն պնդմանը, որ բնակչության աճը կարող է լինել տնտեսական պահանջարկի կատալիզատոր:
- Պետական սպառողական ծախսերի բացասական գործակիցը (0,4065) վկայում է պետական հատվածի ներդրումների անարդյունավետության մասին: Սա հաստատվում է որոշ տնտեսական մոդելների միջոցով (չափից ավելի շատ պետական սպառումը կարող է սահմանափակել հնարավոր մասնավոր ներդրումների ծավալը):
- Վերջնական սպառման ծախսերի աճը (0,3903), ընդհակառակը, ունի դրական գործակից, ինչը համահունչ է ստանդարտ մակրոտնտեսական մոդելներին, որտեղ սպառումն ուղղակիորեն նպաստում է ՀՆԱ աճին:
- Ընթացիկ հաշվի մնացորդը (որպես ՀՆԱ տոկոս) (-0,1169), սակայն, բացասական գործակցով է: Տեսականորեն՝ ընթացիկ հաշվի ավելցուկի աճը կարող է վկայել ներքին սպառման կամ ներդրումային գոր-

ծունեության կրճատման մասին:

- Համախառն խնայողությունների դրական գործակիցը (0,1704) համընկնում է այն տեսական մեկնաբանությանը, ըստ որի՝ խնայողություններն աճի նախադրյալ են՝ հիմնված ներդրումների վրա:
- «Բնակչության խտություն» փոփոխականը (-0,0964) բացասական է, որը վկայում է ռեսուրսների սահմանափակության կամ ենթակառուցվածքներում առկա մարտահրավերների մասին, ինչպես նշվում է տնտեսագիտական որոշ ուսումնասիրություններում:
- Բնակչության խտության բացասական գործակիցը (-0,0964) ցույց է տալիս, որ բնակչության խտության մակարդակի բարձրացմամբ կախյալ փոփոխականը (ենթադրաբար՝ ՀՆԱ աճը կամ մակարդակը) նվազում է կամ հակառակը, երբ մեկ շնչի հաշվով մակերեսը մեծանում է, ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն է գրանցվում:
- Լրացուցիչ մոդելի բարձր բացատրական ուժը հաստատում է, որ ներքին գործոնները ժամանակի ընթացքում ավելի էական ազդեցություն են ունենում: Կարճաժամկետ սահմանափակումները բխում են արտաքին ցնցումներից, ինչը հաստատվել է վերլուծությամբ: Սա ցույց է տալիս ներքին և արտաքին գործոնների բարդ փոխազդեցությունը՝ կարճաժամկետ հեռանկարում գերակշռող արտաքին ազդեցություններով:
- Լրացուցիչ մոդելի արդյունքներն ամրապնդում են ներքին գործոնների երկարաժամկետ ազդեցության վարկածը: Փոփոխականները՝ ինստիտուցիոնալ որակը և հետևողական քաղաքականությունը, առաջադիմական դեր են խաղում՝ վարկածին համահունչ:

Եկամտային քաղաքականության և տնտեսական աճի փոխազդեցության ուսումնասիրության արդյունքում կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Հարկային բեռի ազդեցությունը դիտարկվող 3 մոդելում էլ նշանակալի է և զուգորդվում է ակնկալվող արդյունքների ուղղությամբ համապատասխանող գործակիցներով, այսինքն՝ հարկային բեռի աճը զուգորդվում է տնտեսական աճի ավելացմամբ:
- Հարկային բեռի՝ մեկ տոկոսային կետով ավելացումը հանգեցնում է տնտեսական աճի՝ 4.67-5.09 տոկոսային կետով:
- ՀՀ տնտեսական աճը, այլ հավասար պայմաններում, կրնա լինի իր ընդհանուր առավելագույն արժեքը, երբ հարկային բեռը կազմի 20.9-21.9 տոկոս, որն էլ դիտարկվել է որպես հարկային բեռի օպտիմալ միջակայք:
- Տնտեսական աճի առավելագույն մակարդակ ապահովող հարկային բեռի օպտիմալ մակարդակը ցածր է հարկային բեռի փաստացի ներկա մակարդակից: Պատճառը հարկային բեռի նվազագույն մակար-

դակի պայմաններում պատմականորեն բարձր տնտեսական աճի ժամանակաշրջաններն են, ինչպես նաև հավաքագրված հարկային եկամուտների օգտագործման արդյունավետության ցածր մակարդակը:

- Հիմնականում ընթացիկ սպառում ապահովող ոլորտներում պետական ծախսերի կամ ներդրումների իրականացումը, կապիտալ ներդրումների ցածր մակարդակը չեն ապահովում տնտեսական աճի բավարար աստիճան կամ բարձր աճի շարունակականություն:
- Վերջնական սպառման ծախսերի և տնտեսական աճի կապը ցույց է տալիս դրա նշանակալի դերը, մինչդեռ կառավարության վերջնական ծախսերի աճի ազդեցությունը, ըստ գնահատման արդյունքների, նշանակալի չէ ՀՀ տնտեսական աճի վրա:
- Տնտեսական աճի ապահովման գործում դրամական փոխանցումներն ու արտահանման աճը, որպես արտաքին նշանակալի գործոններ, դրական ազդեցություն են ապահովում:
- ՀՆԱ աճը պայմանավորող ցուցանիշները, ընդհանուր առմամբ, նշանակալի ազդեցություն ունեն նաև հարկային եկամուտների վրա:
- Հարկային եկամուտների տեսանկյունից, տնային տնտեսությունների սպառման ծախսերն էական ազդեցություն ունեն, մինչդեռ պետական ծախսերը՝ ոչ:
- Դրամական փոխանցումների ու արտահանման աճի ազդեցությունը հարկային եկամուտների աճի վրա նույնպես դրական է:
- Մշակված մոդելները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր հարկատեսակների առումով, ուսումնասիրված ժամանակահատվածում հարկային բեռը ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն ունի:
- Մշակված մոդելները ցույց են տալիս, որ ՀՆԱ աճի վրա ուղղակի հարկատեսակներից ավելի մեծ դրական ազդեցություն ունի շահութահարկը, որի 1% փոփոխությունը միջինում նպաստում է 0.5 տոկոսային կետով ՀՆԱ փոփոխությանը: Համեմատած եկամտային հարկի (0.23) հետ՝ շահութահարկի ազդեցությունը գնահատվում է կրկնակի:
- Շահութահարկի փոփոխության ավելի բարձր ազդեցությունը կարելի է բացատրել նրանով, որ այս դեպքում հարկման սուբյեկտ են ձեռնարկությունները, որոնք, ըստ էության, ավելի արդյունավետ կերպով են տնօրինում ռեսուրսները, քան որոշակի անհատներ (եկամտային հարկի դեպքում): Ավելի բարձր հարկային բեռը վկայում է կազմակերպության ավելի եռանդուն և արդյունավետ աշխատանքի մասին, ինչն ուղղակիորեն նպաստում է տնտեսական աճին:
- Հարկ է հաշվի առնել նաև ստվերի գործոնը<sup>146</sup>, որի դերը մեծանում է ավելի բարձր դրույքաչափերի պարագայում: Միաժամանակ, շահու-

<sup>146</sup> Հաշվարկվում է ՀՆԱ-ում, սակայն չի ներառվում հարկերում:

թահարկի աճի ներքո դիտարկվել է շահույթի ու շահութաբերության աճ, որն էլ հենց միկրոմակարդակում տնտեսական աճի արդյունք է: Հետևաբար՝ ոչ միայն շահութահարկի ծավալի աճն է հանգեցնում ՀՆԱ աճին, այլև ՀՆԱ աճը հանգեցնում է շահութահարկից պետական եկամուտների աճին:

- Հատկանշական է ակցիզային հարկի մեծ ազդեցությունը, քանի որ այս դեպքում հարկման սուբյեկտների շրջանում ավելի մեծ է խոշոր ձեռնարկությունների կշիռը: Իսկ վերջիններս, որպես կանոն, ավելի բարձր արտադրողականություն ունեն:

Հետազոտությամբ փորձ է արվել գնահատելու նաև յուրաքանչյուր հարկատեսակի բեռի օպտիմալ մակարդակը կամ, այլ կերպ ասած, այն կետը, որից հետո հարկային բեռի ազդեցությունը դրականից դառնում է բացասական, որի արդյունքում բացահայտվել է հետևյալը.

- Գրեթե բոլոր հարկատեսակների մասով հարկային բեռի փաստացի մակարդակը գերազանցում է օպտիմալ շեմը, ինչը համընկնում է ընդհանուր հարկային բեռի վերլուծությանը:
- Միայն ակցիզային հարկի պարագայում է, որ հարկային բեռը բավական մոտ է օպտիմալ դրույքաչափին: Շահութահարկի պարագայում հարկային բեռի փաստացի մակարդակը (2.9%) մոտ կրկնակի ցածր է օպտիմալ մակարդակից, ինչը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ հավելյալ հարկային բեռը կարող է նպաստել տնտեսական հավելաճին: Սակայն, այս ուղղությամբ փոփոխություններ կատարելիս պետք է հաշվի առնել շահութահարկ վճարողների կառուցվածքը (խոշոր և ՓՄՁ)՝ կատարելով ազդեցության գնահատումներ առանձին խմբերի համար:
- Մյուս հարկատեսակների պարագայում հարկային բեռի փաստացի մակարդակն ավելի բարձր է, քան օպտիմալը կամ, այլ կերպ ասած, փաստացի մակարդակը բացասական ազդեցություն ունի: Եկամտային հարկի առումով, այս շեղումը մոտ կրկնակի է, ԱԱՀ-ի պարագայում՝ շատ ավելի քիչ՝ մոտ 15%:
- Շրջանառության հարկի պարագայում ազդեցությունը և շրջան կետը բացասական են: Այս հարկատեսակի կշիռը հավաքագրված ընդամենը հարկային եկամուտներում փոքր է (2%):

Ընդհանրացնելով հետազոտությունը՝ կարող ենք նշել, որ գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ տնտեսական աճը, այլ հավասար պայմաններում, իր ընդհանուր առավելագույն արժեքը կընդունի, երբ հարկային բեռը կազմի 20.9-21.9 տոկոս, որն էլ դիտարկել ենք որպես հարկային բեռի օպտիմալ միջակայք: Վերջինս ցածր է հարկային բեռի փաստացի ներկա մակարդակից: Այս համատեքստում, սակայն, տնտեսական աճի խթանման

հիմնական ուղին ոչ թե հարկային բեռի նվազեցումն է միայն, այլ պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը:

Գնահատման արդյունքների համաձայն՝ կառավարության վերջնական սպառման ծախսերի ազդեցությունն ինչպես տնտեսական աճի, այնպես էլ պետական եկամուտների ավելացման վրա նշանակալի չէ: Կարելի է պնդել, որ այս ծախսերը չեն ապահովում տնտեսական աճի բավարար աստիճան կամ բարձր աճի շարունակականություն, ուստի անհրաժեշտ է վերանայել պետական ծախսային քաղաքականությունը և բարելավել ծախսերի նպատակայնությունն ու արդյունավետությունը:

Փաստացի, հարկային բեռի բարձր լինելու հանգամանքով պայմանավորված, անհրաժեշտ է վերանայել ինչպես հարկերի դրույքաչափերը, այնպես էլ դրանց կազմը: Շրջանառության հարկի վերաբերյալ գնահատականները ցույց են տալիս, որ այս հարկատեսակը հարկային եկամուտների կազմում հակառակ ազդեցություն ունի, հետևաբար՝ պետք է դիտարկել տվյալ համակարգի բարեփոխումը՝ մի շարք ուղղություններով: Առաջին ուղղությունը դրանում ստվերի չափի փոքրացումն է, ինչն էականորեն կարող է փոփոխել հարկատեսակից հավաքագրվող եկամուտների ազդեցության պատկերը: Երկրորդ ուղղությունն արդեն հարկատեսակի նպատակահարմարության կամ դրա հարկման կառուցակարգերում փոփոխությունների կատարումն է:

1. Անաստասյան Ս., Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում», ՀՀ ԳԱԱ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2014:  
<https://arar.sci.am/dlibra/publication/280669/edition/257696/content>
2. Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Հարկային համակարգի դերը տնտեսական անվտանգության գործում, «Բանբեր ՀՊՏՀ», «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2017, [https://asue.am/upload/files/science/banber/2017-year-4/15-B\\_2017.4\\_13.pdf](https://asue.am/upload/files/science/banber/2017-year-4/15-B_2017.4_13.pdf)
3. Թավադյան Ա., Թևիկյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության հիմնախնդիրները և դրանց ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014:
4. Կիրակոսյան Գ., ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավման և հարկային բեռի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր Երևանի համալսարանի տնտեսագիտություն», 2021, N1,  
[http://www.old.yso.am/files/05G\\_Kirakosyan.pdf](http://www.old.yso.am/files/05G_Kirakosyan.pdf)
5. Շահինյան Տ. Վ., Ռաֆայելյան Տ. Ա., Հարկային մարմինների դերն ու նշանակությունը տնտեսության մեջ, ՀՀ ԳԱԱ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2017:  
<https://arar.sci.am/dlibra/publication/280873/edition/257891/content>
6. Սարգսյան Ա. Ժ., «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան 2022,  
[https://www.bok.am/sites/default/files/2022-11/015-Ani\\_Sargsyan%201.pdf?fbclid=IwAR3GPr0QmtiW99vm1tg8OXloLMk8XoiPeW\\_tCzzSzZ77n6MWSbOfPHHTBJM](https://www.bok.am/sites/default/files/2022-11/015-Ani_Sargsyan%201.pdf?fbclid=IwAR3GPr0QmtiW99vm1tg8OXloLMk8XoiPeW_tCzzSzZ77n6MWSbOfPHHTBJM)
7. Սարոյան Կ. Ի., «Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսություն, Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2022:
8. Վարդանյան Դ., Պատճառականության կապերը համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև, «Բանբեր ՀՊՏՀ», 2021.3 (2021): 8–27:
9. Վարդանյան Ք., Ավագյան Գ., Կարապետյան Ն., Պետական պարտքի կառավարման և տնտեսական աճի վրա պարտքի ազդեցության վերաբերյալ էմպիրիկ հետազոտությունների արդյունքների մեկնաբանում, «Հանրային կառավարում», 1/2021 (2021): 116–29:
10. Տիգրանյան Ի., Հովհաննիսյան Հ., Վարդանյան Ք., Ավագյան Գ., ՀՀ տնտեսական աճի վրա ազդող գործոնների վերլուծությունը, «Բանբեր ՀՊՏՀ», 2018.1 (2018): 28–38:
11. Abere, S. S., & Akinbobola, T. O. (2020). External shocks, institutional quality, and macroeconomic performance in Nigeria. *Sage Open*, 10(2), 2158244020919518.

12. Acemoglu, Daron, and Simon Johnson. "Disease and Development: The Effect of Life Expectancy on Economic Growth." *Journal of Political Economy* 115, no. 6 (December 2007): 925–85. <https://doi.org/10.1086/529000>.
13. Al Nasser, Omar M. "The Determinants of the U.S. Foreign Direct Investment: Does the Region Matter?" *Global Economic Review* 36, no. 1 (March 2007): 37–51. <https://doi.org/10.1080/12265080701217181>.
14. A.Margaryan, STRUCTURAL IMPACTS OF THE TAX SYSTEM ON THE ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA , MESSENGER OF ASUE 2023.1 , p.p. 5-18, <https://asue.am/upload/files/science/banber/2023-year-1/1.pdf>
15. AHMAD GHAZALI. "Analyzing the Relationship between Foreign Direct Investment Domestic Investment and Economic Growth for Pakistan," 2012. <https://doi.org/10.13140/2.1.1730.0484>.
16. Aisbett, Emma. "Why Are the Critics so Convinced That Globalization Is Bad for the Poor?" Cambridge, MA: National Bureau of Economic Research, January 2005. <https://doi.org/10.3386/w11066>.
17. Alfò, M., Carbonari, L., & Trovato, G. (2022). On the effects of taxation on growth: An empirical assessment. *Macroeconomic Dynamics*, 1-30. doi:10.1017/S1365100522000219
18. ALI F. DARRAT, and JAYANTA SARKAR. "GROWTH CONSEQUENCES OF FOREIGN DIRECT INVESTMENT: SOME RESULTS FOR TURKEY." *Journal of Economic Development* 34, no. 2 (December 2009): 85–96. <https://doi.org/10.35866/CAUJED.2009.34.2.004>.
19. Almfraji, Mohammad Amin, and Mahmoud Khalid Almsafir. "Foreign Direct Investment and Economic Growth Literature Review from 1994 to 2012." *Procedia - Social and Behavioral Sciences* 129 (May 2014): 206–13. <https://doi.org/10.1016/j.sbspro.2014.03.668>.
20. Arif, I., Khan, L., & Ali Raza, S. (2018). External Resources and Economic Growth: An Empirical Analysis of South Asian Countries. *Zagreb International Review of Economics & Business*, 21(2), 1-17.
21. Ayouni, S. E., Farhani, R., & Hamdaoui, M. (2022). External factors and economic growth in Tunisia: ARDL approach with structural change analysis. *Arab Economic and Business Journal*, 14(2), 1-17.
22. Balasoïu, Narciz, Iulian Chifu, and Marian Oancea. 2023. "Impact of Direct Taxation on Economic Growth: Empirical Evidence Based on Panel Data Regression Analysis at the Level of Eu Countries" *Sustainability* 15, no. 9: 7146. <https://doi.org/10.3390/su15097146>
23. Barro, Robert J. (1996). Determinants of Economic Growth: A Cross-Country Empirical Study. National Bureau of Economic Research, Working Paper: 5698.
24. Barro, Robert. "Determinants of Economic Growth: A Cross-Country Empirical Study." Cambridge, MA: National Bureau of Economic Research, August 1996. <https://doi.org/10.3386/w5698>.
25. Barrot L., Calderón C., Servén, L. Openness, specialization, and the external vulnerability of developing countries. *Journal of Development Economics W/P* 7711. 2018. 34 pages.
26. Barrot, L. D., Calderón, C., & Servén, L. (2018). Openness, specialization, and the external vulnerability of developing countries. *Journal of Development Economics*, 134, 310-328.

27. Batini. N et al., Fiscal Multipliers: Size, Determinants, and Use in Macroeconomic Projections, Fiscal Affairs Department, IMF, 2014, p. 6
28. Blanchard O. and Perotti R., An Empirical Characterization Of The Dynamic Effects Of Changes In Government Spending And Taxes On Output, Quarterly Journal of Economics, Vol. 117, N 4, 2002, pp. 1329-1368
29. Bostan, I., Toma, C., Aevoae, G., Robu, I. B., Mardiros, D. N., & Topliceanu, S. C. (2023). Effects of Internal and External Factors on Economic Growth in Emerging Economies: Evidence from CEE Countries. *Eastern European Economics*, 61(1), 66-85.
30. Bostan, Ionel, Constantin Toma, George Aevoae, Ioan-Bogdan Robu, Daniela Neonila Mardiros, and Stefan Cătălin Topliceanu. "Effects of Internal and External Factors on Economic Growth in Emerging Economies: Evidence from CEE Countries." *Eastern European Economics* 61, no. 1 (January 2, 2023): 66–85.  
<https://doi.org/10.1080/00128775.2022.2109489>.
31. Bosworth, B. P., Collins, S. M., & Reinhart, C. M. (1999). Capital flows to developing economies: implications for saving and investment. *Brookings papers on economic activity*, 1999(1), 143-180.
32. Calvo, G. A., Leiderman, L., & Reinhart, C. M. (1993). Capital inflows and real exchange rate appreciation in Latin America: the role of external factors. *Staff Papers*, 40(1), 108-151.
33. Chugunov, Igor, and Mykola Pasichnyi. "Fiscal Stimuli and Consolidation in Emerging Market Economies." *Investment Management and Financial Innovations* 15, no. 4 (November 8, 2018): 113–22. [https://doi.org/10.21511/imfi.15\(4\).2018.09](https://doi.org/10.21511/imfi.15(4).2018.09).
34. D. Abdul Halim, Md. Mominur Rahman, The effect of taxation on sustainable development goals: evidence from emerging countries, *Heliyon*, Volume 8, Issue 9, 2022, e10512, ISSN 2405-8440, <https://doi.org/10.1016/j.heliyon.2022.e10512>.  
<https://www.sciencedirect.com/science/article/pii/S240584402201800X>)
35. Davoodi H., Zou H., Fiscal Decentralization and Economic Growth: A Cross-Country Study, *Journal of Urban Economics*, 1998
36. "Determinants of Economic Growth: Implications of the Global Evidence for Chile." *Cuadernos de Economía, Latin American Journal of Economics* 36, no. April 1999 (1999): 443–478.
37. Engen E. M. and Skinner J., Taxation and Economic Growth, NBER Working Paper No. 5826, Public Economics, Cambridge, 1996
38. Falvey, Rod, and Udo Kreickemeier. "Globalisation and Factor Returns in Competitive Markets." *Journal of International Economics* 66, no. 1 (May 2005): 233–248.  
<https://doi.org/10.1016/j.jinteco.2004.04.004>.
39. Fawaz, Fadi, Masha Rahnama, and Victor J. Valcarcel. "A Refinement of the Relationship between Economic Growth and Income Inequality." *Applied Economics* 46, no. 27 (September 22, 2014): 57-62 <https://doi.org/10.1080/00036846.2014.929624>.
40. Fischer, Stanley, and Ratna Sahay. "The Transition Economies After Ten Years." Cambridge, MA: National Bureau of Economic Research, April 2000.  
<https://doi.org/10.3386/w7664>.
41. Fischer, Stanley. "Globalization and Its Challenges." *American Economic Review* 93, no. 2 (April 1, 2003): 1–30. <https://doi.org/10.1257/000282803321946750>.
42. Fiti, Taki & Petrevski, Goran & Trenovski, Borce & Tashevskva, Biljana & Filipovski,



- Vladimir & Trpeski, Predrag & Cvetkoska, Violeta & Antovska, Marica. (2017). Macroeconomic Effects of Fiscal policy in Macedonia.
43. Glykou I., Siokorelis V., Taxation as a determinant of economic growth in South-Eastern Europe: The case of Bulgaria and Croatia, *European Research Studies*, Vol. XVI, Issue (2), 2013, pp. 68-81.
44. Goran Petrevski, Borce Trenovski & Biljana Tashevska. The effectiveness of fiscal and monetary policies in a small open economy – the case of Macedonia Pages 805-821 | Received 02 Nov 2018, Accepted 10 Apr 2019, Published online: 07 May 2019
45. Guillermo, Acuña. “Internal and External Factors Explaining Chilean Economic Activity.” *Universidad Del Desarrollo*, no. July 2017 (2017).
46. Gustav, Ranis. “Human Development and Economic Growth.” *New Haven, CT: Economic Growth Center, Yale University*, no. May 2004 (2004).
47. Hanushek, Eric A. “Economic Growth in Developing Countries: The Role of Human Capital.” *Economics of Education Review* 37 (December 2013): 204–212.  
<https://doi.org/10.1016/j.econedurev.2013.04.005>.
48. Hunady J., Orviska M., The non-linear effect of corporate taxes on economic growth, *Timisoara Journal of Economics and Business*, 2015, pp. 14-31
49. Hye, Q. M. A., & Lau, W. Y. (2015). Trade openness and economic growth: empirical evidence from India. *Journal of Business Economics and Management*, 16(1), 188-205.
50. IMF Working Paper Institute for Capacity Development and Fiscal Affairs Department: Tax Policy and Inclusive Growth Prepared by Khaled Abdel-Kader and Ruud de Mooij Authorized for distribution by Vitor Gaspar and Valerie Cerra December 2020
51. IMF, 2003. Fund assistance for countries facing exogenous shocks. Policy Development and Review Department. International Monetary Fund.
52. International Monetary Fund. “Fiscal Policy and Long-Term Growth.” *Policy Papers* 15 (April 20, 2015). <https://doi.org/10.5089/9781498344654.007>.
53. Jing Zeng, Fangjie Dai, Kam C. Chan, The impact of an accelerated depreciation tax policy on employment: Evidence from China, *Journal of Asian Economics*, Volume 86, 2023, 101607, ISSN 1049-0078, <https://doi.org/10.1016/j.asieco.2023.101607>.  
(<https://www.sciencedirect.com/science/article/pii/S1049007823000271>)
54. Joshua, U., Adedoyin, F. F., & Sarkodie, S. A. (2020). Examining the external-factors-led growth hypothesis for the South African economy.
55. Keho, Y. (2017). The impact of trade openness on economic growth: The case of Cote d'Ivoire. *Cogent Economics & Finance*, 5(1), 1332820.
56. Koojaroenprasit, S. (2012). The impact of foreign direct investment on economic growth: A case study of South Korea. *International Journal of Business and Social Science*, 3(21).
57. Lean, Hooi, and Bee Wah Tan. “Linkages between Foreign Direct Investment, Domestic Investment and Economic Growth in Malaysia.” *Journal of Economic Cooperation and Development* 32 (4): 75–96.” *Journal of Economic Cooperation & Development* 32, no. 4 (2011): 75–95.
58. Lee Y., Gordon R., Tax structure and economic growth, *Journal of Public Economics*, vol. 89, issue 5-6, 2005
59. Li, Kui-Wai. “The Optimal Level and Impact of Internal Factors on Growth.” *Modern Economy* 2, no. July 2011 (2011): 181–93.
60. Li, X., & Liu, X. (2005). Foreign direct investment and economic growth: an

- increasingly endogenous relationship. *World development*, 33(3), 393-407.
61. Li, Xiaoying, and Xiaming Liu. "Foreign Direct Investment and Economic Growth: An Increasingly Endogenous Relationship." *World Development* 33, no. 3 (March 2005): 393-407. <https://doi.org/10.1016/j.worlddev.2004.11.001>.
  62. Loayza N., et al. Macroeconomic volatility, and welfare in developing countries: An introduction. *The World Bank Economic Review* 21(3). 2007. pp. 343-357.
  63. Macek R., The Impact of Taxation on Economic Growth: Case Study of OECD Countries, *Review of Economic Perspectives*, Vol. 14, Issue 4, 2015, pp. 309-328
  64. Mahran, Hisham Abdeltawab. "The Impact of Governance on Economic Growth: Spatial Econometric Approach." *Review of Economics and Political Science* 8, no. 1 (January 5, 2023): 37-53. <https://doi.org/10.1108/REPS-06-2021-0058>.
  65. Mehar, Muhammad Ayub. "Role of Monetary Policy in Economic Growth and Development: From Theory to Empirical Evidence." *Asian Journal of Economics and Banking* 7, no. 1 (March 24, 2023): 99-120. <https://doi.org/10.1108/AJEB-12-2021-0148>.
  66. Meyer, Daniel Francois, and Natanya Meyer. "The Relationship between Entrepreneurial Factors and Economic Growth and Development: The Case of Selected European Countries," 2020, 15.
  67. Mishchenko, Volodymyr, Svitlana Naumenkova, Svitlana Mishchenko, and Viktor Ivanov. "Inflation and Economic Growth: The Search for a Compromise for the Central Bank's Monetary Policy." *Banks and Bank Systems* 13, no. 2 (July 5, 2018): 153-63. [https://doi.org/10.21511/bbs.13\(2\).2018.13](https://doi.org/10.21511/bbs.13(2).2018.13).
  68. Mohamed, Masoud Rashid, Keshminder Jit Singh, and Chung-Yee Liew. "Impact of Foreign Direct Investment & Domestic Investment on Economic Growth of Malaysia." *Malaysian Journal of Economic Studies* 50 (2013): 21-35.
  69. Mollick, André Varella, René Cabral, and Francisco G. Carneiro. "Does Inflation Targeting Matter for Output Growth? Evidence from Industrial and Emerging Economies." *Journal of Policy Modeling* 33, no. 4 (July 2011): 537-51. <https://doi.org/10.1016/j.jpolmod.2011.03.010>.
  70. Monamodi, Nkosinathi. "The Impact of Fiscal and Monetary Policy on Economic Growth in Southern African Custom Union (SACU) Member Economies between 1980 and 2017: A Panel ARDL Approach." *SSRN Electronic Journal*, 2019, 35. <https://doi.org/10.2139/ssrn.3480082>.
  71. Naudé, Wim. "Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy." *SSRN Electronic Journal*, 2013. <https://doi.org/10.2139/ssrn.2314802>.
  72. Nguyen, H., Tran, G., & Le, M. (2014). The impact of external shocks on small open economies: Evidence from east asian countries. *International Journal of Economics and Finance*, 6(2), 206-217.
  73. Nissan, Edward, Miguel-Ángel Galindo Martín, and María-Teresa Méndez Picazo. "Relationship between Organizations, Institutions, Entrepreneurship and Economic Growth Process." *International Entrepreneurship and Management Journal* 7, no. 3 (September 2011): 311-24. <https://doi.org/10.1007/s11365-011-0191-2>.
  74. Omotayo, & Efuntaade, Alani & Olusegun, Aca & Efuntaade, Alani & Omotayo, Efuntaade & Efuntaade, Omotayo. (2023). Tax Income and Economic Development: The Resource Dependency Theory (RDT). 9. 29-44. 10.56201/jafm.v9.no1.2023.pg29.44.
  75. Raddatz, C. (2007). Are external shocks responsible for the instability of output in low-

- income countries?. *Journal of Development Economics*, 84(1), 155-187.
76. Reed R., The robust relationship between taxes and U.S. state income growth, *National Tax Journal*, Vol. 61, No. 1, 2008
77. Robinson, James A, Daron Acemoglu, and Johnson Simon. “Institutions as a Fundamental Cause of Long-Run Growth.” *Handbook of Economic Growth Eds. P. Aghion and S. Durlauf, North-Holland, Amsterdam*, 2005, 386–472.
78. Ruane, Frances, and Ali Uğur \*. “Foreign Direct Investment and Productivity Spillovers in Irish Manufacturing Industry: Evidence from Plant Level Panel Data.” *International Journal of the Economics of Business* 12, no. 1 (February 2005): 53–66.  
<https://doi.org/10.1080/1357151042000323139>.
79. Rubin, Amir, and Dan Segal. “The Effects of Economic Growth on Income Inequality in the US.” *Journal of Macroeconomics* 45 (September 2015): 258–73.  
<https://doi.org/10.1016/j.jmacro.2015.05.007>.
80. Shafiq, M. N., Bhatti, M. A., Bashir, F., & Nawaz, M. A. (2022). Impact of Taxation on Economic Growth: Empirical Evidence from Pakistan. *Journal of Business and Social Review in Emerging Economies*, 8(2), 381-392. <https://doi.org/10.26710/jbsee.v8i2.2309>
81. Tax changes and economic growth: Empirical evidence for a panel of OECD countries. Davide Furceri. Georgios Karras. OECD, University of Palermo.  
[https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/ws\\_pubfinance/paper\\_Furceri.pdf?e6a4da695b59b4e8685dc92b037c6c3c](https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/ws_pubfinance/paper_Furceri.pdf?e6a4da695b59b4e8685dc92b037c6c3c)
82. Tax Policy for Economic Recovery and Growth: Arnold, J. M., Brys, B., Heady, C., Johansson, Å., Schweltnus, C., & Vartia, L. (2011). *The Economic Journal*, 121(550), F59–F80. doi:10.1111/j.1468-0297.2010.02415.x
83. Taxes and Economic Growth in OECD Countries: A Meta-Analysis Nazila Alinaghi W. Robert Reed WORKING PAPER No. 37/2016 Department of Economics and Finance School of Business and Economics University of Canterbury Private Bag 4800, Christchurch New Zealand <https://repec.canterbury.ac.nz/cbt/econwp/1637.pdf>
84. Teixeira, Aurora A.C., and Anabela S.S. Queirós. “Economic Growth, Human Capital and Structural Change: A Dynamic Panel Data Analysis.” *Research Policy* 45, no. 8 (October 2016): 1636–48. <https://doi.org/10.1016/j.respol.2016.04.006>.
85. Terza, Cristian G. “Total Entrepreneurial Activity and Economic Growth.” *Journal of Public Administration, Finance and Law*, no. 17 (2020): 485–90.
86. Tung, Le Thanh, and Le Nguyen Hoang. “Impact of R&D Expenditure on Economic Growth: Evidence from Emerging Economies.” *Journal of Science and Technology Policy Management*, February 9, 2023. <https://doi.org/10.1108/JSTPM-08-2022-0129>.
87. Upreti, Parash. “Factors Affecting Economic Growth in Developing Countries.” *Major Themes in Economics* 17, no. Spring 2015 (2015): 37–54.

Հավելված 1

Տարեկան շարժերով գնահատման արդյունքները (not actual)

	1	2	3	4	5	6	7	8
	10.62** (6.802)	12.889*** (17.938)	12.585*** (11.934)	11.696*** (17.986)	11.638*** (18.508)	12.26*** (15.38)	12.604** (14.036)	12.746*** (11.737)
Tax burden <sup>2</sup>	-28.54*** (-4.365)	-37.77*** (-11.013)	-36.4*** (-8.887)	-32.01*** (-10.49)	-31.86*** (-10.835)	-34.58*** (-9.221)	-36.08*** (-8.651)	-36.71*** (-7.262)
Gross savings	0.509* (-2.244)	-	-	-	-	-	-	-
Exports	-	0.132** (2.479)	-	-	-	-	-	-
Gov final cons	-	-	0.17 (0.135)	-	-	-	-	-
Remittances	-	-	-	0.224*** (3.822)	-	-	-	-
Households cons	-	-	-	-	0.599*** (4.102)	-	-	-
Gross savings	-	-	-	-	-	0.084** (1.856)	-	-
ΔEmployment in services	-	-	-	-	-	-	0.5 (0.231)	-
ΔPopulation growth	-	-	-	-	-	-	-	5.294 (0.14)
Constant	-	-	-	-	-	-	-	-
Obs.	20	20	20	20	20	20	20	20
Turning Point	18.06%	17.06%	17.28%	18.26%	18.26%	17.72%	17.46%	17.36%

Հավելված 2

Dependent Variable: GDPGR  
 Method: Least Squares  
 Date: 10/26/23 Time: 20:17  
 Sample (adjusted): 2008Q2 2022Q4  
 Included observations: 59 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
GDPGR(-1)	0.694050	0.078165	8.879264	0.0000
INCOME_GDP_SA	0.225867	0.059951	3.767545	0.0004
INCOME_GDP_SA^2	-0.041653	0.011654	-3.574254	0.0007
EXPORTS_AMD	0.101112	0.026142	3.867736	0.0003
R-squared	0.494219	Mean dependent var		1.033864
Adjusted R-squared	0.466631	S.D. dependent var		0.071979
S.E. of regression	0.052567	Akaike info criterion		-2.988049
Sum squared resid	0.151984	Schwarz criterion		-2.847199
Log likelihood	92.14745	Hannan-Quinn criter.		-2.933067
Durbin-Watson stat	2.118424			

Dependent Variable: GDPGR  
 Method: Least Squares  
 Date: 10/26/23 Time: 19:49  
 Sample (adjusted): 2008Q2 2022Q4  
 Included observations: 59 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
GDPGR(-1)	0.547146	0.086023	6.360461	0.0000
VALUE_ADDED_GDP_SA	0.110380	0.021397	5.158651	0.0000
VALUE_ADDED_GDP_SA^2	-0.006705	0.001403	-4.778072	0.0000
EXPORTS_AMD	0.114348	0.024261	4.713203	0.0000
R-squared	0.572553	Mean dependent var		1.033864
Adjusted R-squared	0.549238	S.D. dependent var		0.071979
S.E. of regression	0.048326	Akaike info criterion		-3.156323
Sum squared resid	0.128445	Schwarz criterion		-3.015473
Log likelihood	97.11152	Hannan-Quinn criter.		-3.101341
Durbin-Watson stat	1.965165			

Dependent Variable: GDPGR  
 Method: Least Squares  
 Date: 10/26/23 Time: 19:50  
 Sample (adjusted): 2008Q2 2022Q4  
 Included observations: 59 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
GDPGR(-1)	0.694017	0.075947	9.138239	0.0000
EXCISE_TAX_GDP_SA	0.428376	0.109029	3.929008	0.0002
EXCISE_TAX_GDP_SA^2	-0.144807	0.037298	-3.882405	0.0003
EXPORTS_AMD	0.088431	0.025890	3.415607	0.0012
R-squared	0.502469	Mean dependent var		1.033864
Adjusted R-squared	0.475331	S.D. dependent var		0.071979
S.E. of regression	0.052137	Akaike info criterion		-3.004496
Sum squared resid	0.149505	Schwarz criterion		-2.863646
Log likelihood	92.63263	Hannan-Quinn criter.		-2.949514
Durbin-Watson stat	2.044173			

Dependent Variable: GGDPGR  
 Method: Least Squares  
 Date: 10/26/23 Time: 19:09  
 Sample: 2013Q2 2022Q4  
 Included observations: 39

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
GGDPGR(-1)	0.684850	0.109458	6.256731	0.0000
DSALES_GDP	-0.207013	0.120173	-1.722627	0.0943
DSALES_GDP^2	-1.320425	1.160679	-1.137632	0.2635
REMM	0.000590	0.000343	1.717127	0.0953
DEXPORT	0.000990	0.000397	2.492231	0.0179
C	0.330158	0.114823	2.875379	0.0070
R-squared	0.685520	Mean dependent var		1.042846
Adjusted R-squared	0.637872	S.D. dependent var		0.057302
S.E. of regression	0.034483	Akaike info criterion		-3.756070
Sum squared resid	0.039239	Schwarz criterion		-3.500138
Log likelihood	79.24337	Hannan-Quinn criter.		-3.664244
F-statistic	14.38704	Durbin-Watson stat		2.139011
Prob(F-statistic)	0.000000			

Dependent Variable: GGDPGR  
 Method: Least Squares  
 Date: 10/26/23 Time: 19:52  
 Sample (adjusted): 2013Q2 2022Q4  
 Included observations: 39 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
GGDPGR(-1)	0.473730	0.111374	4.253506	0.0002
PROFIT_GDP_SA	0.537026	0.193902	2.769583	0.0090
PROFIT_GDP_SA^2	-0.046734	0.016218	-2.881631	0.0068
REMM	0.000545	0.000308	1.772049	0.0853
C	-0.968129	0.549571	-1.761610	0.0871
R-squared	0.672746	Mean dependent var		1.042846
Adjusted R-squared	0.634246	S.D. dependent var		0.057302
S.E. of regression	0.034655	Akaike info criterion		-3.767536
Sum squared resid	0.040833	Schwarz criterion		-3.554259
Log likelihood	78.46696	Hannan-Quinn criter.		-3.691014
F-statistic	17.47373	Durbin-Watson stat		1.554315
Prob(F-statistic)	0.000000			

*Руководитель исследовательской группы*

**А. БЕДЖАНИЯН**

*кандидат экономических наук, ассистент*

*Состав исследовательской группы*

**Э. АГАБЕКЯН**

*кандидат экономических наук, доцент*

**С. ЛЕВОНЯН**

*кандидат экономических наук, лектор*

**А. ТАРПОШЯН**

*кандидат экономических наук, лектор*

**К. САРОЯН**

*кандидат экономических наук, лектор*

**К. ДАВТЯН**

*аспирант АГЭУ*

**Ж. СТЕПАНИЯН**

*аспирант АГЭУ*

**А. ПЕТРОСЯН**

*аспирант АГЭУ*

***ОЦЕНКА ВЗАИМНЫХ СВЯЗЕЙ МЕЖДУ ЭКОНОМИЧЕСКИМ РОСТОМ И ГОСУДАРСТВЕННОЙ ДОХОДНОЙ ПОЛИТИКОЙ В РА***

DOI: 10.52174/978-9939-61-285-0

За последнее столетие известные нам исследования мировой экономики, модели оценки многогранной макроэкономической политики, применение искусственного интеллекта и 4-ая промышленная революция, а также технологические разработки создали впечатление, что человечество уже не готово противостоять следующим кризисам, максимально преодолеть переходный период. Однако кризисная ситуация, созданная пандемией COVID-19, доказала, что независимо от уровня развития экономики и показателей экономического роста, зафиксированных в последние годы, потрясения со стороны внешнего мира могут оказать серьезное, а иногда и глубокое влияние на развитие экономики.

На современном этапе развития процесс глобализации не только открывает новые возможности и перспективы для каждой страны, но и может вызвать новые опасности, риски и потрясения. Масштаб международных событий, зачастую непредсказуемый, хаотичный характер и неадекватность механиз-

мов прогнозирования и дальнейшего управления привели к тому, что экономическая стабильность и развитие стран зависят не только от внутренних факторов, но и от ситуации во внешнем мире и вызванных ею потрясений.

Экономика РА, будучи небольшой и открытой, очень чувствительна к событиям в странах-партнерах. Причем эта сверхчувствительность проявляется как в период роста, так и в период упадка. Для экономики РА характерен рост, превышающий темпы роста мировой экономики в фазе подъема глобального экономического периода, а более глубокий спад - в фазе рецессии. По-видимому, это характерная черта развивающихся стран в целом. Еще в 2004 году перед глобальным финансово-экономическим кризисом 2008–2009 гг. Каминский, Рейнхард и Вег эмпирическим исследованием показали, что развивающиеся страны обладают определенными характеристиками, которые делают их более уязвимыми к экономическим потрясениям. По мнению авторов:

1. Чистые потоки капитала носят циклический характер: в фазе экономического роста страна привлекает иностранный капитал, а в фазе спада фиксирует отток капитала. Фискальная политика носит циклический характер: расходы государственного бюджета увеличиваются в период экономического роста и снижаются в период спада.
2. Денежно-кредитная политика является циклической: процентная ставка снижается в фазе роста и увеличивается в фазе спада.
3. Приток капитала совпадает с экспансионистской макроэкономической политикой<sup>147</sup>.

Таким образом, авторы утверждают, что для развивающихся стран внешние финансовые потоки, с одной стороны, провалы макроэкономической политики, с другой стороны, – усугубляют экономические колебания. Очевидно, что в этих условиях более остро стоит вопрос уязвимости экономики.

Насколько актуален этот тезис для экономики РА? В последние 20 лет для экономики РА характерны "двойные дефициты": дефицит текущего счета платежного баланса и дефицит государственного бюджета. Несмотря на рост, почти в 3 раза превышающий рост мирового ВВП 2000-х годов, экономика РА продолжала поддерживать как дефицит текущего счета, так и дефицит государственного бюджета. Они сохранились и в посткризисный период, что привело к накоплению государственного и валового внешнего долга. Среди вышеперечисленного есть еще одно важное обстоятельство. Государственный долг РА постоянно растет, и параллельно с ним приближается срок обслуживания ранее накопленного долга, что мотивирует государство повышать уровень налогового бремени за счет увеличения базы налоговых доходов.

Исследования роли и характера доходной политики, ее влияния на эконо-

---

<sup>147</sup> Kaminsky, G. L., Reinhart, C., & Végh, C. (2004). When it Rains, it Pours: Pro-cyclical Capital Flows and Macroeconomic Policies NBER working paper 10780. <https://www.nber.org/papers/w10780>:



мику и эффективного управления политикой доходов проводились с давних времен, и эти исследования до сих пор широко распространены. Это связано с тем, что основой формирования государственных доходов, необходимых для эффективной деятельности каждого государства, является четко разработанная доходная политика, в рамках которой эффективное управление налоговым бременем, а также проблема взаимодействия между налоговым бременем и активностью экономики имеют особое значение.

Фискальная политика имеет фундаментальное значение для нормального функционирования любого государства. Без должных поступлений налогов и сборов из государственного и местных бюджетов станет невозможным эффективная деятельность государственных учреждений, а также достаточное финансирование различных отраслей экономики. С другой стороны, реальный сектор экономики, являющийся основным источником государственных доходов, чувствителен к составу, структуре, режимам сбора налогов, а также налоговым льготам, определенным законодательством.

